



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



2207

2208

2209

84

Z-66

Ch.

538

Op. Miss. Pitt & Head

Common of Kings,

Op. Miss. Pitt & Head  
-long

Op. Miss. Pitt & Head

Op. Miss. Pitt & Head

Op. Miss. Pitt & Head

Op. Miss. Pitt & Head



ԳՈՒԼԻԷԼՄՈՍ ԹԵԼ

84

ԿԱՄ

ԵՐԱՍՏՈՒՄՆ ԶՈՒՒՑՆԵՐԻՈՅ



ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻԻՆ

ՖԼՈՐԻԱՆԻ ԳԱՂՂԻԱՑԻՈՅ



ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Մ. ՃԱՆԸՄԵԱՆ



ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ

ՌՈՒԲԵՆԻ Յ. ՔԻՒՐԳՃԵԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ, ՖԻՆՃԱՆՃԸՆԱՐ

— 1862 —

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ներկայ դարուս մեջ պատմական վիպասանութիւնները մեծ ընդունելութիւն մը գտած են բոլոր Ներուպիոյ մեջ. վասն զի եթէ ամեն աստիճանի մարդոց յարմար գրութիւն մը փնտռուի, անշուշտ այս տեսակ գրքերը պիտի ըլլան:

Իբօք ալ՝ պատմական վիպասանութիւն մը կըրնայ օգտակար ըլլայ, այն ուսումնասէր երիտասարդին որ գրագիտական է ուսումնական գրքերու ընթերցմանէն հոգնած, կուզէ քիչ մ'ալ առանց միտքը աշխատեցընելու ժամանակ անցընել: Որովհետեւ անով շատ մը պատմական անցքեր, անըզգայաբար կը տպաւորուին մտքին մեջ:

Այս տեսակ գիրք մը օգտակար է նաեւ այն ամեն անձանց՝ որ իրենց պարապոյ ատենը կարդալու կը զբաղին. ինչո՞ւ որ անոր մեջ կը գտնեն, առաքինւոյ մը, դիւցազնի մը՝ ստոյգ նկարագրութիւնը, որ ընտիր ճաշակ ունեցողին շատ աւելի սփոփեցուցիչ է, քան զայն մտացածին պատ-

մութիւնները, որ երբեմն ընթերցողին գաղափարը  
 չափազանց վառելով, փոխանակ օգտակար ըլլա-  
 լու, կրնան բարոյականի եղծման մեծապէս առիթ  
 ըլլալ:


Բարոյականը, որ առաքինութեան մայրն է. եւ  
 ժողովրդեան մը երջանկութեանը՝ կարեւորագոյն  
 պայմանը:

Ահա, ասոնց նման մտածութիւններ էին, որ քա-  
 շալերեցին զմեզ, մեր այս բարգմանութիւնը՝ ՚ի լոյս  
 ընծալելու. որ քեպետեւ փոքր է նեւով, բայց ա-  
 խորժելի գրչէ մը էլած, ու գիտնալու արժանի անց-  
 քի մը պատմութիւնը կը պարունակէ:

Ուստի կը վերջացընէմք խօսքերնիս, մաղթելով՝  
 որ Ազգիս դեռափրիք պարտեզը մշակողները, այս  
 տեսակ՝ առելի կատարեալ գործերու ճաշակը տային  
 փափարողաց:

Կ. Պօլիս, 50 Մարտ 1862.

ԹԱՐԳՄԱՆԻԶ





## ԳՈՒԼԻԷԼՄՈՍ ԹԷԼ

ԿԱՄ

ԱԶԱՏՈՒՄՆ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ

---

ԳԻՐԻ Ե.

---

Բարեկամք ազատութեան, վեհ սրտեր,  
դիւրազգաց հոգիներ, դուք որ ազատութեան  
համար անձերնիդ կը զոհէք, ու միայն ձեր  
հայրենակիցներուն համար կուղէք ապրիլ, ուն  
կընդիր եղևք իմ խօսքերուս: Ասեցէք թէ ինչ  
պէս միակ անձ մը վայրենի երկրի մը մէջ ծը  
նած, ու բռնաւորի մը խարազանին տակ ճըն  
շուած ժողովրդեան մը մէջ տեղը իր քաջութեամբ  
բը յաջողեցաւ այս վհատած ժողովուրդը յարու  
ցանելու, անոր նոր կենդանութիւն մը տալու,  
վերջապէս՝ իւր իրաւանց զօրութիւնը ճանչցնելու:



լու : Սուրբ ու անսյայլակ իրաւունքներ , զորոնք բնութիւնը յայտնած բայց տգիտութեան ու բռնութեան ձեռքով խիստ երկար ատեն գաղտնիք մը դարձած էին : Այս անձը որդի բընութեան անոր օրէնքները քարոզեց , զինուեցաւ զանոնք պաշտպանելու համար , երկաթներու ծանրութեանը տակ ննջող հայրենակիցքը արթընցուց , ու արօրին խովր\* ձեռքերնին տուաւ որն որ իրմով դիւցազանց սրոյ փոխուեցաւ . բռնաւորաց գունդերը ցլուեց , ու բարբարոս դարի մը և դրեթէ անբնակ ժայռերու մէջ կըրցաւ երկրիս մխիթարիչը եզող երկնային երկու ձիրքերուն բնակարան մը հիմնարկել , որոնք են իրաւունքն ու առաքինութիւնը :

Ամենևին օգնութեան չեմ կոչեր քեզ այսօր , ո՛վ չնաշխարհիկ ոգիդ Քերթողական , մանկութենէս 'ի վեր քեզի պաշտօն մատուցի ես , և քու փայլուն ստութիւններդ՝ ինձի երջանկութիւն համարեցայ : Պահէ քու զմայլեցուցիչ վրձիններդ՝ այն դիւցազուններուն , որոնց պատկերները զարդուց կարօտութիւն ունին : Քու պաճու ճանքներդ պիտի տգեղցնեն իմ գովես-

\* Խովր . սափան տէմիրի :

տիցս նպատակը , քու պատկեներդ անոր անաչառ  
 դէմքին ամենեւին չեն պատշաճիր • Իւր կայտառ  
 բայց սոսկալի նայուածքը թէ որ ձեռքդ իյնար ,  
 չափէն աւելի պիտի անուշցնէիր : Աստուծոյ  
 անոր շինական փառքերուն դպչելու , թող իրեն  
 իւր թաւարծի\* զգեստը , թող իր սինի\*\* փայ-  
 տէ աղեղը , թող վերջապէս ինքնիրեն ժայռե-  
 րուն մէջ , կապուտակ հեղեղներուն եզերքը  
 թափառի : Յաւելով հետեւէ անոր հեռուէն ,  
 ու երկիւղալից ձեռքով՝ սփռէ իւր ճամբուն  
 վրայ , վայրի թփոց ծաղկները :

Նախիչներուն քաջութեամբը խիստ անուա-  
 նի եղող հին Հելլետիոյ մէջ տեղը՝ երեք նա-  
 հանգներ , որոց անձուկ սահմանը անմատոյց  
 ժայռերով շրջապատած է • անբիծ պահեր էին  
 այն նախնական բարուց անարատութիւնը , որ  
 նորածին մարդկութեան երկնատուր պարզե-  
 մբն էր ընդդէմ մոլութեանց : Աշխատանքն , սա-  
 կաւապետութիւնը , անկեղծութիւնն ամօթխա-  
 ծութիւնը ու բոլոր առաքինութիւնները՝ աշ-  
 խարհակալներէն և երկրիս թագաւորներէն հա-

\* Թաւարծի • դրօշ ապա :

\*\* Սինի • իւզէզէ :

լածուելով, եկան այս լեռներուն մէջ պահուել  
 տելով: Ասոնք խիստ շատ ատեն անձանօթ մնա-  
 ցին հոն, բայց ամենեւին չի ցաւեցան իրենց անձ-  
 կալի առանձնակեցութեանը վրայ: Աւերջապէս  
 եկաւ ազատութիւնն ալ այս ժայռերուն գլուխը  
 նստելու. ու այն բարեպատեհ օրէն 'ի վեր ճըշ-  
 մարիտ իմաստունն ու ճշմարիտ դիւցապներ Մւ-  
 օի, Շուից և Ունտերվօլտ անուանները մեծ  
 յարգանօք բերանը կառնէ:

Այս երեք գաւառներուն բնակիչները դաշ-  
 տային աշխատանքներով զբաղած, շատ մը դա-  
 րեր կրցին ազատ մնալ, բարբարոսաց այն բազ-  
 մաթիւ գլուխներուն մոլեղնութեամբն յառաջ  
 եկած ոճիրներէն, փառասիրութենէն և թըշ-  
 ուառութիւններէն. որոնք Հռովմայեցւոց տէ-  
 րութեան աւերակներուն վրայ՝ շատ մը Տէ-  
 րութիւններ հաստատեցին, մարդկային իրա-  
 ւունքը յափշտակեցին ու սոսկալի օրէնքով մը  
 կառավարեցին. որն որ տգիտութեամբ հաւաք-  
 եալ ու հիմը բռնակալութիւն և սնապաշտու-  
 թիւն էր: Մւուրիին երկրագործներն ու խաշն-  
 արածները այս աշխարհակործաններէն մոռ-  
 ցուելով և կամ անարդուելով՝ նոր կեսարներուն  
 թեթեւ կերպով մը կը հպատակէին. բայց գոնէ

աղատութեան մխիթարիչ անունը վրանին էր :  
 Ասոնք իրենց հին օրէնքները , սովորութիւններն  
 ու անաչառ կենցաղը անփոփոխ պահեցին :  
 Հանդարտ ու անվտոյժ խրճիթներնուն մէջ  
 բացարձակ իշխան էին . ուր ընտանեաց հայրերը՝  
 սիրով ու յարգանօք շրջապատուած կը ծերանային  
 խաղաղ կեանք մը անցընելով : Օտարներնին ,  
 չարութեանց անձանօթ , Աստուծոյ  
 երկնչելով , հօրերնուն պատկառելով , իրենց կեանք  
 տուող բարեգործ անձին նմանելէ՝ իզատ՝ յոյս  
 փափաք ու երջանկութիւն չէին ճանաչէր . աւոր  
 հնազանդիչն ու իւր օրինակացը հետեւիլը  
 կեանքերնուն շրջանը կը կազմէր : Այս պարզ  
 ու առաքինի ժողովուրդը , աշխարհքէն գրեթէ  
 անձանօթ բնութեան հետ առանձնակի կը  
 կենար . ինքն իր աղքատութենէն պաշտպան  
 ուելով իւր բարութիւնը կը շարունակէր , թէ  
 և ամենեւին պատժուած այլ չէր :

Իրենց մայրաքաղաքին Աթորֆի մօտ լիճ  
 մը կայ . ուսկից առնուած է նաև քաղաքին անունը .  
 և այս լճին քով մեծ լեռ մը կը բարձրանայ ,  
 որուն վրայէն՝ երկայն ու տաժանելի  
 ուղեւորութեամբ՝ հողնած ճանապարհորդը ,  
 շատ մը հովիտներ կը նշմարէ , անհաւասարա-

բար բլրակներով ու ժայռերով պատած :  
 Առուակներն ու արագընթաց հեղեղները՝ երբեմն կարկաջառահ իյնալով և ապառաժներուէն չորս կողմը սստոստելով, երբեմն ալ մամռասպատ ածուի մը մէջէն՝ օձի պէս սողալով, կիջնան կամ կը գահավիժին ու կը հասնին ձորերուն մէջ. կը միանան, ջուրերնին իրար կը խառնեն, անթիւ խաշինքներով ծածկուած ընդարձակ մարդագետիկներ կուողեն ու կուգան յատակ լիճերը կը նետուին, ուր ցուլերը կերթան լուացուելու :

Այս լեռան կատարը, աղքատիկ խրճիթ մը կար. փոքրիկ դաշտով մը, այգեստանով մը ու բուրաստանով մը շրջապատեալ. Մէկ երկրագործ մը, մէկ դիւցազուն մը, որ դեռ ինքզինքէն անձանօթ էր, և սրտին մէջ հայրենեաց սերէն ՚ի զատ՝ ուրիշ զգացմունք չէր ճանչնար, Գուլիէլմոս Թէլ՝ հաղիւ քսան տարեկան էր այս ժառանգութիւնը հօրմէն ընդունած ատենը. «Արդեակ իմ, ըսաւ. ծերը մեռած ատենը, ապրեցայ աշխատելով : Աթառն ձմեռ՝ սահեհեցան գացին այս անվրդով ապաստանարանիս մէջ, ու երբէք մոլութիւնը չի համարձակեցաւ դրանս սեամէն ներս անցնելու. և բնաւ գիշեր

մը խղճմտանքիս խայթոցը զիս չի խռովեցուց :  
 Աշխատէ՛ ինձի պէս , որդեակ . ինձի պէս՝ իմաստուն  
 ամուսին մը ընտրէ , որուն սէրը , վստահութիւնը  
 քաղցր ու համբերող բարեկամութիւնը , անմեղ հաճութիւններդ կրկնապատկէ  
 ու աշխատանացդ կէսը , առնէ վրայէդ : Ամուսնացիր ,  
 ո՛վ սիրելի Պուլիէլմոս , առանց ամուսնութեան՝  
 կատարեալ առաքինութիւն չըլար : Մնաս բարով ,  
 չափաւորէ քու վիշտդ : Մահը դիւրին է  
 բարեգործ անձի մը համար : Աս երբ կը զըկէի  
 քեզ՝ որ եղբայրներնուս կարօտութիւն ունեցած  
 հացն ու պտուղները տանիս , ըսէ՛ , միթէ՞ չէիր  
 հրճուէր , այս քեզի յանձնած բարեգործերուս  
 հաշիւը տալու համար եկած ատենդ : Աղէ՛կ  
 ուրեմն սիրելիս , ահա՛ ես ալ կերթամ՝  
 որ հօրս , ինձի մինչև հիմարներ տուած բարեգործութեանցը  
 հաշիւը տամ : Որդեակ իմ . ինչպէս որ ես  
 քեզ կրնդ ունէի , անանկ ալ ինքը՝ պիտի  
 ընդունի զիս : Բեզի պիտի սպասեմ անոր  
 քովը : Օրհնեալ ըլլաս հօն , ուր որ քեզ կը  
 թողում . երջանիկ ըլլաս , քանի որ ազատ ես .  
 բայց , թէ որ երբէք բռնաւոր մը , այս մեր հին  
 աւուրց ազատութեանը՝ ամենափոքր մնաս մը  
 բերելու ձեռք զարնէ՛ Պուլիէլմոս մեռիր հայ

րենեացդ համար, ու պիտի տեսնես այն ժամա-  
նակը, թէ քաղցր է մահը ։

Այս խօսքերս թէլին զգայուն սրտին վրայ  
անեղծանելի կերպով տալաւ որու եցան։ Այս պատ-  
ուական ծերունւոյն համար ունեցած վելջին  
պարտքերը կատարելէն ու անոր գերեզմանը  
տանը մօտ եղևնոյ մը տակ փորելէն ետքը,  
երգումն ըրաւ ինքնիրեն, ու երբէք երգմա-  
զանց չեղաւ, որ ամեն երեկոյ՝ այն սուրբ գերեզ-  
մանին քով երթայ առանձին, ու միտքը բերէ  
իւր ամեն մէկ գործը, նոյն օրուան ամեն մէկ  
մտածմունքները, և հարցնէ իւր հօրը որ միթէ՞  
գոհ էր տղէն ։

Օհ, որչափ առաքինութեանց ենթակայ ե-  
ղաւ այս բարեպաշտ սովորութեամբը, որչափ կը-  
րակոտ սիրտն ու կիրքերը զսպելու ։ Արժեցուց  
զինքը հայրական ստուերին գիմացը ամենալու-  
երկիւղը ։ Թէլ, անչափ տէր էր իւր անձին,  
որ յօգուտ խնաստութեան կը դարձնէր՝ ինչուան  
կրից բռնութիւնն ալ, հօրը ստացուածքները  
ժառանգելով՝ աւելի մեծ աշխատանքներու տու-  
աւ ինքզինքը, ու երկիրս ալ՝ անոր փոխարէն,  
հունձքը կրկնապատիկ նուիրեց, որուն, աղքատ-  
ները մասնակից կըլլային միշտ ։ Առաւօտները

արշալուսոյն հետ ելելով, երկու ցուլերուն  
 դժուարաւ քաշած արօրը՝ կորովի բազկաւը կը  
 վերցնէր. փայլուն երկաթը՝ գայլախազներով  
 լի հողին մէջ կը մզէր, դանդաղ կենդանիները  
 ձեռքի խայթոցովը կը փութացնէր, և երեկոյին՝  
 քրտնահոս ճակատը, արօր չունեցող դժբախտներ  
 ըր խղճալով կը հանդէսցնէր. V, յս մտածմունքը՝  
 ցուլերը քշած ատենը կրնկերանար իրեն ու քնա-  
 ցած տեղն անգամ չէր թողուր զինքը. Թէլ,  
 հետևեալ օրը հաւախօսին ելած, կերթար կա-  
 րօտեալ բարեկամներուն արտերը կարօրադէր.  
 տէրու ըտոցը ներկայ չեղած ատենը կը ցանէր,  
 այն մշակած տեղու անքը. ու կը պահուրտէր ի-  
 րենցմէ՝ չէ թէ զանոնք շնորհակալութիւննին  
 նուիրելու հաճոյքէն զրկելու մտօք, այլ իր հա-  
 ւասարներուն բարեգործութիւն ընելէն ամչնա-  
 լուն. V, հա, ասոնք էին իւր խնամքն ու զբօսան-  
 քը. չունէր ուրիշ զբաղմունք և հանգիստ, բաց  
 ՚ի աշխատանքէն ու բարեգործութենէն.

Նութիւնը Ղուլիէլմոսին այսպիսի ընտիր  
 ու մաքուր սիրտ մը պարզեւած ատենը, մար-  
 մնոյ ոյժն ու ճարտարութիւնն ալ նստել չէր  
 խնայած. իւր ամենէն բարձրահասակ ընկերնե-  
 րուն գլուխը՝ հազիւ ուսերուն կը հասնէր.



մագլցի կելէր սեպաձև ժայռերուն վրայ •  
 ընդարձակ հեղեղներուն մէջէն գիմացէ գիմաց  
 կանցնէր • սառուցեալ գագաթներուն վրայ կը  
 ցատկէր, ու սրարշաւ այծեամները կը բռնէր  
 վազած ատեննին • Տապարով հազիւ կտրուած  
 կաղամաղը բազուկներովը կը կտորէր, ու կտոր  
 կտոր ընելով՝ զանիկայ բոլոր ոստերովը մէկտեղ  
 առած կը վերցնէր կը տանէր հուժկու օւսերուն  
 վրայ • Տօնի օրերը, երիտասարդ աղեղնաձիգներ  
 րուն հանդիսաւորած խաղերուն մէջ, նեւ նեւ  
 տելու մասին՝ նման չունեցող Թէլը թոյլ կենա  
 լու կը գսպէր ինքզինքը, որպէս զի մրցանակներ  
 րուն մէջ հակաճառելու առիթ մը ըլլայ • Արի  
 տասարդ հասակին չի խնայելով՝ դատելու համար  
 նստած ծերերուն կարգը կանցընէին զինքն ալ •  
 Հոն, այս պատուէն սարսափած, անշարժ ու  
 հազիւ շունչ առնելով՝ արագընթաց նետերուն  
 ուշադիր կըլլար • հարուածը նշանին մօտեցնող  
 նետաձիգը բոլոր սրտանց ծափահարելով կը  
 քաջալերէր • Լ բազուկները միշտ վեր բարձրա  
 ցընելով՝ կարծես թէ, իրեն արժանի նախանձորդ  
 մը գրկելու կը սպասէր • Ռայց երբ ալ կապարճք  
 ները պարպուէին, առանց աղաւնին զարնուե  
 լու • երբ թռչունը՝ անօգուտ տեղը ինքզինքը

տանջելէն հողնած, կայսին գլուխը ինջնար ու սկսէր հանդարտ աչօք անկարող թշնամիները դիտել. Վուլիէլմոս կելէր միս մինակ, գետնէն երեք նետ կը ժողուէր, ու մեծ աղեղը առնելով՝ առաջին հարուածը կայսին կուտար որ աղաւնին թռչի վերստին. երկրորդովը՝ անոր տաժանելի ընթացքը արգիլող թելը կը կտրէր. և երրորդը, ամպին մէջ ետեւէն հասցնելով, խեղճին դողդոջուն մարմինը ապշած դատաւորներուն առջեւը կիջեցնէր:

Առանց հպարտանալու իւր այսչափ մեծա- մեծ ձրիցը վրայ, ամենէն խոնարհ բարի գործ- քը շքեղ յաջողակութիւններէն նախամեծար կը համարէր: Թէլ յանդիմանեց իւր հօրը հը- րամաններուն հնազանդելու մասին ըրած դան- դաղութիւնը: Ուղեց ամուսնանալ և երիտա- սարգուհին Ատմէ գրաւեց անոր սիրտը: Ատ- մէ, Վուլի մէջ գտնուած օրիորդաց՝ ամենէն ամօթխածն և միանգամայն ամենէն գեղեցիկն էր: Ոչ այն գեփիւռը՝ որ արշալուսէն առաջ փոքրիկ բուսոց տերեւներուն վրայ կը խաղայ, և ոչ այն աղբերակը՝ որ ապառաժէն սողոսկե- լով փայլուն կաթիլներուն մէջ կը ցոլացնէ՝ արե- դական առաջին շառաւիղները, չէին կրնար

այս օրհորդին սրտին մաքրութեանը հաւասարիլ, որ կարծես թէ, հեզութեան, քաղցրութեան ու արդարութեան սուրբ օթեւան մըն էր: Առաքինութիւն էր բոլոր իր կեանքը, թէ և անոր անունն անգամ չէր ճանչնար: Չէր կրնար համոզուիլ որ մարդ կարենայ դադրիլ իմաստուն ըլլալէ, քանի որ կենաց օգը կը շնչէ:

Արբ և աղքատիկ, իրենց կարօտ ընտանեացը միակ ազգական եզող՝ ծերունւոյ մը քովը սընած էր, մանկութենէն ՚ի վեր, ու այն առաքինի անձին հօտը կը խնամէր: Առաւօտները, արշալոյսը դեռ ախուր եղևիններուն գագաթը չի լուսաւորած, Առտէ ոչխարներովը լեռներուն վրայ էր ու հոն իւր բարերարին զգեստը կը մանէր: Արեկոյին, արեգակը մարը մանելուն ետ կը դառնար, տնակը կը կարգադրէր, երեկոյեան և վաղորդեան ճաշը կը պատրաստէր, ու կը զգուշանար այն ամեն բանը՝ որ իւր մեկուսի եղած ատենը կրնար ծերունւոյն վախաքանացը ենթակայ ըլլալ: Ասոնք կատարելէն վերջը նոյն օրը երախտագիտութեան քաղցր պարտքը ըստ արժանւոյն վճարելուն, և հետևեալ օրն ալ նոյնպէս առաքինութեամբ անցընելուն վրայ վստահ ըլլալով, երջանկաբար քնոյ կուտար ինքզինքը:

Թե՛լ, ճանչցաւ ու սիրեց զինքը՝ Եւ ա-  
մենեւին 'ի գործ չի դրաւ այն մտադիր անա-  
ճութիւնները, այն հաճոյ ըլլալու կերպերը ու  
իր սրտին բոլորովին անճանօթ եղող այն արուես-  
տը՝ որ շատ անգամ սէրը ամենանուրբ մտադ-  
րութեանց հետ խառնելով կաղաւաղէ զանի-  
կայ, կը փութացնէ և կամ կուշացնէ գորովա-  
լից կիրքերու խոստովանութիւնը։ Ա՛նճանօթ էր  
այս արուեստին, ու մտքէն անգամ չէր անցած  
որ ինքզինքը հաճոյ ընելու ձիրքը՝ սիրոյ բնական  
ազդումէն տարբեր բան մը կրնար ըլլալ, Թե՛լ  
Ատմէն աւելի յաճախ տեսնելու առիթներ չի  
փնտռեց ամենեւին, անոր ետեւէն դէպ 'ի լեռներ-  
ըր չի գնաց, ու երեկոյին անիկայ հօտը ետ դար-  
ձուցած ատենը ճամբուն վրայ չսպասեց։ Գու-  
լիէլմոս ընդհակառակն սիրուհւոյն մեկուսի ե-  
ղած ատենը, կերթար անոր ծերունի պաշտպա-  
նը տեսնելու։ Հոն, անկեղծ և սրտաբուղի  
խօսակցութեամբք Գուլիէլմոս ունկնդիր կըլ-  
լար ծերունւոյն, որ կը հրճուէր Ատմէին վրա  
խօսած և անոր ամենափոքր գործքերը մէջ բե-  
րած ատենը։ ու այս ամենասիրելի որբ աղջկա-  
նը ամեն մէկ խօսքը կրկնելով՝ իւր համբերո-  
ղութիւնը, քաղցրութիւնը, ու անհատնում

քարու թիւնները արտասու ալից աչօք կը նկարագրէր . սոյն առաքինու թիւններն էին ահա՛ , որոնցմով Նտմէ ծերունւոյն աչքին օր աւուր աւելի սիրելի կը լլար . Ա՛յս գովեստները՝ որ մինչև թօնէին սրտին խորը կը հնչէին , սիրուհին տեսնալէն աւելի կը բորբոքեցրնէր իւր սէրը . Ա՛ս պատմութեանց միջոցին , վրայ կուգար օրիորդը . ու թօնէլ , քիչ մը առաջ լսածներն , ահոր ճակտին վրայ , նայուածքէն ու ամօթ խածկերպէն յայտնի կը տեսնէր . Հաղիւ կը համարձակէր , գողալով քանի մը խօսք ուղղել իրեն . շուտ մը կը մեկնէր անկէց խոնարհ աչօք . յարգանօք կը բարևէր աղջիկը ու յուշիկ յուշիկ իւր մենաւոր բնակարանը կը քաշուէր , գիտնալով որ առանձին լաւ ևս կրնար զբաղել իրմով՝ քան թէ անոր ներկայութիւնը .

Ա՛յ երջապէս՝ վեց ամիս անցնելէն ետքը , Պուլիէլմոս հաստատ ըլլալով՝ որ իւր սէրն ալ՝ առաքինութիւն մըն էր , միտքը դրաւ որ զանկէկայ , իւր սրտին մէջ ճնցնողին յայտնէ . Ա՛նոր հետ առանձին տեղ մը եղած ատենը չպիտի կարենար համարձակիլ . բայց բոլոր ժողովութեան մը առջևը խոստովանիլը աւելի դիւրին գալով իրեն , տօնի օր մը տաճարէն ելած ատեննին , երիտա

սարդ Ատմէին սպասեց : Ատմէ՛, ըսաւ անոր .  
 կը սիրեմ ու միանգամայն կը յարգեմ զքեզ . ես  
 բարեսիրտ էի, դուն զգայուն ըլիր զիս, եթէ կը  
 յուսաս որ ինձի հետ կրնաս երջանիկ ըլլալ,  
 ընդունէ սիրտս ու ձեռքս . եկուր բնակէ տանս  
 մէջ . հօրս գերեզմանին վրայ հրահանգէ զիս այն  
 առաքինութեանց մէջ՝ որ ինքը պիտի սորվեցը-  
 նէր ինձի : Ատմէ խոնարհեցուց աչուրները ու  
 կարմրեցաւ մէկէն : Սակայն , քիչ մը ետքը սիրտ  
 առնելով՝ տեսաւ որ մտքէն անցածը կրնար և մի-  
 անգամայն պէտք էր ըսել . այսպէս պատասխա-  
 նեց . Շնորհակալ եմ զիս ընտրելուդ . և մինչև  
 ջայսօր երջանկութեանս վրայ ունեցած գոհու-  
 նակութիւնս , թող կրկնապատկի՛ այս ամենա-  
 քաղցր իրաւամբ որ կըսեմ թէ ես ալ զքեզ պի-  
 տի ընտրելի : Այս խօսքերով ձեռքը տուաւ ա-  
 նոր , զորն որ երխտասարդն թէլ՝ սխմեց իրենին  
 մէջ . քիչ մը ատեն իրարու նայեցան ու առանց  
 բառ մը արտասանելու բոլոր երդմունքը կա-  
 տարեցաւ :

Այս ամուսնութեամբ՝ բարեբաստութիւնը  
 թփելին խրճիթը իջաւ . Աշխատանքը աւելի հա-  
 ճոյ կուգար իրեն , վասն զի Ատմէ կը քաղէր  
 անոր պտուղը . եթէ բարիք մը գործէր ա-

ւելի քաղցր կերևար աչքին, վասն զի Ատմէ  
կը տեղեկանար ըրածին: Միշտ մէկտեղ կան-  
ցընէին, և եթէ բաժնուէին ալ՝ շուտ մը, վե-  
րբատին միանալու նպատակաւ էր: Իրենց խա-  
ղաղասէր և մտադիր բնաւորութեամբը՝ մշտա-  
ճարաւ սիրոյ փոանգաւոր արբեցութիւնը կը  
չափաւորէին: Կը զգուշանային անոր չափազանց  
հրապոյրքներէն՝ բարեկամութեան ու հաւա-  
տարմութեան անվաղանցիկ հաճոյքներովը: որք  
են փոխադարձ ակնածութիւն, մէկզմէկու բա-  
ւական արժանի չըլլալու գթալիր և ամօթխած  
երկիւղն, ու ամեն մէկ զգացմունքնին իրար  
խառնելով՝ սրտերնին աւելի առաքինի ընելու  
համոզումը:

Շատ չանցաւ տղայ մը ունեցան, որն որ  
աւելի ամրացուց իրենց ամուսնութեան կապը,  
և այս ամենասիրելի հայր ու մայր անունները՝  
մինչև նոյն ատենը անձանօթ եղող բերկրու-  
թեանց աղբիւր մը եղաւ իրենց: Արիտասարդ  
ու չքնաղ Դէմին նախ Ատմէին յանձնուեցաւ,  
անոր մանկութեան հոգերը միայն ինքը վրան  
առնել ու զելուն համար: Բայց տղան վեցերորդ  
տարւոյն կոխածին պէս՝ ալ Գուլիէլմոս չիթո-  
ղուց զանիկայ: Իրեն հեա դաշտերն ու արօտ-

ները կը տանէր , կը ցուցնէր անոր փշալից երկիրը , լեռները , դաշտերն ու անտառները , և աչքը երկինք դարձնելով յարգանօք արտասանել կուտար անոր՝ Աստուծոյ վսեմ անունը : Արսէր թէ այն Աստուածը որ մեր ամեն մէկ մտածմանցը տեղեակ ու դատաւոր է , մեզմէ գոհ ըլլալու համար բարի ըլլալէ ՚ի զատ բան մը չի պահանջէր : Ամեն առաւօտ ու երեկոյ կը կրկնէր այս պատուէրը , իւր օրինակաւը կը մեկնէր անոր՝ բարութեան ինչ ըլլալը , և ամենևին բանի տեղ չի դնելով՝ երկչոտ տղուն տկարութիւն ու տարիքը , ձիւներուն մէջ կը տանէր զինքը իրեն հետ , սառնամանեաց վրայէն մագլցի ելլել կուտար , կը վարժեցընէր անոր մատղաշ ձեռուրները՝ ցուլերուն լուծը վերցնելու , այն ահարկու կենդանիները աներկիւղ փայփայելու , և զանոնք արօրին կապել ու վարելու :

Այս խոհական ու իմաստուն տղան՝ հօրը հետ խօսակցած կամ աշխատած ատենը հեզ և հլու որդի մը կը դառնար , երեկոյին տուն մը տածին պէս կերթար մօրը , զիրկը նետուելու , շեղաբար , մտադրութեամբ և փայփայանօք Ատմէին աչքերուն մէջ կը բնտուէր անոր ամենափոքր փափաքն անգամ : Ար հետազօտէր ու



սրտին խորը կը թափանցէր • Այսով առանց իւր  
միտքը յայտնելու , Ժէմի կատարելագէտ կը տե-  
ղեկանար անոր • Ո՛հ , այս ամենասիրուն զաւա-  
կը՝ որչափ երջանիկ կընէր իւր մայրը : Քանի  
քանի անգամ , Թէլին մեկուսի եղած ատենը՝  
որուն անաչառ դէմքը՝ պատշաճ չափազանցու-  
թիւնն անգամ կը մերժէր , Այսով , երիտասարդ  
ու սիրուն Ժէմին՝ կուրծքին վրայ սխմելով ,  
մայրենի սիրոյ արբեցութեամբն ու այլայլու-  
թեամբը կը կրկնէր հետեւեալ խօսքերը • «Որդ-  
եակ իմ՝ իմ միակ որդեակս , կեանքս կեանքէդ  
ու հոգիս հոգիէդ կապուած է • Աղէկ գիտ-  
նաս , մի տարակուսիր անոր վրայ ու հօրդ աչ-  
քին ծածկէ այդ զգացմունքը » •

Թէլ այսչափ բարեաց հետ միացուցած էր  
այն բարիքը որ ամենէն պիտանին է թէ երջան-  
կուէ և թէ դժբախտութեան մէջ • Թէլ բա-  
րեկամ մը ունէր • Այս բարեկամը՝ որ իրեն գը-  
րեթէ հասակակից էր , կը բնակէր Եւզին Ուն-  
տէրփօլտէն բաժնող ժայռերուն մէջ տեղը • և  
մանկութենէ ՚ի վեր , իրարու կապուեր էին ա-  
ւելի սրտի քան թէ բարուց նմանութեամբ •  
Մեկքթալ որ Թէլին պէս անկեղծ , քաջ ու  
վեհանձն էր , կը սիրէր նաև անոր չափ առա-

քինութիւնը, ազատութիւնն ու հայրենիքը .  
բայց իւր սէրը անորինին չափ խոհական ու  
բորբոքեալ չըլլալով՝ կարող էր մեծամեծ գոր-  
ծերու, առանց երկայն տառապանաց համբե-  
րող ըլլալու : Մեկքթալ, աշխոյժ, առոյգ, և  
եռանդուն ըլլալով՝ իւր զգացմունքներէն ոչ  
մէկը կրնար ծածկել . կը յայտնէր ամեն բան  
խօսքերուն մէջ, ու պզտիկ առիթ մը բաւա-  
կան էր՝ զինքը տուչորող բոցավառ կիրքը դուրս  
թափելու : Թէլ ընդհակառակն կը սանձէր,  
կը սնուցանէր և կաւելցնէր զանիկայ . չէր թո-  
ղուր որ բերանը կամ դէմքին գծագրութիւնը  
իւր խորհուրդները արտայայտէին : Արկուքն ալ  
կը զգուէին անիրաւութենէն . բայց մէկը պատ-  
րաստ էր միշտ անոր դէմ որոտալու, և զանիկայ  
պատժելու համար կեանքը տալու . իսկ միւսը  
լռիկ մնջիկ կը հետեւէր, զանիկայ դարմանելու  
համար : Մէկը բուն հեղեղի նման՝ որ ամեն  
մէկ առջևը ելած առարկայն տակն ու վրայ կը-  
նէ, իւր բորբոքեալ ըղձիցը մէջ բանէ մը զգու-  
շանալ չէր զիտէր . միւսը իր խորին սրամտու-  
թեանը վրայ իշխելով՝ ոխն ու վրէժը համբե-  
րութեամբ կը դիզէր սպիրատներուն դէմ,  
նման լեռներուն, գագաթը մէկ քանի ձմռուան

մէջ կուտեալ ձիւներուն, զորոնք արեգական  
ճառագայթները տեղերնուն բաժնելով միահա-  
մուռ կը գլորին կիջնան :

Մելքեթալ ու Վուլիէլմոս խիստ շատ ան-  
գամ ընտանիքնին միացնելու և տոնի օրերը ՚ի  
միասին անցընելու համար կերթեկեկէին զիրենք  
իրարմէ բաժնող, կարճ միջոցը : Արկու բարե-  
կամներէն այս տենջանօք սպասուած օրերը հա-  
ւասարապէս կը բաժնուէր իրենց մէջ : Արբե-  
մըն բարեսիրտ Ատմէն փեսին ու որդւոյն ընկե-  
րակցութեամբը ճամբայ կելէր : Մելքեթալին  
համար պտուղներ, կաթ, և իրենց այգւոյն  
կամ պարտիզին երախայրիքը հետը տանելով :  
Արբեմն ալ Մելքեթալ կուգար թէր իւր ծե-  
րունի հօրը, և ձեռքը աղջկանը տալով : որն որ  
զինքը մինչև այն ատենը տրամեցընող կորուս-  
եալ ամուսինէն՝ միակ գրաւական էր մնացեր :  
Թէլ դուռը կայնած կը սպասէր իրենց : Աթոռ  
մը պատրաստ դրուած էր որպէս զի ծերը նստե-  
ցընեն : բարին Ատմէ լի գաւաթ մը զինի ունէր  
ձեռքը անոր համար, և Ժէմի սիրուն Քլե-  
րին նուիրելու դիտաւորութեամբ ծաղկէ փունջ  
մը յօրինած՝ անհանգարտ աչօք ճամբանուն կը  
նայէր :

Ո՛հ, որչափ ազդու էին ասոնց վայելած  
 հաճոյքները • ի՛նչպէս մեծ էր՝ շինական սե-  
 ղանին բոլորովքը զգացած բերկրութիւննին,  
 որուն վրայ կը տարածուէր իրենց սակաւապետ  
 կերակուրները • Նաշը լմնցածին պէս ծերունին  
 Մելքիթալ, առանց բանի մը տեղ դնելու՝ իր  
 ութսնամեայ հասակին ծանրութիւնը, միմի-  
 այն ձեռքի դաւազանին վրայ կութնելով՝ լեռան  
 ամենէն բարձր գագաթը կելէր, կը նստէր բա-  
 րեկամներուն ու որդւոցը մէջ տեղը, կը բանար  
 վսեմ ճակատը, որպէս զի գլխուն սպիտակ մա-  
 ղերը՝ զուրկ չի մնան արևուն քաղցր ճառագայթ-  
 ներէն • ու երբ իւր աչքերը՝ բնութեան տեսա-  
 րանէն գոհանալով պահ մը յագէին, այն տեսա-  
 րանը որ կը զմայլեցընէր ու կը յափշտակէր զին-  
 քը՝ իբր թէ դեռ իւր աշխոյժ հասակին ամե-  
 նագեղեցիկ օրերուն մէջը ըլլար, կը սկսէր իւր ա-  
 ռաջին տարիներուն, քաշած վիշտերուն, ունե-  
 ցած հաճոյիցը կեանքերնուս անբաժանելի եղող  
 տառապանացը, և մարդուս՝ իր խղճմտանքովն ու  
 առաքինութեամբը գտած մխիթարանքներուն  
 վրայ խօսիլ • Թէ՛ւ, Մելքիթալ ու Ատմէ ուն-  
 կընդիր կըլլային իրեն ուշադրութեամբ և յար-  
 գանօք • Քլէր ու Եմի ծերունւոյն ճնկուրնե-

րուն մէջ տեղը նստած՝ երբեմն երբեմն իրարու  
կրնայեին և մէկըմէկու ձեռք կը սխմէին . Պու-  
լիէլմոսին մէկ նայուածքը աշխոյժ կարմրութիւն  
մը կուտար դէմքերնուն . և Տերունին նշմարե-  
լով զանիկայ՝ ներումն կը խնդրէր տղոցը կողմա-  
նէ .

Քլէր ու Ճէմի կը մեծնային օրէ օր , և  
իրենց անմեղ սէրը կաճէր տարիքնուն հետ . Ար-  
դէն այն միատեղ անցընելք երջանիկ օրերնուն  
միջոցը ուշ կերևնար իրենց . Ճէմի , եթէ այն  
շարժուն իւր բարեկամուհին չի տեսներ , հա-  
զար ու մէկ առիթ կը հնարէր՝ անոնց տունը սը-  
լանալ երթալու համար . Արբեմն լուր կը տանէր  
Մելքիթալին որ , արջ մը երևան ելեր է լեռան  
գօտուոյն մէջ ու կերկնչի որ չըլլայ թէ ոչխար-  
ները մնաս մը կրեն , երբեմն կուգար խնացնե-  
լու որ գիշերուան հիւսիսային հողմն օրթերուն  
դեռաբոյս բողբոջները թառամեցուցեր էր .  
Մելքիթալ զուարթ գիւտօք ունկնդիր կըլլար ը-  
սածներուն , և իւր խնամոցն ու մտերիմ բարե-  
կամութեանը համար շնորհակալութիւն կը մա-  
տուցանէր . Քլէր փութալով գաւաթ մը փր-  
փրադէզ կաթ կը նուիրէր իրեն . Ճէմի գա-  
ւաթը բռնելով՝ իր ձեռքին մէջ կառնէր Քը-

լէրին ձեռու ընկերը և չէր թողուր՝ մինչև որ այն առողջարար ըմպելիքին վերջին կաթիլը չէ լինցնէր։ Ժէմի կամաց կամաց կը խմէր զանիկայ՝ առանց աչքը սիրուհւոյն աչքերէն բաժնելու, ու այս նայուածքէն բաւականանալով՝ ըրած ճամբէն և օրու ընէն գոհ տուն կը դառնար, նոյն ճամբորդութիւնը մէկ մ'ալ ընելու համար նորանոր առիթներու սպասելով։

Մհա այսպէս կապրէին այս երկու ընտանիքները, այսպէս կապրէր եղբայրանման ժողովուրդ մը, որուն ծերերն, տղաքը, մայրերն ու հարսները՝ աշխատանքէն, անմեղութենէն, սէրէն և հաւասարութենէն ՚ի զատ հարստութիւն, երջանկութիւն ու հաճութիւն չէին ճանչնար։ Ռայց ԱօտուրՅոսին մահը յախշտակեց իրենց այս երջանկութիւնը։ ԱօտուրՅոս բախտին յաջողութիւն կեսարներուն գահը ելելով՝ յարգեր էր միշտ Օրու իցերիոյ ազատուիլը։ Եսկիւր յաջորդը՝ ամբարտաւանն՝ լպէրտ՝ իր ունայն տխուրաներովն, անթիւ ստացուածօքն և կայսերութեան ու Մլատրիոյ զօրութեանցն միանալուն վրայ հպարտացած, անարժան համարեց որ իւր իշխանութեանը տակ՝ քանի մը հովիւ, քանի մը երկրագործ ազատ մնան հպատակ անունէն։

Վարժեց թէ սոսկի զօրութեամբ կրցաւ գնել ժողովրդի մը սեպհական երկիրը : Այնպէս երեւցաւ իրեն որ՝ անարգ գանձերը, զինքը միահեծան տէր կրնէին մարդկային սեռին : Առսակալ մը ընտրեց որ երթայ կեղեքէ Հելվիտիոյ Մահանգները, ու այս կուսակալն էր, երիտասարդ կայսեր՝ ամենէն բարբարոս և վատ պալատականն յէսէր :

Եսէր, զինեալ գերիներու բազմութեամբ շրջապատուած, որոնցմէ գահիճներ կրնարէր ըստ իւր հաճոյիցը, եկաւ Աթորֆի մէջ բնակելու : Այնպիսի բուռն, անհանգիստ ու բորբոքած և այնպիսի գործունէութենէ մը յափշտակուած էր որ միմիայն չարիք կրնային գոհ ընել զինքը : Եսէր ինքըզինքն անգամ տանջեց, որպէս զի մարդ տանջելու արհեստին մէջ կատարելութիւն ստանայ : Ինչպէս որ որսորդներէ հալածեալ գայլ մը՝ կը սոսկայ նետին ձայնէն, այնպէս Եսէր կը սոսկար ազատութիւն բառէն : Խոստացաւ ինքնիրեն և երդումն ըրաւ որ անոր անուռն անգամ ոչնչացընէ, անյայտ ընէ : Եսէր, ամեն համարձակութիւն տուաւ իր վատ թիկնապահներուն, ու ամօթխածութե գէմ, հարստահարութիւն,

մարդասպանութիւն և անիրաւութի՛ գործածել-  
լու կենդանի օրինակը ինքն եղաւ անոնց : Աւնայն  
տեղը տրանջեց ժողովուրդը , վասն զի տրանջողն  
անգամ ընդունեցաւ իւր պատիժը : Արկչոտ ա-  
ռաքինութիւնը գնաց խրճիթներուն խորը պահ-  
ուըտեցաւ : Արխտասարդ կոյսը՝ գողաց իւր ա-  
հարեկ մօրը գիրկը : Յուսահատ երկրագործը՝  
անիճեց այն երկիրը որ իւր աշխատանացը փոխա-  
րէն առատ հունձք մը կը մատուցանէր , զորն  
որ ալ չէր յուսար քաղելու : Օտերերը՝ իբրև ա-  
զատարար ողջունելով մահը , կը բաղձային իրենց  
որդւոցը խնդիրքին համեմատ մէկտեղ գերեզման  
իջնալ : Մէկ խօսքով գժբաղդութեան թանձր՝  
մշուշը՝ Ժէսլէրի ձեռօք , իբրև յուղարկաւորա-  
կան քօղ մը , այս երեք նահանգներուն վրայ՝ ա-  
մեն կողմ տարածուեցաւ :

Ժէսլէրին գալէն ՚ի վեր Թէլ նախագու-  
շակեր էր հայրենեացը գլխուն գալիք գժբաղ-  
դութիւնը : Առանց ընտանեացը հանդիսար խը-  
ռովելու , առանց նաև Մելքթալին ըսելու , իւր  
մեծ հոգին պատրաստուեցաւ՝ չէ թէ տառա-  
պանաց , այլ հայրենեացն ազատութեանը : Աճիր-  
ներն կրկնապատկեցան , այս երեք զարհուրեալ  
նահանգները՝ սարսեցան Ժէսլէրի ոտիցը տակ :



սակայն Պուլիէլմոս չի սարսեցաւ չի զարհուրե-  
 ցաւ ամենեւին : Ռանաւորին անիրաւութիւնքը ,  
 ցամաք ժայռերուն վրայ փուշերով ծածկուած  
 թփերու կը նմանէր իրեն համար : Եւստ չան-  
 ցաւ բունն Մեղքթալը յայտնեց անոր իւր կատա-  
 ղութիւնը , Պուլիէլմոս ունկնդիր կըլլար՝ ա-  
 ուանց սրտասխանելու : Աչքէն արտասուք մը  
 չէր ելլէր բնաւ . իւր անփոփոխ դէմքն ու ճա-  
 կատը՝ չէին յայտնէր ամենեւին իր դաղափարները :  
 Ար յարգէր սրտէն՝ բարեկամին զգացմունքը , ու-  
 րոց անտարբեր չէր բնաւ . բայց անոր սրտմտու-  
 թենէն երկնչելով՝ կը ծածկէր իւր ցաւերը ,  
 որպէս զի չի գրգռէ զինքն ալ . կը պահէր իւր  
 դաղանիքը , մինչև դործադրութեան կէտը : Ար  
 նախագուշակէր այն ժամուն դեռ հեռու ըլլալը .  
 անդարտ , նսեմ , ու դժնդակ կերպարանքը  
 չէր փոխուէր ամենեւին , երկայն օրերը կանցը-  
 նէր առանց որդին համբուրելու , առանց աչքը  
 ամուսնոյն դարձնելու : Առաւօտները՝ սովորա-  
 կան ժամէն առաջ կելլէր , կը լծէր ցուլերն  
 ու զանոնք արտը տանելով՝ անմտադիր կեր-  
 պով մը կսկսէր աշխատիլ . խթանը կը սահէր  
 ձեռքէն . ու գէշ փորուած ահօսի մը քով կը  
 կայնէր յանկարծ . գլուխը՝ կուրծքին վրայ կիւ-

նարև աչքերը դէպ ՚ի հողը կուղղուէին • տխուր ,  
 անշարժ և շնչարդել միճակին մէջ կը հաշուէր  
 կը չսփէր բռնաւորին զօրութիւնը ու զանիկայ  
 կործանելու միջոյնները • կը կշռէր մտքովը ազա-  
 տասէր երկրագործի մը հետ՝ անսահման զօրու-  
 թեամբ զինեալ և Վայսերութեան բոլոր կարո-  
 ղութեամբը պաշտպանեալ ժէպէրն ու ար-  
 բանեակները •

Արեկոյ մը Գուլիէլմոս ու իւր ամուսինը  
 խրճիթնուն առջևը նստած , երիտասարդ ժէ-  
 միին կը նայէին , որ քիչ մը հեռուն՝ հօտեր-  
 նուն առաջնորդ խոյին հետ իւր ոյժը կը փոր-  
 ձէր • այս պարզ զուարճութիւններով զբաղեալ  
 տղայն , և այն սոսկալի թշուառութեանց մը-  
 տաճմունքը՝ որ գերութիւնը կը պատրաստէր  
 իրեն , խորին մտածմանց ենթակայ ըրին զգա-  
 յուն թէլը , և այն առաջին անգամն էր կեան-  
 քին մէջ որ արտասուաց կաթիլներ սահեցան  
 աչքէն • Այտմէ որ ուշադիր կըլար իրեն , չի  
 համարձակեցաւ բաւական ատեն խօսք բանա-  
 լու • բայց վերջապէս սիրոյ բուռն փափաքը և  
 սիրեցելոյն ցաւոցը մանաակից ըլլալու պարտա-  
 ւորութիւնը ստիպեցին զինքը • մօտեցաւ անոր ,  
 բռնեց ձեռքէն և անթարթ աչօք նայելով , ը-

սաւ . « Նարեկամ, ի՞նչ ըրի քեզի որ այսպիսի  
 զըկանաց արժանանամ. ի՞նչ բան կրնաս պատ-  
 ճառ բռնել, այն ինձի պատիւ բերող վստա-  
 հութիւնը վրայէս վերցընելուդ . այնպիսի ցա-  
 ւեր կը տեսնեմ վրադ, որոց բոլորովին անծա-  
 նօթ է ամուսինդ. կուզե՞ս ուրեմն որ անոնք  
 ինձի աւելի ցաւալի ըլլան. Չե՞ս գիտեր մի՞թէ  
 որ տասնէ հինգ տարիէ ՚ի վեր իմ մտածմունքնե-  
 ըրս քու մտածմունքներէդ կը կախուին, և չեմ  
 ուզեր հաւտալ երջանկուէ չեմ զգար չեմ վայե-  
 լեր զանիկայ առանց հաւաստի ըլլալու որ քեզմէ  
 կը բղխի. Ա՛ւանդ, ունայն տեղը կը քննեմ իմ  
 անփոփոխ սիրտս . և կը զարմանամ թէ քուկդ  
 ինչո՞ւ այսպէս փոխուեցաւ . Ննահարաննիս փո-  
 փոխուի մը չի կրեց, պէ՞տք է մի որ դուն փոխ-  
 ուիս . Մայէ խրճիթնուս, ահա ասոր մէջ կը սի-  
 բէինք ղերար . Մայէ քու մշակած արտիդ, որուն  
 հունձքը բոլոր ներկայ տարւոյն մեզի պէտք եղած  
 ապրուստը կը խոստանայ . Տե՛ս պայծառ լուսի-  
 նը՝ որ սա լեռներուն ետեւէն բարձրանալով, վաղ-  
 ուան համար այս օրուան պէս գեղեցիկ օր մը կա-  
 ւետէ . Վկատէ մէյմը մեր որդին, որուն ուրա-  
 խութիւնն ու անմեղ խնդումները՝ կարծես թէ  
 կը հրամայեն որ մենք ալ խնդանք, մենք ալ

երջանիկ ըլլանք իրեն պէս • Ի՞նչ բանի կարօտ  
ես, խօսէ՛ ս'վ Պօլիէյմոս, արդէն իմ անհամ-  
բեր սիրտս կը մաղթէ քու խնդիրքներուդ կա-  
տարումը •

« Այո՛մէ, սլատասխանեց թէլ, մի՛ արտասա-  
ներ բնաւ երջանիկ բառը • քանզի սոսկալի ևս  
պիտի ըլլայ անով • զիս ամեն ժամ ճ'նշող բերին  
ճանրութիւնը • Ար ցաւ իմ վրայ այդ դժբաղդ թէ  
որ կը հաւտաս այս երջանկութեանը, թէ որ  
բանի մը տեղ կը դնես այս ամօթապարտ հան-  
գիստը՝ որ միմիայն առանձնակեաց ըլլանուս  
պտուղն է • երբ բոլոր Պօլիցերիս գերութեան  
տակ կը հեծէ, երբ բարբարոսն Եւսլէր՝ ամ-  
բարտաւանագոյն տիրոջ մը ժպիրհ գործակալը  
կը տիրէ մեր վրայ և երկաթի դաւաղանաւ կը  
զարնէ ճակատներնուս • Ար ցուցնես ինձի այս  
աշխատանօքս յառաջ եկած հունձքը • Եւսլէր՝  
մէկ խօսքով մը կրնայ զրկել զիս անկէց • և դու քս-  
ընել մեզ այս խրճիթէն ուր որ նախահարքս ե-  
րեք հարիւր տարի առաքինութեամբ անցուցեր  
են • մեր սիրոյն գրաւականը եղող սա որդեա-  
կը, որուն համար հոգիս կուտամ, անոր կենա-  
ցը բախտն անգամ Եւսլէրին ձեռքն է • Արիի-  
րքս, ամուսինս, որդիս մինչև հօրս գերեզմանն

ալ, իմն չէ՛ այլ բռնաւորին . որն որ իրմէ գաղտնի  
 շնչուած օդն անդամ գողութիւն կը համարի .  
 Այլ ամօթ և նախատինք մեծ . բովանդակ ժողովուրդ  
 մը, ազգ մը, մէկ մարդու մը ցընորքներուն կը հպատակի . . . .  
 Նոյն կըսեմ, մարդու մը . . . ո՛վ Աստուած իմ ներքէ քու  
 ամենէն գեղեցիկ ձեռագործիդ անունը պղծելուս .  
 Մարդկութիւնը գործ չունի ամենևին բռնաւորներու հետ .  
 Պէտք է զոհուի ինքը՝ մինչև այն կէտը որ իւր իրաւունքները վերասին  
 ձեռք ձգելով՝ մէկ օրուան մէջ, հազարաւոր գարերու  
 անիրաւութեանց վրէժը լուծէ . Այս փափաքն ու յոյսը  
 կը քաջալերեն զիս . Նորոր հոգիս չի բաւէր խորհրդոցս  
 ընդարձակութեանը . Մի՛ արդիւնը զիս, չըլլայ որ  
 բոլոր մտադրութիւնքու և որդւոյս վրայ գրաւելով,  
 արդելք ըլլաս ինձ . Չիք որդի և ամուսին գերւոյ մը  
 համար՝ բնութիւնը անկենդան է ինձի .  
 Քու սիրով կուրացեալ աչքերդ՝ բերկրութեամբ  
 կը պարտին այս խրճիթին ու գեղեցիկ երկրիս  
 վրայ, ուր որ երբեմն երջանիկ է ինք .  
 իսկ իմիններս՝ առաքինութեան  
 եռանդով վառուած, սա ժայռին գաղաթը  
 կեցող ահարկու ամբու թիւններէն ՚ի զատ  
 բան մը չեն տեսներ, որոնք Նւսին շղթայակապ

պահելու համար կառուցեալ են ։

« Կարծէիր , ըսաւ Ատմէ , թէ իմ սիրտս այն չափ անարժան ըլլար քեզի՝ որ երկարատե դելու թեան անունէն չի դարչէի : Կարծէիր որ կըրնայի սիրել թէլը , առանց բռնաւորներն ատելու : Ա՛հ , մի անարգեր այն խոնարհ ու անկեղծ սրտերը որ խանդակաթ զգացմունքներով կը սընանին : Վիտնասա թէ , գիւրզգացու թիւնը որ երբեքն մայր է տկարու թեանց , շատ անգամ մեծամեծ առաքինու թիւններ կը ծնանի : Ա՛յն անձը որ թշուառու թեան վրայ և բարեգործու թեան պատմու թիւն մը լսելով կարտասուէ , կը ցուցնէ որ կարեկցու թիւնն ու բարեգործու թիւնը ընտանի զգացմունքներ են իւր սրտին : Քու անձիդ վրայ դատէ կինդ ալ , միթէ՞ երկու քնիս ալ անլոյծ կցորդու թեամբ իրարու հետ կապուած չենք : Վուն կը պաշտես հայրենիքդ , միթէ՞ պարտական չեմ մի ես ալ խանդակաթ սիրով կապուած ըլլալ անոր , որովհետե քու կգ և իմն է միանգամայն : Քու սրտիդ յատկու թիւնները գերադանց դեղեցկու թիւն մը ունին աչքիս վանն զի քեզի կը վերաբերին . և առաքինու թիւնըս կրկնապատիկ եղած է դքեզ սիրելովս : Խօսէ՛ ուրեմն վստահու թեամբ , և մի ծածկեր խոր-

հուրդներդ • Իմ սեռս՝ չիներէր ինձի որ քեզի  
օգտակար ըլլալու յոյսը ունենամ • սակայն ամուս-  
նոյս հետևող ըլլալու համար՝ մահը արգիլեալ  
չէ բնաւ ։

Թէլ, այս խօսքերուս վրայ Նտմէին գիրկը  
կը նետուի և կը պատրաստուի՝ սիրտը անոր բա-  
նալու • երբ յանկարծ հառաչանքներով խառն  
ձայն մը կը լսուի խորձիթին կողմէն • Շուտ մը  
ոտքի վրայ կեննեն երկուքը միատեղ, ու կը տես-  
նեն որ Ժէմի աժգոյն, արտասուելով՝ ձեռքերը  
երկինք վերցուցած, զարհուրեալ գէպ ՚ի իրենց  
կը վազէր կուգար • « Վ՛վ հայր իմ, կըսէր ընդմի-  
ջեալ ձայնով մը, ե՛կ ու հասիր, օգնէ՛ իրեն . . .  
Մեկքէ՛ս, ծերունին Մեկքէ՛ս . . . բարբա-  
րոսները յանդգներ են . . . » այսպէս խօսած ատենը,  
տեսան Քէրը որ թշուառ ծերունւոյն քալե-  
լուն կօղնէր • Օտքը աջ ձեռքովը դաւազանի  
մը վրայ կռթնած, ձախ ձեռքովն ալ անմխիթար  
Քէրը բռներ էր • Մեն մէկ քայլ առնելուն,  
այսպէս կը պօռար, « Թէլ՝ իմ սիրուն Թէլա,  
մըր ես » • Թեւերը կը տարածէր չորս կողմը Թէլը  
գտնելու համար, և ոտուրները քարերու զար-  
նելով՝ կատիպուէր, վայրկեան մը առաջ թո-  
ղուցած նեցուկը վերստին խնդրելու •

Գուլիէլմոս , ժաղեց , գրկեց ծերունին , ու  
 սխմեց կուրծքին վրայ , դիտեց աղէկ մը և սոս-  
 կալի աղաղակ մը բըցուց . մազերը տնկուեցան ,  
 տեսնելով՝ որ այս պատուական դէմքին վրայ՝  
 աչաց փոխարէն արիւնոտ հետք մըն էր մնացեր .  
 զորոնք քիչ մը առաջ երկաթը փորեր էր . Սոս-  
 կումն ու արհաւիրքը պատեցին թփէլը , դողդը-  
 դալով խոյս տուաւ անկէց ու կէս մը իյնալու  
 պէս հեռուն ժայռի մը վրայ սարսափած մնաց .  
 Աստէ մարած էր արդէն կեցած տեղը . Ժէմի  
 գնաց որ օգնէ անոր , ու Քլէր Գուլիէլմոսը  
 կանջելով՝ վերստին ցուցուց իրեն կոյր ծերունին  
 և սկսաւ արտասուել երկինք նայելով :

« Ար հեռանաս , միակ բարեկամ իմ , պօռաց  
 Մելքիթալ նուաղեալ ձայնով մը . միթէ կը  
 վախնամ որ չըլլայ թէ վերքերէս վաղած ար-  
 եամբը աղտեղիս : Ա՛հ , դարձի՛ր եկուր գիրկս  
 նորէն . Սիրտս , դեռ սիրտս դրած է . թող գո-  
 նէ անսկիայ բաբախէ քու սրտիդ վրայ . գոնէ  
 զքեզ համբուրելով և գրկելով հաստատ ըլլամ  
 որ բարբարոսները զիս աչքերուս լոյսէն զրկած  
 ատեննին , բարեկամս թողուցին ինձ » :

« Ներէ՛ , պատասխանեց թփէլ , անոր գիրկը  
 նետուելով . ներէ՛ իմ գթութեանս ու սոսկմա-



նրա առաջին այլայլութեանը • Ով առաջինա-  
 գոյնդ 'ի մարդիկ, թշուառութիւնդ՝ քեզի  
 համար ունեցած յարգանքս չի կրնար աւելցնել,  
 ասկայն կաւելցնէ դու թս, և աւելի զօրաւոր  
 ու սրբազան կրնէ զմեզ իրարու հետ միացնող  
 քաղցր կապը • Ա՛հ ի՞նչու, ի՞նչպէս, և ո՞ր  
 տեղ, այս մեղաց ծարաւի շարերը համարձա-  
 կեցան ձեռքերնին ծեր առաքինւոյ մը վրայ  
 ծանրացնելու • Ի՞նչ ըրիր, իրենց Մեկթալ,  
 ուրեմն որդիդ մեռաւ զքեզ պաշտպանելով,  
 Թէ որ ողջ է, պէտք էր մի որ քեզ տկար ու  
 թշուառ աղջկան մը պաշտպանութեանը յանձ-  
 նէր, որն որ՝ աւանդ, ողբալէն 'ի զսա բան չի  
 պիտեր • Եայց ես որդւոյդ տեղը կանոյնիմ,  
 թող ինձի ժառանգ ըլլայ այսօր իւր դութն  
 ու վրէժխնդրութիւնը •

« Արդիս մի մեղադրեր ամենեւին, պատաս-  
 խանեց ծերունին • մի՛ դատեր բնաւ բարեկա-  
 մըդ՝ առանց իւր իրաւանցը ունկնդիր ըլլալու •  
 Մասեցուցէք զիս ձեր մէջ տեղը, զքեզ քովս կու-  
 զեմ՝ Պուլիէլմոս • թող Քլէրս չի բաժնուի ինձ-  
 մէ, և Ատմէզ ու Ժէմիդ աղէկ ունկնդիր ըլլան » •

« Այն ատենը Օւերը դալարիքներով ծած-  
 կուած տեղ մը տարին • Մասաւ Թէլին քով, և

Նոսմէ անոր ետեւը անցնելով Մելքիթալին ար-  
գոյ գլուխը բռնեց ծունկուքներուն վրայ հանգ-  
չեցուց : Քլէր ու Դէմի ծունկ չողած , ար-  
տասուելով ձեռքը համբուրեցին :

« Մտիկ ըրէք , ըսաւ Մելքիթալ , չափ դրէք  
ձեր գորովոյն ու բարկութեանը : Այս առտու  
արեւը որն որ իմ աչքերուս համար վերջինն է  
եղեր լեռներնուս դաթաթը ոսկեղօծած ատե-  
նք , որդիս , ես ու Քլէր արան էինք : Քլէր  
որաները կապելու համար կօղնէր ինձի . որդիս  
այ զանոնք կառքին մէջ կը դիպէր , որ երկու  
լծեալ երինջները զայն խրճիթնիս պիտի տանէին .  
Մէկէն անգութ Դէպէրին արբանեակներէն  
զօրական մը երևցաւ . Շխտակ մեր վրայ դար-  
ձաւ , ու հասկերուն վրայ կոխուաւ լով եկաւ  
կառքին քով , ու քիչ մը քննել նայելէն վերջը՝  
յանգուգն ձեռօք քակեց երինջներուն լուծը .  
— Նչ իրաւամբ , ըսաւ տղաս , կառնես այս կեն-  
դանիները՝ որոնք իմ միակ ստացուածս միակ  
հարստութիւնս են . ասոնք են ընտանիքս սնու-  
ցանողը , ասոնք են որ մեր վրայ դրուած հար-  
կը կուտան տիրոջդ . — Նազանդէ՛ , պատասխա-  
նեց զօրականը , և մի հարցաքններ տէրերդ .  
Նոր վրայ տեսայ որ կատաղութիւնը վառեցաւ

որդւոյս աչքերուն մէջ. բռնեց թիկնապահին  
 քակած լուծը, քաշեց ձեռքէն, բարձրացուց  
 օղին մէջ, բայց իմ աղաղակներէս ետ կենալով,  
 —բարբարոս, ըսաւ. շնորհակալ եղիւր հօրս. իւր  
 ձայնը՝ որ արդար բարկութենէն աւելի աղդու  
 է որդւոյն սրտին վրայ, չի թողուր որ երկիրս  
 մարդկութեան թշնամիէ մը ազատեմ. փախի՛ր  
 վատ, աճապարէ ու հեռացի՛ր սրկէ. դողա՛, որ  
 այս արտը դերեզման չըլլայ բռնութեան անարդ  
 արբանեկի մը. **Օ**րականը արդէն հեռացած  
 էր. **Ի**սկ ես, **Մ**ելքթալը գրկեր կեցեր էի **Ա**րդ-  
 եակ իմ, ըսի իրեն, երկնից, հօրդ, ու որդւոյդ  
 սիրուն ըլլայ՝ ազատէ ինքըզինքդ **Ժ**եպէրին վը-  
 րէ ժխնդրութենէն, առանց ժամանակ կորսնցը-  
 նելու. **Ա**ր ճանչնամ անոր ինչ անդութ ըլլալը,  
 արեանդ մէջ պիտի թաթխէ ձեռքերը. զանիկայ  
 հօրդ ձեքմակ մաղերուն վրայ պիտի ցատկեցնէ.  
 խնայէ ինձի որդեակ, ազատէ կեանքդ, սիրուն  
 որդեակս եթէ կուզես որ ապրիմ».

« **Չ**է հայր իմ, պատասխանեց, որդիական  
 սիրով, բարկութեամբ և յուսահատ կերպով մը.  
 չէ՛ քեզ հոս մինտակ չեմ թողուր. աւելի կուզեմ  
 մեռնիլ զքեզ պաշտպանելով՝ քան թէ վայրկեան  
 մը դողալ քու վրայ. **Ժ**եպէր ու իւր բոլոր զօ-

րու թիւնը չեն կրնար բաժնէր զիս կենսատու իս  
 թեւերէն: Առ զեմ և պարտքս է . . . Հնազան  
 դիլ ինձ, կտրեցի խօսքը անաչառ ձայնով մը,  
 վախ չկայ բնաւ ինձի համար, թող որ հսկեմ  
 խրճիթիդ ու աղջկանդ վրայ, թող ինձի իւր ժա  
 ուանդու թիւնն ու հայրը պահելու հոգը: Վը  
 նա պահու ըստէ քանի մը օր Աւնտեր վոլտի լեռ  
 ներուն մէջ, ես ու Քլէր կուգանք ետեւէդ  
 երբ փոթորիկը անցնի: Վնա՛, վազէ առանց  
 վայրկեան մը կորսնցնելու: Մինչև հիմա աղա  
 չեցի քեզ, արդ կըստիպեմ, կը հրամայեմ իբ  
 րև հայր:

Այս խօսքերուս վրայ՝ կատաղին Մելքեթալ,  
 տխուր դիմօք խոնարհեցուց գլուխը, ծունկը  
 դետինք դրաւ, վերջին բարևը ընծայեց, և  
 օրհնութիւնս ուղեց: Միակեցի զինքը սրտիս  
 վրայ և արտասուօքս թրջեցի: Քլէր գերկը  
 նետուեցաւ, Քլէր համբոյրներով սրբեց իւր  
 թշուառ հօրը թափած արտասուքը, զորոնք  
 ունայն տեղը պահելու կը ջանար: Մէկէն աղ  
 ջիկը իւր գրկէն քաշելով իմ գիրկս տուաւ,  
 ձեռքս սխմեց ու մեկնեցաւ առանց համարձա  
 կելու, որ գլուխն ետեւը դարձնէ:


Քլէր ու ես մինակ մնալով, խրճիթնիս

գարձանք • միտքս դրեր էի որ երթամ Մթոր-  
 Ֆի մէջ բռնաւ որը գտնեմ, ու փորձեմ թէ ար-  
 գարու թեան զգայմու նքները բոլորովին անծա-  
 նօթ են սրտին • Առեղէի միս մինակ ներկայա-  
 նալ իւր ահարկու տեսլանը, որդւոյս ազա-  
 տութիւնը ընդունել, և կամ մեռնել գանկկայ  
 խնդրելով • Նայց մէկէն տեսայ որ շատ մը զօրք  
 պաշարեր էր խրճիթս • Մենքը բարձրաձայն  
 Մելքթալ կը պօռային, ամենքը կը հարցա-  
 քննէին կրտսիպէին դիս, և շղթայակապ ժէս-  
 լէրին ներկայացուցին •

«Մէր է տղադ, ըսաւ գժնդակ ձայնով մը •  
 Մատնէ զինքը իմ կատաղութեանս, եթէ չես  
 ուզեր որ իւր յանցանքին պատիժը քու վրայդ  
 դառնայ » • Օտարկ ըսի իրեն, շնորհակալ պիտի  
 ըլլամ Մատուծոյ • եթէ քու անդթութիւնդ  
 պատճառ ըլլայ կրկին անգամ կեանք տալ իմ  
 որդւոյս • ժէսլէր աչքը վրաս տնկեց մէյմը,  
 որով յայտնի կը տեսնուէր իւր արեան ծարաւն  
 ու իմ յամբարայլ օրերս չի կարճեցնելու համար  
 նոր տանջանք մը հնարելու փափաքը • Աերջա-  
 պէս երկայն լռութենէ մը վերջը նշան ըրաւ  
 դահիճներուն և առանց երեսը անդին դարձը-  
 նելու, առանց եղեռնադորձութեան սոսկալի

Տիճաղը դէմքէն պակսելու , որով կարծես թէ  
 հաստատ էր իւր անպատիժ Գնալուն , բռնե-  
 ցին պառկեցուցին զիս բարբարոսները , ու ձեռ-  
 քերնուն սրածայր երկաթովը փորեցին տկար  
 աչքերս :

« Այսչափը բաւական է , ըստ Աւետիւր .  
 թո՛ղ տուէք որ ապրի ատ տկար կոյրը , քակե-  
 ցէք շղթաները , թող երթայ գանէ որդին .  
 Քաշկռտելով պալատին դուռը տարին նեւե-  
 ցին զիս . Թե երս բաց սկսայ քալել և Քլէրին  
 ծոցը ինկայ . Քլէր հեռուեր էր ինձ և անողորմ  
 թիկնապահները՝ առաջին փահարանին մէջ ար-  
 դիւեր էին զինքը . Ղարկին մէջ սկսաւ սխմել և  
 արտասոււաց հեղեղներով թրջել զիս . լսեցի իւր  
 ցաւալի աղաղակներուն մէջ՝ այս բառը , սրտիս  
 այս ամենաքաղցր եղող անունը . « Հայր իմ , հայր  
 իս՝ ես եմ » . Քաջալերեցի զինքը որ լռէ , ու ցա-  
 ւերս իրմէ ծածկելով ուղեցի որ զիս բարեկամիս ,  
 որդւոյս բարեկամին տանի . « Շամբան ենք , պա-  
 տախանեց . դուն չըսած՝ ես զգացի զանիկայ ,  
 Հասանք ո՛վ սիրելի Ղուլիէլմոս , աւանդ ալ չեմ  
 տեսներ զքեզ . բայց կըզգամ որ քովս ես , ձեռքդ  
 ձեռքիս մէջն է , և կը դողդղաս իմ թշուառ պատ-  
 մութեանս վրայ . որդիս աղատեցաւ բարեկամս  
 դրած է . ա՛հ դեռ չի կորուսի ամեն բան »



Այսպէս խօսեցաւ Ներուհին • Պատմութիւնը լմնցընելուն պէս, Աստէ, Քլէր ու Տէմի, պարանոցը նետուելով՝ հառաջանօք և արտասուքներով ծածկեցին զինքը • Թէլ, անշարժ անբարբառ, ճակատը ձեռքին կռթնցուցած գետինը կը նայէր, ու կիսարաց աչքերը՝ արտասուաց խոշոր կաթիլներ կը սրսկէին հողին վրայ • շունչը արգիլուեր էր, և դլուխը վերցընող ձեռքը կը դողար սաստիկապէս • Արկայն ու տխուր լռութենէ մը վերջը՝ ոտք ելաւ, յանկարծ համբուրեց կոյր ծերուհին • լաւ մը սխմեց զինքը երկու անգամ դողդոջուն սրտին վրայ, ջանաց խօսելու, և հաղիւ կրցաւ երերուն ձայնով մը՝ սա՛ բառերը արտասանել • « Հայր խմ, անվրէժ չի պիտի մնաս » •

Այս խօսքերը զրուցելէն վերջը, Գուլիէլմոս խորին մտածմանց մէջ ինկաւ վերստին • Տխուր արտում, ոտքի վրայ կեցած, քննեց, մտածեց,

ինչ որ արդէն մտայած էր , և քիչ մը ետքը ինք-  
 զինքին գալով , հանդարտ կերպով մը հարցուց  
 ծերունւոյն , թէ՛ « արդեօք զիտէր Մելքեթալին  
 որ կողմ քաշուած ըլլալը » : « Այո՛ , պատասխանեց ,  
 թշուառ հայրը , որդիս՝ Պայկելի խորին այրե-  
 րուն մէկուն մէջ , քաշուած ըլլալու է : Այն  
 անպատ ու անմատոյց ժայռերը , անձանօթ են ,  
 բռնաւորին լրտեսներուն և արբանեկացը՝ Մելք-  
 թալ , խոստացաւ և երդումն ըրաւ որ առանց  
 իմ հրամանիս անկից չելնէ : Աւրեմն հրաման  
 տուր , պատասխանեց Պուլիէլմոս , կուզեմ , որ  
 ազատ ընես զինքը իր խօսքէն , իւր օգտին  
 համար , և դուն որդեակ , պատրաստուէ , ու հի-  
 մայ ճամբայ պիտի ելնես : Պիշերն ՚ի բուն եր-  
 թալով , կրնաս վաղը արշալուսոյն Պայկել լեռը  
 հասնիլ : Ինտուէ Մելքեթալը , ու մի գաղբե-  
 ցրներ ճամբադ , ինչուան որ չի գտնես զինքը ,  
 տեսածիդ պէս ըսես , բարեկամդ կը խրկէ զիս  
 հոս , որպէս զի իմացնեմ քեզ , նողկալի Ժէսլե-  
 ըին նորանոր ոճիւրները : Անդու թը հօրդ աչ-  
 քերը փորել տուաւ : Պուլիէլմոս խրկեց քեզ  
 այս գաշոյնը » :

Նոյն ատենը թիւլ , սուր մը քաշեց մէջքէն ,  
 զորն որ միշտ վրան կը կրէր : Ժէմի յարդանօք



մօտեցաւ , առաւ զանիկայ ու ճոջը դրաւ , Ասա  
 մէ ու Քլէր կը դողդղանէ և շէն համարձակիր  
 Գուլիէլմօսին բան մը հարցընելու , մէյմը Ժէ-  
 միին կը նային , մէյմը իրարու , և կը վախնան՝  
 երիտասարդ տղու մը համար այսպիսի վտանգա-  
 ւոր ձեռնարկութեանը վրայ խօսք մը զրուցե-  
 լու : Ծերն Մելքիթալ՝ այս հրամանէն զարմա-  
 նալով , կը հարցնէ Թէլին , թէ՛ ի՞նչ է իւր միտ-  
 քը : Արդիդ գիտէ անոր ինչ ըլլալը , պատասխա-  
 նեց Գուլիէլմօս , և միմիայն այս դաշոյնը տես-  
 նելով՝ պիտի խմանայ ինչ ընելիքը , Ժամանակը  
 սուղ է , շի կորսնցնենք զանիկայ ունայն տեղը ,  
 քեզի այս մէկ խօսքէն ՚ի զատ ըսելիք մը չու-  
 նիմ : Հայր իմ , անովէ՛ք շի պիտի մնաս :

Մէկէն կը բռնէ Ժէմիին ձեռքէն , և ա-  
 ռանց բան մը ըսելու՝ կը տանի զինքը իւր հօրը  
 գերեզմանին քով : Հոն երգումն ընել տալէն վեր-  
 ջը , կը հարցորդէ անոր , իւր գիտաւորութեան  
 մէկ մասը , կը յայտնէ իրենց յաջողութեան մի-  
 ջոցները , ու կը հրահանգէ զանիկայ , Մելքիթա-  
 լին ըսելիք խօսքերուն վրայ :

Արկուքն ալ վեհ յուսով մը վառուած ետ  
 կը դառնան : Ժէմի պատրաստ է ձամբայ ելնե-  
 լու , Քլէր կուզէ որ ընկերակցի անոր , ելլթայ

Համբուրէ հայրը , պատուղ , հայ և ուրիշ ուսե-  
 լիքներ տանի անոր . Օւերն Հանրի , կը հաւա-  
 նի այս ճամբորդութեանը . Նամէ , ուռենուց  
 ոստերէ շինուած կողով մը՝ պաշարներով կը լե-  
 ցրնէ , կաթն ու գինին անգամ չի մոռնար անոր  
 վրայ աւելցնելու . և կողովը որդւոյն ձեռքը  
 տալով՝ կը սխմէ զանիկայ գլխին մէջ , երթա-  
 քարով կըսէ , կը համբուրէ վերստին , և կամաց  
 մը կապապրէ Քլէրին որ հսկէ իւր սիրելի տը-  
 դուն վրայ . Ժէմի երկաթածայր գաւազանով  
 մը զինեալ , որուն գործածելու կերպը՝ հայրը  
 սովեցուց իրեն , կողովը գլուխը կը դնէ , թէր  
 երխտասարդ Քլէրին կուտայ , և այսպէս իրար  
 բռնելով ճամբայ կեննեն , նման զոյգ մը մատաղ  
 եղջերուներու , որ նոր արօտ մը գտնելու նպա-  
 տակաւ մութ տեղը կը թափառին .

Վուրիէլմոս կը դիտէ անոնց ճամբայ ելնելը .  
 ինքն ալ գայլի մորթով կը զգեստաւորի , ինչպէս  
 որ սովոր էր հեռու տեղուանք որսի գացած ա-  
 տենը . Այս լայն գօտիով մը մէջքէն սխմուած  
 մորթոյն մէջ՝ գլուխն ալ կը ծածկէ , ու կենդան-  
 ւոյն ահւաները ճակտին վրայ կախուելով՝ սիր-  
 տան փայփիլի . Սրունքներուն մինչև կէտը արջի  
 մորթով պատած , և փայլուն նետերով լի կա-

պարձք մը ուսէն կախուած էր . ու ձեռքն ու  
նէր այն սոսկալի աղեղը , որ երբէք ունայն տեղը  
չի լարուեցաւ . Ա՛յս մեծ աղեղին վրայ կռթնած ,  
հանդարտ աչօք Ատմէին նայելով ,

« Ա՛մուսինդ իմ , ըսաւ . պէտք է որ զքեզ  
թողում , ու մեկնիմ առանց ժամանակ կորսնցը  
նելու . Քեզի կը յանձնեմ մեր հիւրը , բարեկա  
միս հայրը , այն ծերունին որ հօր պէս կը յար  
գեմ ու կը սիրեմ . միմիայն իւր վրայ դարձուր  
քու խնամքներդ . Հսկէ իր քովը , քնացած ա  
տենը . Վիշեր ցորեկ նայէ որ օգնես իրեն , ու  
ամենափոքր ցաւերն անգամ դուշակելով թե  
թեցնես . կատարէ ամեն ժամ , ծերութեան ,  
դժբախտութեան , ու բարեկամութեան համար  
ունեցած պարտքերնիս . Քիչ ատենէն վերստին  
պիտի տեսնես զիս . երկու օրը ինձի բաւական  
է . Մարդ չիմանայ իմ մեկնիլս , ու չըլլայ որ  
տանը դուռը բաց թողուս մինչև որ ետ դառ  
նամ » :

Ա՛յս ըսելով ելաւ խրճիթէն , ու Ժեմիին  
դացած ճամբէն տարբեր ճամբայ մը բռնելով ա  
ներևոյթ եղաւ .

Սոյն ատենը , Քլէր ու Ժեմի միատեղ կիջ  
նային լեռնէն , որպէս զի Աւնտէրօլա տանող

նեղ ճամբաները գտնեն . Այլ թորՖի վրայէն շրջան մը ընելով , Թէլին ձկնորս բարեկամներէն մէկուն խորճիթը կը հասնին . և կը խնդրեն որ զերենք լճին միւս կողմը անցընէ . Վարեսիրտ ձրկնորսը , այս տղոցը օգտակար ըլլալու համար փութալով՝ կերթայ կը քակէ լաստը , ձեռքերնուն կը բռնէ , ներս կը մտցնէ զանոնք , և թիակները առնելով , շուտ ու հաւասար հարուածօք կըսկըսի զտրնել թափանցիկ ջուրը : Վիսացի եզերքը երածնուն պէս տղայքը շնորհակալ կըլան ձկնորսին . ու կսկսին լիճը չորս կողմէն պաշարող անբեր ժայռերէն վեր ելնել : Բլէր կուզէ որ Ժէմիին վերցուցած բեռը կարգաւ ինքն ալ տանի . կը վիճէ այս քաղցր պաշտօնին համար , զորն որ Ժէմի չուզէր թողուլ : Ա երջապէս կը բսժենեն զայն մէջերնին , և երկուքնին մէկտեղ իր բռնեն կողովին վերի ծայրէն : Այսպէս իրարու հետ խօսելով , և մերթ ախուր տրտում , մերթ գորովալից աչօք իրարու նայելով , նեղ ու մոլայ ճամբաներէն վեր կելնեն , տեղ տեղ շնչառութեան պատճառաւ կանդ առնելով . բայց բուն իրենց նպատակը խօսիլն ու աւելի մօտանց իրարու նայելն էր :

Առսինք արդէն աներևոյթ եղած էր : Աբ-

շալոյսը որ խիստ ծոյլ ու յամբարայլէ այս ցուրտ  
 եղանակին մէջ արդէն սկսած էր լեռներուն ձիւ-  
 նապատ դադաթը ոսկեզօծել, երբ երիտասարդ  
 ճամբորդները Պայկելի ստորոտը հասան. Արս-  
 կրսին բլուրն 'ի վեր ելնել, ու չորս կողմը կը նա-  
 յին, որպէս զի, այժարած մը կամ հովիւ մը գլու-  
 նեն՝ որ ցոյց տայ իրենց Մելքիթալին պահուը-  
 տած առանձնակեաց քարայրը. Աչ ոք կը գտնեն  
 այս անապատ ժայռերուն մէջ. Ընդունայն հե-  
 առները կը պատոյնեն աչ քերնին. սառոյցքներէ  
 ու վայրի քօշերէ\* 'ի զատ բան մը չերևիր. որոնք  
 բարձրաբերձ գահավէժներուն վրայէն ծռելով,  
 մարդ տեսնելուն պէս, օդային թռչնոյ մը նը-  
 ման կըսլանան կերթան.

Ա երջապէս, ժամը ութնին\*\* միջոցները մէ-  
 մի բարակ մուխ մը կը նշմարէ ժայռերուն մէջ  
 տեղը, և զանհկայ Քլէրին ցուցնելով, կըսկսին  
 'ի միասին դէպ 'ի հոն դիմել. Ար ցատկուտեն  
 սառուցեալ հեղեղներուն վրայէն, ու մայրեաց  
 անտառակի մը մէջէն անցնելով՝ կը հասնին քա-  
 րայրի մը քով, որուն խորը հրոյ բոց մը կը շա-  
 աւջէր. Եւս կրակին դիմացը, մարդ մը նստած,

\*Վայրի քօշ. եապան քէշիսի,  
 \*\*Պէտք է եւրոպական ժամ իմանալ.

չոր ոստերով կարծարծէր զանիկայ • Առաջին օտ  
 նաձայնը ականջը հասածին պէս, գլուխը կը  
 դարձնէ • ու ոտքի վրայ ելնելով, կացինը ձեռքը,  
 սպառնալեօք երիտասարդ ճամբորդներուն վրայ  
 կը վազէ • Ենչ կուզէք • կրսէ անունց կատաղի  
 ձայնով մը • Քու որդիքներդ ենք հայր խմ • կը  
 պատասխանէ Քլէր, դէպ ՚ի իրեն դիմելով՝ Ժե-  
 մին և աղջիկդ է, հետերնիս ուտելիք բերինք, ու  
 եկանք դքեզ գրկելու •

Այս ըսելով, Մելքթալին պարանոցը կը  
 ներտուի • որն որ մէկդի ձգելով ձեռքի տապարը,  
 ու բախու թեան աղաղակ մը կը վերցնէ • կրնդ ու-  
 նի իւր աղջիկը, կը սխմէ կուրծքին վրայ, ու  
 համբոյրներով կը ծածկէ զանիկայ • Մէկէն  
 Ժեմին կը դառնայ որ լուիկ քնջիկ իրեն կը  
 նայէր • կը համբուրէ, ու Քլէրին հետ թեւեւ  
 բուն մէջ կաննէ զինքը • իւր հօրը ու Թեւին  
 անունը կարտասանէ • մէկ խնդիրէն միւսը կանց-  
 նի, ու իւր գորովալի գգուանքները կը բաժնէ,  
 երկու տղոցը մէջ • Աւերջապէս խարոյկին քովը  
 կը տանի զերենք, ու իւր երկու կողմը նստեցը-  
 նելով արտասուալից աչօք ունկնդիր կը լլայ •

Քլէր գգուշու թեամբ կխմացընէ անոր, իրենց  
 զպլտեան պատճառը ու ծերունի անրիին

դրկած սուրբ հրամանները բայց ձայնը կը մարի,  
 կուզէ ու չի կրնար զրուցել՝ իրեն արտասուացը  
 առ իժ եղող սոսկալի դժբաղդութիւնը, **Ժէս-**  
**լէրին** զարհուրելի ոճիրը. երեք անգամ պատ-  
 մութիւնը կսկսի, և երեք անգամին ալ կըստիպ-  
 ուի ընդմիջելու. **Ժէմի** օգնութեան կը հասնի  
 իրեն. ո՛վ **Մելքիթայ** կըսէ. «նայէ աչքերնուս  
 արտասուացը ու պիտի խմանաս մէկէն որ քեզի  
 նորանոր դժբաղդութեանց գոյժը կը բերենք.  
 Հայրս խրկեց զիս, ո՛ր եղելութիւնը խմացրնեմ  
 քեզ, հայրս ըսաւ որ իւր բարեկամը խմաստու-  
 թեամբ պիտի մտիկ ընէր, և իւր աղջկանը **Քը-**  
**լէրին** վրայ գլխաւով՝ պիտի զսպէր սրտին ցաւը».  
**Յետոյ** երիտասարդ պատանին՝ վայրագն **Ժէս-**  
**լէրի**, ինչ կերպով տկար ծերունիէն վրէժ ա-  
 ռած ըլլալը կը պատմէ. **Վատաղին Մելքիթայ**,  
 այս պատմութիւնը լսելով՝ ոտքի վրայ կելէ  
 մէկէն, ու կացինը յափշտակելով, կուզէ որ  
 քարայրէն դուրս դիմէ և ելիժայ անգութ **Ժէս-**  
**լէրին** արեանը մէջ թաթխէ ձեռուրները.  
**Քլէր** ոտքը կիյնայ, **Ժէմի** դէմը կը կենայ.  
 յիշէ՛ հայրս կըսէ, ո՛ւրեմն մուցար զինքը, ո՛ւ-  
 թեմն բարեկամդ չէ անիկայ. ունկնդիր լեր գոնէ,  
 ու տե՛ս ինչ որ իմ բերնովս քեզի կապապրէ,

Գուլիէլմոս վրէժդ առնելու կրղըաղի • Հիմա  
 Գուլիէլմոս Ա Էրնէրի քովն է • և սա միակ խօս-  
 քը բաւական պիտի տեղեկացընէ քեզ • Մհա,  
 հօրս հրամանը • երկու անգամ կրկնեց զանիկայ •  
 Գնա՛ որդեակ իմ • ու խնացուր Մելքեթալին՝  
 բռնաւորին նոր ոճիրը • կատաղաբար վրէժ չենք  
 կրնար առնել • այլ քաջութեամբ ու խոհեմու-  
 թեամբ • ես Շ ուից կերթամ • որպէս զի Ա Էրնէրը  
 գտնեմ • ու զինել տամ իւր նահանգը • Մելքեթալ  
 թող Մթանց երթայ • հոն կը բնակին • իր բա-  
 րեկամներն և Անտէրօլտի գլխաւորները • թող  
 գումարէ ու հրաւիրէ զերենք • զէնքերնին պատ-  
 րաստելու • ու վերջը թող դառնայ Արիւթիի  
 քարայրին մէջ սպասէ • ուր Ա Էրնէրն և ես պիտի  
 փութամք • իրեն գալու •

Մելքեթալ • մտիկ կրնէ Ժէմիին ըսածները •  
 ու վրիժուց տրտմախառն ու բախտութիւն մը կը  
 վառի դէմքին վրայ ու աչքերուն մէջ • Հնազանդ  
 եմ թէլին • կը պօռայ յափշտակութեամբ • եր-  
 թամ ժողուեմ բարեկամներս • Ժէմի վաղուան  
 համար կրնաս հօրդ • երկու հարիւր քաջ • հա-  
 լատարիմ ու ազատութեան սիրով վառուած  
 անձինք խոստանալ • որոնք պատրաստ են ՚ի մահ  
 հայրենեաց ազատութիւնը ստանալու համար և



անտարակոյս եմ որ չի մեռած հազարաւոր գե-  
րիներ կրնան գետինը փռել: Անոնք պիտի բարձ-  
րացնեն ազատութեան դրօշակը Աթանցի հրա-  
պարակին մէջ: Ահա՛ այն կէտը որ սրտիս քա-  
ջութիւնը կը սպասէր, ու միմիայն թէլին և ար-  
գոյ հօրս սուրբ հրամանները շղթայակապ ըրած  
էին: Հայրս ու բարեկամս ալ չեն արդիւնը զիս.  
վազենք, սլանանք յաղթանակը անտարակոյս մերն  
է: Միտոս կը լափի որ մէյ մը անիրաւ ժէպէրին  
հետ ձեռք ձեռքի մըցիմ: Թող գայ, թող գայ  
մեր վրայ իւր բիւրաւոր թիկնապահներովն ու  
անթիւ զօրութեամբը. աւելի զօրաւոր եմ ես,  
կը դիմեմ մարդկութեան ազգը նախատողի մը  
դէմ, յանուն ազատութե և որդիական սիրոյ:

Այս կըսէ, ու կուզէ մէկէն դէպ ՚ի Աթանց  
դիմել: Արիտասարդութիւն Քլէր, երկրորդ  
անգամ կարգիլէ զինքը. կըստիպէ որ գոնէ մէկ  
քանի վայրկեան բնութեան զգացմանցը զօհէ.  
մէկ ժամ մը աղջկանը նուիրէ, որ իւր խանդա-  
կաթ գորովանքը կարենայ վայելել. և բերած  
ուտելիքներովը իւր տկարացեալ մարմինը զօրա-  
ցնէ: Օգայունն Մելքթալ լալով կը համբու-  
րէ սիրելի օրիորդը, ու երիտասարդ ժէմին  
թեւերուն մէջ սխմելով՝ յանձն կառնէ վառա-

րանին քոզ նատելու , և երկու տղաքը մէյ մէկ  
 կողմը առած՝ շտապաւ սահաւապեալ ու կիս-  
 կատար ճաշ մը կրնէ անոնց հետ : Շուտ մը  
 կացինը կառնէ նորէն . մնաք բարով կրսէ տղոցը  
 ազջիկը կը գրկէ և **Ժէմիին** ձեռքը բռնելով .  
**Մտիկ** ըրէ՛ կրսէ , որդեակ կրնայ ըլլալ որ մեռ-  
 նիս մեր այս ձեռնարկութեանը պատճառաւ .  
 աս մահը անգամ բերկրութիւն մը ունի . վեհ  
 օրտի տէր եղողները , պիտի նախանձին իմ վի-  
 ճակիս : Սակայն կուզեմ գոնէ իմ միակ գանձս  
 տեղաւորել , որուն հայրենեացս ազատութիւնը  
 և եթ կրնամ նախամեծար համարիլ . **Մ**, յս գան-  
 ձը որդեակ , **Քլէրիկս** է և հիմակու ընէ զինքը քե-  
 ղի կուտամ : **Մ**, հա՛ քու հարսդ **Ժէմի** . իրարու  
 ձեռք սխմեցէք , իմ ձեռքիս մէջ . **Արդու** մն  
 ըրէք սրտիս վրայ՝ որ հայրենեացս , ձեզի ու  
 հօրս համար կը բաբախէ . երդումն ըրէք որ  
 միշտ զիրար սիրէք , ապրիք ու մեռնիք մէկըզ-  
 մէկու համար . և **Չեր** բուռն ու անարատ սի-  
 րոյն հետ խառնէք ամեն մէկ խորհուրդնիդ :  
**Մ**, մուսին էք իրարու՝ որդեակք իմ , կօրհնեմ  
 զձեզ յանուն իմ հօրս , և ընտիր բարեկամիս .

**Քլէր** ու **Ժէմի** ծունկ կը չոքին , ձեռք  
 ձեռքի տուած կը խոնարհեցընեն զլուխնին , ու

Երբ որ հայրապետն օրհնենքը կրնդուծին •  
 Արտասուքը երեսնուն վար կը վազէ • Մեկ քիթալ  
 անգամ լալը չի կրնար բռնել , և իւր բռուն կը  
 ընց յափշտակութեամբը վառուած աչքերը՝ ար-  
 տասուաց տակէն կրակ կը փայլեցընեն , Ար վեր-  
 ցընէ զաւկըները , կը համբուրէ զանոնք վերասին ,  
 մնաք բարով կրսէ , և Գուլիէբնոսի զրուցե-  
 լիքնին մէկ մ'ալ կրկնելով՝ կառնէ կացինը , մէ-  
 կէն կելէ քարայրէն ու Սթանցի ճամբան կը  
 բռնէ •

Արկու տղաքը առանձին մնալով՝ նախ չեն  
 համարձակիր որ աչքերնին իրարու դարձնեն •  
 Աորագլուխ , և ձեռք ձեռքի տուած անշարժ  
 կը մնան սգահ մը • Եւրախութիւնը , երջանե-  
 կութիւնն ու երկիւղը , իրար խառնուելով կը  
 գողացընէ զերենք • Չանաղան զգացմամբք ա-  
 լէ կոծեալ սրտերնին , չի կրնար դիւրութեամբ իւր  
 առջի վիճակը դռնել • տղայական ու անկեղծ ա-  
 մրչկոտութեամբ առջի բերանը կը վախնան այս-  
 պիսի առանձնակութենէ մը • Ժէմի վերջապէս  
 սիրտ առնելով՝ գողգոջուն ձայնիւ կրսէ • Քլէր՝  
 խնս եւ դու • շատոնցուրնէ՛ ՚ի վեր գիտես որ  
 Ժէմի քեզմէ ՚ի զատ մէկու մք չէր կրար ըլլալ •  
 Աայց սա վայրկենիս , հօրերնուս այսպէս վը-

տանգալի ձեռնարկութեանց միջամուխ եղած  
 ըլլալը, կարգիլէ մեզ իրարմով զբաղելը • միմիայն  
 անոնց կը պարտիմք, սրտերնիս ու ժամանակ-  
 նուս ամեն մէկ մանրերորդը • **Մեկնինք Քը-**  
**լէր**, երթանք մօրս պատմենք մեր ճամբորդու-  
 թիւնը • և երբոր հայրս ու արդոյ պապդ՝ **Մեկք-**  
**թալին** տուած օրհներբը հաստատեն, այն ատեն  
 գուցէ համարձակիմ իմ որչափ երջանիկ ըլլալս  
 քեզի ըսելու •

**Քլէր** առանց պատասխանի կը սխմէ անոր  
 ձեռքը, քարայրէն դուրս կելնէ մէկէն, ու կըս-  
 կըսին եկած ճամբանուն հետեւիլ •

**Սակայն** արեգակը, թէև հաղիւ իւր ընթաց-  
 քին կէսք կատարել էր, նսեմ ամպերուն մէջէն  
 աղօտնշօյլ մը միայն կարձակէր • **Արկնից** կապոյ-  
 տը համատարած մոխրագոյն առագաստով մը  
 ծածկուեր էր, և ձեան տարափ մը կը թռչը-  
 տէր օդին մէջ՝ մորենեաց վրայ պլլուած գառ-  
 նուկներու տարին նման, ու հետզհետէ կաւե-  
 նար հիւսիսային կողմէն • **Յանկարծ** ցուրտ հով  
 մը ելլելով, կըսկսի աւելի սաստկացնել այս սպի-  
 տակափայլ ձիւնը • **Եբրև** ու թգին տեղատարափ  
 մը կիջնայ, կը լեցնէ ճամբաները, կը ծածկէ  
 գահավէժները, և վատաբախտիկ ճամբորդնե-

բուն աչքին նայուածքը՝ կարգիլէ, որուն սաստ-  
 կութեանը ալ չէին կրնար գիմանալ. Բլէր ու  
 Ժէմի կայներու ստիպուելով՝ ապառաժներուն  
 տակ հովանի մը կը բնտուեն. Չիւնը ամեն կողմ  
 կը հասնի ետեւուն ու առատ առատ կիջնայ  
 գլուխուն վրայ. Ժէմի կը տագնապի Բլէրին  
 համար. իսկ Բլէր անոր սիրտ տալու մտօք՝  
 սպիտակացեալ զգեստները թոթուելով կը  
 խնդայ. Աւերջապէս փոթորիկը իւր առաջին  
 սաստկութիւնը կը կորսունցնէ. և արեւուն ու-  
 կեզօծ ճառագայթները այն համատարած քօղը  
 թափանցելով՝ ձիւներուն վրայ աղամանդի պէս  
 կը ցոլանան. Արկու տղաքը ճամբայ կելնեն վե-  
 ըրստին. բայց իրենց շաւիղը չեն կրնար գտնել.  
 Բիզադէզ սպիտակ օթոց մը՝ ժայռն ու գահա-  
 վէժը հաւասար կերպիւ ծածկեր էր. Ժէմի  
 Բլէրին ձեռքէն բռնած՝ կրսկսի զգուշութեամբ  
 յառաջանալ. ձեռքի գաւազանաւը ձիւներուն  
 խորութիւնը կը չափէ ու վտանգ մը չըլլալուն  
 ապահով չեղած՝ չի թողուր որ Բլէր քայլ մը  
 յառաջ երթայ. Իսկ Բլէր, որ մի միայն իւր  
 ընկերոջը վտանգ մը չի հանդիպելուն կը նայի,  
 անոր կոխած տեղուանքը կոխելով՝ աւելի ա-  
 մուր կըբռնէ ձեռքէն, որպէս զի եթէ սահելու

ըլլայ՝ կարենայ օգնել իրեն, և այս երկայն ու  
ցաւայի ընթացքն ու անընդհատ վտանգներն ան-  
գամ գորովայնց Քլէրին համար քաղցրութեամբ  
խառնուած էին :

Շրջաններ ընելով՝ հեղեղներուն եղերքը  
հետեւելու կրաստիպունին, ուր ջուրին արագութիւն  
գետինը չէր ծածկուէր. օրուան մնացորդը կանց-  
նի ու հազիւ իրիկուան գէմ Արթէլտ գիւղի  
մօտերը կը հասնին : Ժէմի ապահով է որ Տիո-  
սէն վեր ելնելով գիշերը կրնան Աթորֆ մտնել :  
Միտ կուտայ ընկերուհւոյն, և լուսինը երեւնալ  
սկսելով վերստին մոլորելու երկիւղը կը փարա-  
տի իրենցմէ : Արքաջայերուն և Իւռիի մէջ տե-  
ղէն անցնող գետին ձախ կողմը բռնելով կսկսին  
յառաջանալ, երբ երկայն բաղխատրով մը զինեալ  
և լայն վերարկուաւ մը ծածկուած մէկը կը տես-  
նեն իրենց մօտ : միմիայն ձիւն ու սառոյցք կը  
տեսնուէր, գլխարկին, վերարկուն ու ցրտէն  
իրարու կպած մազերուն վրայ : Այս մարդը շե-  
տակ տղոցը գալով՝ որոնք զինքը տեսածնուն  
պէս կանգ առին, այլայլեալ ձայնով մը ըսաւ :

Արիտասարդ բարեկամներս, մոլորեալ որ-  
տորդ մըն եմ ես : Աորուսի բոլոր ընկերներս ու մի-  
անգամայն Աթորֆի ձամբան. ուր որ հաստատ

եմ թէ մեծ անձկուի պատճառաւ է իմ այս  
 պէս բաժնուիլս : Արնաբ մի առաջնորդել ինձ  
 որդեակք : Չեր ջանքն ու ինձի ըրած օգնու  
 թիւնը արժանապէս կը վարձատրեմ : Արձքը  
 արդէն իսկ ծառայութեանը մէջն է, պատաս  
 խանեց մէկէն Քլէր : գիտենք Աթորֆի ճամ  
 բան : ու քեզ ընտանեացդ տանիլը՝ մեզի այնչափ  
 ուրախութիւն պիտի պատճառէ, որչափ որ  
 կրնար պատճառել՝ եթէ դուն զմեզ մեր բարի  
 ճնողացը տանելիր : Ետևէ մեզի ու ապահով  
 եղիր որ մէկ ժամէն քաղաքը կը հասնիս : Արսոր  
 դը, կը միանայ երկու աղոցը հետ, ու պայծառ  
 լուսնին լուսովը՝ զգուշութեամբ գննելով գերենք,  
 լռիկ մնջիկ կերթայ քովերնուն :

Քիչ մը ետքը որսորդը, խօսքը Ժէմիին  
 ուղղելով : Արիտասարդ կըսէ, ո՞վ են քու ծը  
 նողքդ : ո՞ւր կը բնակիք Աթորֆի մէջ : Արկ  
 ըրագործի մը որդին եմ ես, կը պատասխանէ Ժէմի,  
 առանց անոր նայելու : հայրս ամենևին քաղաքը  
 չի բնակիր : Ո՞ւր է ուրեմն իւր ապաստանարա  
 նը : Անապատի մը մէջ տեղը լեռներուն վրայ :  
 հոն իւր արար կը մշակէ, ու առաքինութեամբ  
 կեանքը կանցընէ : Առաքինութեամբ, հեզ  
 նարար կը կրկնէ որսորդը : չէի կարծեր որ

այս անունը ձեր մատաղ հասակին ծանօթ  
 ըլլար : Այս առաջին բառն է որ թո՛թովանօք  
 արտասաներ եմ, կրսէ Ճէմի անվեհեր ձայնով մը  
 — Գիտեա ուրեմն անոր ինչ նշանակելը . — դո-  
 նէ կը յուսամ : — Մեկնէ ինձ զայն : — Արեք  
 բառ բաւական են . երկիւղն Աստուծոյ, սէր  
 մարդկանց վրայ ու ատելութիւն նեղ չաց դէմ :  
 — Աւ ո՞վ են այդ նեղիչները : — Ի՞նչու որներն  
 ու իրենց արբանեակները : — Օ, ու իցերից մէջ  
 բռնաւոր չի կայ : Քէր ինքզինքը չի կրնարով  
 բռնել մէյ մը կը պօռայ : Ճէմի չի պատասխա-  
 ներ ամենեին . և որսորդը՝ լուռ ու կոյազլուխ  
 կը շարունակէ ճամբան քիչ մը ատեն :

Արթաւով Արթորի ամբու՛թեանցը կը մօ-  
 տենան, արդէն դունները սպասող պահական  
 զօրաց նիզակները կը փալվիլին հեռուանց .  
 Տրտում անծանօթը մէկէն դժնդակ ձայնով մը  
 կը հարցնէ Ճէմիին թէ ո՞վ է իւր հայրը : Քը-  
 լէր գողգղալով՝ աւելի ուժով կը սխալէ Ճէ-  
 միին ձեռքը : Իսկ Ճէմիին համար սուտ զուր-  
 ցելը անկարելի ըլլալով՝ կը վարանի քանի մը  
 վայրկեան . բայց վերջապէս անծանօթը բռնա-  
 դատելով զինքը, վստահութեամբ մէյ մը երեօք  
 կը նայի ու այսպէս կը պատասխանէ : Մենք հա-



Ճեղանք քեզի ճամբադ ցուցրնելու , սակայն սա-  
 կէց աւելի վստահութիւն մի պահանջեր մեզմէ •  
 Անկարելի է որ հօրս անունը իմանաս • ինքը մի  
 միայն իւր բարեկամացը ծանօթ է • Յանդուգն  
 երիտասարդ , կը պօռայ այն ատենը որսորդը  
 բարկութեամբ • հայրդ չի կրնար պահուրտիլ  
 ինձմէ • քանի որ քու ապստամբ ընտանիքդ որն  
 ըլլալը չիմանամ , շղթաներէ ազատելիք չունիս •  
 Աղէկ գիտցիր , ինչպէս որ մեղապարտները պատ-  
 ժելը , նոյնպէս և զերենք գանելու կերպը անծա-  
 նօթ չէ ինձ •

Այս խօսքերով դուռններուն կը հասնի, Ժէս-  
 լէր անունը կարտասանէ • և զօրականները մէկէն  
 դուրս ելնելով զրահնին կը խոնարհեցնեն իւր  
 առջևը • Թող բռնեն սա երկու տղաքը , կրսէ  
 անողորմիշխանը • բանտը նետեն , ու իմ գիմացս  
 բերուի , ո՛վ որ զերենք ուղելու գայ •

Ար հնազանդին • պահապան զօրքերը կը  
 պաշարեն Քլէրն ու Ժէմին • և առանց գթա-  
 լու հասակնուն ու այն տաժանելի ճամբորդու-  
 թենէն պատճառած տկար վիճակնուն , դղեակը  
 կը տանին , և խաւարչտին բանտ մը բնակարան  
 կըլլայ իրենց •

Արկուքն ալ հանդարտ , ու գորովալից աչօք

իրարու նայելով՝ մտքերնէն շնորհակալ կըլլան  
 իրենց դահիճներէն, զիրենք իրարմէ չի բաժ-  
 նելնուն համար. առանց երկնչելու կրտասան  
 երկու տղայքը որ սոսկալի բանտերնուն հաստը  
 դռները դոցուին. կը հանգչին այն յարդին վրայ  
 որ գլխութեամբ նետեր էին. և քովերնին դըր-  
 ուած սեւ հացը ՚ի միասին կուտեն. Արկիւղն  
 ու խղճմտանքի խայթոցը՝ սրտերնուն մէջ ամե-  
 նեւին տեղի չունենալով, միմիայն ընտանիքնուն  
 կրելիք տագնապը ու եթէ Վուլիէլմոս բռնաւո-  
 լին դէմը ելնէ, իրեն սպառնացող վտանգացը  
 վրայ կը մտածեն: Ար յուսան ու կը մաղթեն որ  
 Ատմէ աւ ծերն Հանրի, զիրենք Մեւթալին  
 քով մնացած կարծեն, որպէս զի քաշած դրժ-  
 բախտութիւննուն Տանրութիւնը միայն իրենց  
 մնայ.

Արք այս երկու տղայքը ասոնց նման բարե-  
 պաշտական մտածմունքներով զբաղած՝ բանտին  
 մէջ անողոքելի բարբարոսի մը սրոյն տակ, խա-  
 ղաղ և անվրդով կը քնանային առանց աղետալի  
 երազներով սրտերնին խռովելու. և կը վայելէին  
 այն անդորրութիւնն ու հոգւոյ հանգիստը, որ ա-  
 ռաքինուիը՝ շղթայներու Տանրութիւնը տակն ան-  
 դամ կը պարգեւէ. իշխանը՝ իւր պալատին մէջ,

բազմաթիւ զօրքերով շրջապատուած , իւր բոլոր  
 քօրուքը զինեալ , և մէկ խօսքով մը իրեն ան-  
 հաճոյ երեցողին կեանքը վերցնելու կարող ըլ-  
 լայով , դարձեալ չէր կրնար քնանալ . և ամենէն  
 սոսկալի երկիւղը իւր անհանգիստ միտքը կը խը-  
 ուովէր : Տրամուծիւն , մոլեգնութիւն , և  
 շատ մը իրարու հակառակ մտածմունքներ կը  
 չարչարէին զինքը . մահը միշտ աչքին դիմաց  
 տեսնելով՝ նորանոր պատուհասներ կը հնարէր ,  
 որպէս զի վախցնէ կասկածելի եղող անձինքը . ու  
 անխնայ կատորած մը տայ իւր թշուառ կեան-  
 քը պաշտպանելու համար , մէկ խօսքով՝ արեան  
 լայն գետ մը դնէ , իւր ու մահուան մէջ տեղը .  
 Ա՛հ , ինձի դէմ միթէ որչափ սոսկալի ատելու-  
 թիւն մը կը սնուցանէ այս ժողովուրդը , կըսէր  
 հնքնիրեն . որովհետեւ տղաքնին , իրենց տկար  
 տղայքը՝ չեն կրնար ծածկել զանհիկայ ճանապար-  
 հորդէ մը , ու դիպուածով ճանչցած մէկ ան-  
 ծանօթնուն : Ինչ կըսեն ուրեմն ասոնց ծերերն  
 ու չափահասները . որչափ վախնալու եմ ես այս  
 խռովայոյզներու բազմութենէն , որոց տերուն-  
 քը՝ իմ զօրութիւնս ձեռքէս յափշտակելու յու-  
 սովն ու փափաքովը կաճի և կը բազմանայ , ու  
 անշուշտ իմ արեանս կը ծարաւին : Ա՛հ , պիտի

վանեմ անոնց հարուածները , ու ձեռքէս փախ-  
չողները անուանս սարսափովը պիտի նուաճեմ .  
նոր պատիժներ ու նորանոր միջոցներ գտնեմ  
հնարեմ , թշնամիներս որոշելու համար . ան-  
տարակոյտ եմ որ ամենքն ալ թշնամի են ինձ ,  
բայց անոնց ամենքը չեն կրնար համարձակիլ ե-  
րևան ելնելու . գոնէ ամենէն ժպիրհները առա-  
ջինը կրլան տապարիս տակը իյնալու .

Ա երջը՝ բարկութեան ու հպարտութեան  
մոլեգնութիւնը կը տիրապետէ իւր վրայ . հազար  
ու մէկ անգործադրելի գաղափարներ կը պարտ-  
ցընէ յիմարացեալ մտքին մէջ . ու որոնք որ ա-  
ւելի անձուռնի են , խելքին մօտ կերևնան . նոր  
հնարք մը կը մակարբերէ այն իրեն կասկածելի ե-  
ղող ժողովրդեան ատելութիւնը աղէկ մը երևան  
հանելու համար , կրնարէ վերջապէս սա ապուշ  
գաղափարը , որ ստիպէ Նւռիի բնակիչները ,  
իրենց անողորմ իշխանին փեղոյրին առջևը վա-  
տաբար ճակատնին խոնարհեցընելու . ՚ի զուր իւր  
կիսակորոյս դատողութիւնը կուզէ ցուցընել իրեն  
այս անտեղի ու անօգուտ հրամանէն ծագելիք  
վտանգները . ալ չուզէր դատողութեան ակամօջ  
կախել . քովը կանչել կուտայ իր բաղմաթիւ զօ-  
լայ գլխաւորները , անձկանօք կը հարցաքննէ


ու կուզէ իմանալ վարձուոր զօրաց փոյթն ու  
 յօժարամտութիւնը որ աստիճանի ըլլալը •  
 սրտին երկիւզը՝ ազահութեանը յաղթելով ,  
 դանձեր բաշխել կուտայ անոնց , և խօսքը՝ իւր  
 ամենէն մեղապարտ փափաքանացը հաւատարիմ  
 գործադիր և խորհրդապահ հրամանատարին  
 Սարնէմի ուղղելով՝ կրտէ • Այդը՝ արշալոյսէն  
 առաջ մէկ երկայն ցից մը տնկել տուր Աթոր-  
 Ֆի մէջ տեղը • առ , քեզի կը յանձնեմ իմ գլխարկս  
 ու կուզեմ որ այն ցիցին ծայրը դրուելով  
 տեսնեն ամենքը • Բազմաթիւ զօրքերս՝ թող  
 զինեալ շրջապատեն հրապարակը , ճամբաները  
 արգիլեն , ու ստիպեն անցնողները , որ երկից  
 Նահանգաց իշխանին կարողութեան նշանին  
 առջևը յարգանօք խոնարհին • փոքրիկ դիմադ-  
 րութիւնն ու մէկ թեթեւ տրտունջն անգամ  
 անսխալապէս շղթաներով պատժուի • Չեզի կը  
 թողում , բնութենէն այս գերի ըլլալու համար  
 ստեղծուած անարգ մարդոց դէմքէն , աչքերնուն ,  
 ու գծադրութենէն իմանալ , ատելութեան ,  
 ազատութեան , և մինչև քաջութեան համար  
 անգամ ունեցած գաղանի կիրքերնին • վասն զի  
 քաջութիւնը , հնազանդելու նախասահմանեալ  
 անձի մը համար ոճիր մըն է • Գացէք , կա-

տարուի հրամանա , ու թող մեր լրտեսները բան-  
տարկել տուած տղոցս յանցաւ որ ճնողքը գանե-  
լու գբաղին :

Այս ըսաւ . ու Սարնէ մ վաղեց ամեն բան պատ-  
րաստելու . Օրականները իրենցմէ պահանջը  
ւած ոճիրներուն հատուցումը կանխիկ կընդու-  
նին . Ոսկին ու գինին շռայլութեամբ կը տրուի  
իրենց . լրտեսներ կը տարածուին քաղքին մէջ  
ու շրջակաները , որպէս զի ընտանիքներու մէջ  
մտնեն , ու իբր գթութեամբ շարժեալ պատմեն  
անոնց թէ՛ ինչպէս երկու մանկունք Ժէսլերի  
խատութեանցը զոհ կըլլային . և այս լուրին ը-  
նելիք ազդեցու թիւնը՝ ժողովրդեան նայուածքին  
մէջ կարդալով՝ ճնշեն զանիկայ . մէկ խօսքով ցա-  
ւէն ու կարեկցութենէն անգամ ոճիր մը հանեն :

Բայց արդարադատն Արկինք , որ կը հսկէր  
Թէլին խրճիթին վրայ , ծածկեց զանիկայ՝ այս  
լրտեսներուն աչքէն . Բնաւ շին երթար բարի  
Ատմէին , որ կոյր ծերունւոյն հետ մինակ մնա-  
լով առանց ամուսնոյն ու որդւոյն անցուցած  
ժամերը կը համրէր . Վիշերը տազնապաւ կանց-  
նի իրենց համար . ոչ՝ տունը լուսաւորող մենա-  
ւոր կանթեղը կը մարեն , և ոչ՝ ծերն շանրի ու  
բարին Ատմէ վայրկեան մը աչքերնին կը գոցեն :

Միշտ որդիքնուն վրայ կը խօսին • Հարիւր ան-  
 գամէն աւելի իրարու խօսք կրնդ միջեն, դռանը  
 կողմէն եկած ձայնը մտիկ ընելու համար • Ան-  
 տերև ծառերուն մէջ՝ հիւսիսային հովին վըռու-  
 մը, կամ տանը բոլորափքը պտըտող հաւատա-  
 ըիմ շանը հաչելը կը ցընցէր Ատմէն • Արցատ-  
 կէր նստած տեղէն ու դուռը կը վազէր՝ ամեն  
 անգամին յուսալով ՚որ Ժէմին է • կը նայէր՝ ու  
 խաւարէն ՚ի գատ բան չէր տեսներ • ունկնդիր  
 կըլար զդուշութեամբ, ու հեղեղներու ձայնէն  
 ՚ի գատ բան չէր լսէր • Տխուր տրտում կը գառ-  
 նար շուարեալ ծերունւոյն քով, իւր անձկու-  
 թիւնն ու երկիւղը ծածկելու ջանալով • Տղադ  
 վար դրած ըլլալու է զիրենք՝ կըսէր հառաջելով •  
 ննջէ՛ ննջէ՛, ո՛վ բարիդ ծերունի ես արթուն եմ,  
 մինչև առտու • Այն դուստր իմ կը պատասխա-  
 նէր Հանրի, տղաս արգիլած ըլլալու է զանոնք •  
 ես կը քնանամ, իմ վրաս մի՛ մտածեր, ու հան-  
 դարտէ դուն ալ • Ասանկով՝ ծերունին հան-  
 դարտ ու քնացած կը ձեւանար, որպէս զի Ատ-  
 մէն չի տառապի • երկուքն ալ կը լռէին իրար խա-  
 բելու մտօք, երկուքն ալ կը ծածկէին արցունք-  
 նին • բայց ամենափոքր ձայն մ՛անգամ՝ եր-  
 կուքը մէկէն վեր կը ցատկեցնէր, ու յոյսերնին  
 պարապը կեւէր միշտ •



Նոյն ատենը թէլ, արշալուսէն առաջ  
 Շուկի պարսպացը հասեր էր. Աերթայ Ալեր-  
 նէրին դուռը կը զարնէ, գաւթին մէջ հսկող  
 Գամփուերը\* հաչիւններով օդը կը հնչեցընեն.  
 Ահանդիստն Ալերնէր, որ արդէն խանձոտեալ  
 փայտի մը դիմաց՝ ոտքի վրայ կեցած էր, փու-  
 թալով դռանը կը մօտենայ, բարեկամին ձայնը  
 լսածին պէս կը բանայ՝ կը համբուրէ զինքը, ու  
 կը տանի կրակարանին քով. և այն սպառնացող  
 Գամփուերը, իրենց տիրոջը հաւատարիմ բարե-  
 կամը ճանչնալով՝ կը շոյեն կը շրջապածուն զա-  
 նիկայ, ու ահագին գլուխներնին Գուլիէլմոսի  
 բրտացեալ ձեռացը տակ կը ծածկեն.

Բարեկամ, կըսէ գիւցազնը Ալերնէրին,  
 ահա՛ հասաւ վերջապէս այն ժամանակը, որ

---

\*Գամփու. մեծ շուն. սամսուն



կամ հայրենիքնիս պիտի ապատէ, և կամ այս  
անարդ կեանքերնիս վերջացնէ. Այս անգամ  
քու խոհեմ ու խնաստուն խորհրդոցդ տեղեկա-  
նալու չեմ եկած. ձայն կուտամ քաջութեանդ,  
ու զէնքեր կը բերեմ քեզի. Խորհուրդ պէտք  
չէ ալ, գործադրութեան նայինք. վասն զի Ես-  
լէրի նորանոր ոճիւնները վերջին նշանը տուին  
մեզ.

Այս խօսքերով, Ալեքնէրին առջևը, նիզակ-  
ներու, աղեղներու, սրահատ դաշոյններու ու  
բաղիստրներու ծանր խուրձ\* մը կը դնէ,  
զորն որ ուսը առած բերեր էր. Ալեքնէր  
հանդարտ ուրախութեամբ մը կը նայի անոնց  
վրայ. Տասճներդ մտիկ ընէլէս առաջ կը պա-  
տասխանէ, տանինք սա թանկագին գանձը գաղտ-  
նի տեղ մը պահենք. կրնայ ըլլալ որ բռնուինք  
հոս. վասն զի բռնաւորաց ձեռքին տակ ընկճեալ  
քաղաքացին՝ ասպահով տուն տեղ չի կրնար ունե-  
նալ.

Վոյն ատենը երկուքը մէկտեղ կը վերցընեն  
զէնքերը, ու ստորերկրեայ տեղ մը պահելով՝  
դարձեալ կուգան կը նստին կրահանանին քով.

\* խուրձ. տէմէթ

Գուլիէլմոս՝ կը պատմէ իշխանին բարբարոսութիւնը, Տերուհի Հանրիին գլխուն եկած դրժբաղգութիւնը, անոր որդւոյն Մելքթալին փախուստը, և երիտասարդ Ժէմիին ճանապարհորդութիւնը որպէս զի երթայ իմացընէ իրեն այս ժամուս, որ երեկոյին Արիւթի գտնուի անպատճառ, իրենց վրէժխնդրութիւնը ապահովցընելու համար. Աւերնէր ունկնդիր կըլլայ մրտադրութեամբ, ու կրկնել կուտայ անոր, իւր բարձր խորհրդոց մանրամասն պարագաները. կը կշռէ, կը քննէ զանոնք իրեն հետ, կը հակաճառէ այն արդելքներուն վրայ՝ որ կարելի է թէ գիմացնին ելնէ. ու գոհ ըլլալով Թէլին պատասխաններէն, որ ամեն բան նախատեսեր ու ամեն մէկ հարցմանը ըստ արժանւոյն կը պատասխանէր. կը գրկէ զինքը սա խօսքերն ըսելով. Տարեկամ, սկսինք, պատրաստ եմ ես.

Մէկէն կը սկսին՝ զատ զատ ու իրարու հակառակ ճամբաներէ իրենց իբրև աւանդ պահած զէնքերը, Եւ իցի շրջակայ գիւղերը ունեցած բարեկամներնուն տանիլ. միջոց մը կուտան՝ բռնաւորութեան թշնամի եղողներուն ձեռքը, որ կարենան զանիկայ ջնջել ու վրէժնին առնելու. Փառք կուտան միգամած օդին ու ձիւնին, որ

առատ առատ իջնալով՝ կը խաւարեցընէր ցո-  
 րեկուան լոյսը, ու անապատ կը դարձընէր՝  
 իրենց անց ու դարձ ըրած ճամբաները: Հա-  
 թիւր անգամէն աւելի կերթան կուգան զէնքերը  
 բաժնելու համար, որոնցմէ մէյմէկ հատէն ա-  
 ւելի տանելու չեն համարձակիր: ամբողջ տասն  
 երկու ժամ կը տուէ՝ այս կարևոր բաժանումը:  
 կը քաջալերեն ու կը վառեն ամեն մէկ զինած  
 անձինքնուն սիրտը: Երգումն կառնեն իրմէ՝  
 Աստուծոյ վրայ: Ժէսլէրի վերջին ոճրոյն կը  
 տեղեկացընեն զինքը, վրէժխնդրութեան կը  
 գրգռեն, ու ճառերնուն փոփոխութիւն տա-  
 լու և ազատութիւնը անհրաժեշտ պարտք մը  
 ըլլալուն նորանոր փաստեր գտնելու համար, նոր  
 ձայն մը և նոր զօրութիւններ չի պակասեր իրենց:  
 Այս զբաղմունքներով երեկոյ էր. եղեր, բոլոր  
 զէնքերը բաժնուեր էին: Գուլիէլմոս միսիայն  
 իւր աղեղը կը՝ պահէ, Ալէրնէր նիզակ մը վար  
 կը դնէ: Արկուքն ալ վերջին աստիճանի հոգնած՝  
 Ալէրնէրի տունը կը մտնեն, քիչ մը սնունդ  
 կառնեն, տկարացեալ ոյժերնին կը նորոգի, և  
 առանց վայրկեան մը հանգիստ առնելու, ճամ-  
 բայ կելլեն դէպ ՚ի Արիւթիի քարայրը՝ որպէս  
 զի ժամանակ չի կորսնցընեն, և Սելքիթալի հետ

եղած ժամադրութեանը հասնին .

Ար յառաջանան այն ձիւներուն մէջէն որ հիւսիսային հովը՝ իրենց չորս կողմը կը դիզէր , կը հասնին լճին եզերքը , մութ տեղը նաւակ մը կը բնտուեն , վերջապէս ամուր կապերով կապուած փոքր մակոյկ մը կը գտնեն , զորն որ հիւսիսէն զայրացած բուն ալիքները , շարունակ եզերքին կը զարնէին . Աւերնէր՝ լիճը այնպէս սաստկացեալ տեսնելով , կը կայնի ու կը հարցրնէ Պուլիէլմոսին որ՝ միթէ՞ թիավարութեան արուեստին մէջ իւր անուանի եղող յաջողակութիւնը , կարող է մրրկին դէմ դնելու . Մեյքթայ կըսպասէ մեզի , կը պատասխանէ Պուլիէլմոս , ու մեր հայրենեաց բաղդը՝ անոր հերնելիք խորհուրդնուս կը կախուի . Ինչպէս կը համարձակիս՝ լճին անդիի կողմը անցնելու կարողութեանս վրայ հարցմունք ընել , Անճանօթ է ինձ՝ զործքին կարելի ըլլալը , բայց սա գիտեմ միայն՝ որ պէտք է անցնինք . Արհեստիս վրայ չէ որ կը վստահիմ , այլ երկնից Աստուծոյն որ կը հսկէ անմեղ հողւոց վրայ ու ազատասէրները կը պաշտպանէ .

Արսէ , ու կը ցատկէ մակոյկին մէջ . Աւերնէր՝ ինքզինքը անոր ետեւէն կը նետէ . Թէլ կը

կորէ կապանքը , կանցնի նաւավարին տեղը , ու  
մէկէն կը հեռանայ եղերքէն , Յայց՝ կամ զխա-  
ուածով և կամ թէ ամենակարողն Աստուած , որ  
Պուլիէլմոս օգնուե կը կանչէր մտքէն , կը հսկէր  
Օուլիցերիոյ ազատիչներուն վրայ , հովը կիջնայ  
մէկէն , ալիքները կը հանգարտին , խաղաղ ջուրը  
կսկսի տանիլ՝ Թէլին մակոյկը , որն որ թիակ-  
ները ձեռքը առած նեախ մը արագութեամբը  
կը յառաջացընէր զանիկայ , Քիչ տտենի մէջ  
կանցնի լիճը , միւս կողմը կը հասնի , կիջնայ  
կը կապէ մակոյկը , ու երկու բարեկամները՝ այն  
իրենց շատոնցու ընէ ծանօթ քարայրը կերթան :

Մելքիթալ , այրին բերանը կեցած կըսպասէր  
անոնց : Թէլը տեսածին պէս , գիրկը կը նետուի ,  
կը սխմէ ու արտասունքներով կը թրջէ զինքը ,  
և հառաչանօք կարտասանէ , հօրը ու բարեկա-  
մին անունները : իրար կը խառնէ այս ամենասի-  
րելի անուանքը , ու հագիւ կը զսպէ՝ զինքը ճրն-  
շող այն շատ մը զգացմունքները : Պուլիէլմոս  
կուլայ իրեն հետ , սխմելով կը բռնէ ձեռքէն կը  
տանի քարայրին խորը , ու հոն՝ անթափանց մը  
թութեան մը մէջ երեք բարեկամները ժայռե-  
րու վրայ նստած , իրենց անձնական օգուտն  
ու ցաւերը մէկ կողմ թողլով , հայրենիքունն

օգտին ու բախտին վրայ կսկսին մտածել: Թեւ  
այսպէս խօսք կը բանայ:

Մելքթայ, հայրդ ողջ է, հայրդ խմ տունս  
է. թող անկասկած ըլլայ գուժդ, ու որդիա-  
կան սէրդ լուէ՝ հայրենեաց խնդրոյն առջև:  
Մեր հայրենի երկրին անկախութիւնը ձեռք  
ձգելու ապահովագոյն և դիւրագոյն միջոցները  
բնտուենք գտնենք, ազատենք զանիկայ. այն  
անիրաւութեց, բարբարոսութեանց ու կատա-  
ղութեանց վրէժը առնենք, որոնցմով երկար ա-  
տեն է որ կը ճնշուի: Մեն մէկերնուս նա-  
հանգին բնակիչները, մեր վրայ մեծ յարգ, սէր  
ու վստահութիւն ունին: Շուիցի քաջերը՝  
Ալերնէրի ձայնովը ոտք պիտի ելնեն. միմիայն  
զէնքի կարօտութիւն ունէին, այսօր Ալերնէր  
ու ես այս պակասութիւննին լցուցինք, ահա՛ սա  
զէնքերը՝ մեր Շուիցի բարեկամացը բաժնած-  
ներնուս հետ, մեզի երկու հարիւր զօրական  
կը խոստանան, որոց հրամանատարն է Ալերնէր:  
Խոստմունք ու երդումն առած եմք իրենցմէ,  
և մենք մեր վրայ ունեցած վստահութիւնը ա-  
նոնց վրայ ալ կրնանք ունենալ:

Իւռիի և Մթորֆի պարսպին մէջ աւելի  
դժուար եղաւ ինձի ընկեր գտնելը. փոսն զի

բունաւ որին ներկայութիւնը պատճառաւ, սոսկու մը  
 չափազանց արմատանալու վրայ է հոն, ու կարծես  
 թէ նոր կառուցանել տուած բերդը յաւիտենա-  
 կան ապահովութիւն մը կուտայ իւր զօրութեա-  
 նը: Ամենուն սիրտը ազատութեան սիրով կը  
 տոչորի, բայց Վեսլերին բազմաթիւ թիկնապահ-  
 ները, այն վատ լրտեսներն՝ աւելի մեծ խնամ-  
 քով մը կը հսկեն անդ, այս սուրբ հրոյն մէկա-  
 մենափոքր կայծն անգամ գտնել ու պատժելու  
 համար: Այլթորֆի ժողովրդեանը վրայ դեռ չեմ  
 կրնար վստահիլ, տիրապետական խարազանին տակ  
 կը դողան ու կը հեծեն. կը տեսնեն միշտ որ աչ-  
 քը իշխանին դարձնողը՝ կացինով կը պատժուի:  
 Այլթորֆի ժողովուրդը չի պիտի յանդգնի անոր  
 դէմ յարձակելու, բայց զանիկայ չի պիտի պաշտ-  
 պանէ ալ: Պէտք է որ դրաւենք Այլթորֆը:  
 Անոր շրջակայ գեղերը՝ ինձի հետ մեռնելու  
 պատրաստ հարիւր ընկեր գտայ. քաջ ու զինեալ  
 են ամենքն ալ, իմ ձեռքէս եկած նուէրը ահա  
 այսչափ է: Խօսէ՛ Մելքթալ, պատմէ մեզի,  
 քու Ունտերվոլտի մէջ բրածներդ, և անդարձ  
 կերպիւ որոշենք՝ այն ժամը այն վայրկեանը, որ  
 մեր բոլոր զօրութիւնը գումարելով՝ պիտի եր-  
 թանք, մեռնելու կամ ազատութիւննիս ձեռք  
 ձգելու:

Տարեկամ, կը պօռայ Մելքիթայ բարձր  
 ձայնով, ես առանց ամենևին ձեր այդ 'իպատ-  
 րաստի ունեցած զօրութիւնը գիտնալու, գործ-  
 քին յաջողելուն անտարակոյս էի: Հարիւր յի-  
 սուն քաջամարտիկ երիտասարդներ, արդէն  
 պատրաստ են Աւետիլոյտի մէջ. դեռ այսօր  
 տեսայ զիրենք ամենն շ. և զիս հրամանատար  
 ընտրեցին. առ հասարակ ամենքը՝ պատերազ-  
 մելու եռանդով վառեալ են: Տարեկամք, վայր-  
 կեան մը անգամ չի կորսնցնենք, այս գիշերու ընէ  
 Ալթորֆի ամրութեանց տակը երթանք, մեր  
 քաջամարտիկ ընկերները նոյն խակ քաղաքին մէջ  
 տեղը գումարենք. յանկարծ յարձակինք բեր-  
 դին վրայ. և ժողովուրդը կը հետևի մեզի.  
 պատժենք իշխանը, կուզեմ որ անոր աչուրները  
 փորուի՝ ուր որ իմ հօրս... բայց ինչ կըսեմ,  
 ներեցէք ինձի պէս ամենաթշուառ որդւոյ մը.  
 ըսել կուզեմ որ՝ առանց գիշերուան մթութեա-  
 նըն ու չորս կողմը ծածկող ձիւնին նայելու, որն  
 որ դժուարանցանելի ըրած է ճամբաները. վա-  
 դը՝ արշալոյսէն առաջ Ալթորֆի հրապարակին  
 մէջ ըլլանք, և նոյն հետայն պատերազմ բանա-  
 լով կամ միջնաբերդին տիրենք և կամ ամենքնիս  
 մէկտեղ մեռնինք:



Այն, կը մեռնէինք, հանդարտ ձայնով մը  
 պատասխանեց Ալեքնէր, ու այս մահը թէպէտ  
 և վառաւոր, բայց ազարդիւն պիտի ըլլայ մեր  
 երկրին համար: Չիլեցիր ուրեմն Մելքթայ,  
 Գուլիէլմոսին մեղի ըսածը: Իւստի մէջիւր ու  
 նեցած հարիւր բարեկամները՝ որոյ վրայ ինքը  
 վստահ է, շրջակայ գեղերը տարածուած են, ա  
 տեն պէտք է զանոնք գումարելու համար, և չորս  
 հազար հոգւով թիկնապահներու խումբ մը,  
 բանաւորին բոլորովը պատրաստ կրպակներն  
 միշտ: Ալթորթի ժողովուրդը՝ որ Ժէսլէրի և  
 իւր պահապան գորացն ու բանակին ներկայու  
 թեամբը ընկճեալ կը հեծէ, երբէք չի պիտի  
 համարձակի մեղի հետ միանալու: Մեր տկար  
 խումբերը՝ խառն ՚ի խառն իրարու ետեւէ հաս  
 նելով, չի պիտի կարենան քաղաքին մուտքը ձեռք  
 ձգել, ու պատնէշներուն տակը պիտի ցրուին  
 կորսուին: Արեք նահանգները՝ Ժէսլէրի գո  
 րու թեամբ գէմ դնելու համար խիստ տկար են:  
 վասն զի Այստերու թիւնն է իւր վահանն ու սպա  
 շէնը, և ձեռքին տակը շատ մը ամբուլթիւններ  
 ունի: որոյ պաշարու մը որչափ շուտ ալ դորձա  
 գրենք, դարձեալ բաւական ատեն կրնայ մնալ  
 Գերմանիոյ՝ որ մեր բոլոր ժողովուրդէն աւելի

բազմաթիւ զօրաց խումբեր յարուցանէ մեզի գէմ : Աստահ եղիւր վարձառութեանս : Չեռնարկութիւն մը չըլլած՝ պէտք է որ մեծ օգնութիւններով ապահովցնենք ինքզինքնիս : Կարծես թէ միմիայն մենք ենք՝ ազատութեան սիրով վառուած : մի՞թէ Յուրիք , Առչէրնա , և Օլիք , Քլարիս ու Վրինցել լեռներուն բընակիչները ինքզինքնին շղթայներով պաշարուած անտնեղնուն վրայ՝ սրտերնին չէ վողոված : Մի տարակուսիլ բնաւ , այս արի ժողովուրդը՝ ազատութեան ծարաւով կը տոչորի : օր մը՝ հողիկ կը վկայէ , մեզի հետ մէկ մարմին պիտի ըլլան , ու այնպիսի հասարակապետութիւն մը կազմեն՝ որ բոլոր աշխարհի թագաւորներուն զարհուրելի ու յարդի ըլլայ : Յառաջանանք , ասեն է յաղթութեան , Առչէրնա , Օլիք , ու Յուրիք ապահով գեոպաններ խրկենք , որպէս զի մեզի հետ միաբանին : օր մը որոշենք , սուրբ օր մը ըլլայ այն , ու մէկ ժամուան մը մէջ՝ բոլոր Օուիցերի գանուող ազատութեան բարեկամները , յանկարծ իրենց բռնաւորացը վրայ յարձակին : Աոյն ժամանակը մենք երևան կելենք , ու Վրթորթի ժողովուրդն ալ սիրտ կտանէ : իշխանը՝ զինեալ ժողովուրդէն պա-

շարուած տեսնելով ինքզինքը, կը շուարի կը մը-  
նայ. իւր պատգամաւորները՝ ամեն կողմանէ  
կարգելուին. ու անոր վտանգի մէջ ըլլալուն  
գոյժը կայսեր հասնելէն առաջ, ինքը կը ճըն-  
շուի մեր գօրութեանը տակ:

Ա, էրնէր կը լռէ, ու Մեղքթալ կը մըմնայ.  
Մեղքթալ կուզէ Ա, էրնէրին դէմ խօսիլ. սա-  
կայն Գուլիէլմոս խօսքը կառնէ, և երկուքն ալ  
անձայն ունկնդիր կըլլան. Քու համարձա-  
կութիւնդ կը սիրեմ կըսէ Մեղքթալին, կը նե-  
րեմ քու բորբոքեալ եռանդիդ բայց աղետալի  
կըլլայ մեզ. Ար պատուեմ քու խոհեմութիւնդ  
Ա, էրնէր, սակայն ան ալ կլնայ վտանգաւոր ըլ-  
լալ. Ա, այն դաշնակցութեանը, որ ժամա-  
նակի կարօտ է. ու գաղանխքը՝ սակաւաթիւ  
հաւատարիմ սրտերու մէջ ամփոփուած չէ. մի-  
ակ սխալմունք մը, մէկ խօսք մը, ամենաթեթե-  
պարագաներ՝ կրնան տակն ու վրայ ընել շատ  
տարիներու աշխատանքը. Թէ որ քու մեզի հետ  
ընկերացնելու համար առաջարկած այնչափ բազ-  
մաթիւ քաղաքացի մէջ՝ մէկ մատնիչ մը գտնուի,  
բաւական է հայրենիքնիս շղթայակապ ընելով՝  
անոր արժանադոյն զաւակաց ընտիրները՝ չարա-  
տանջ կորսնցնելու. Չէ, մէկու մը չի վստա-

հինք մեր վեհ, ու վսեմ խորհուրդները: Ար-  
յուսամ որ բաւական եմք, ազատութեան հիմ-  
նադիր ըլլալու համար, և երբ մէյսը Վւռի,  
Շուից և Աւստրիոյն ազատութեան դրօշակը  
լեռներուն գագաթը բարձրացնեն, մենք՝ կամ  
մեր որդիքը պիտի տեսնեն, որ միւս նահանգաց  
բնակիչները դալով պիտի պատերազմին այն դրօ-  
շին տակ և կամ անոր հովանին իրենց հանգըս-  
տարան պիտի ընտրեն:

Աւերակէր՝ ատեն է ոտք ելնելու, բայց Մելք-  
թալ, դեռ քանի մը օր ալ կուզեմ քեզմէ: Ա-  
հա յայտնեմ ձեզ իմ խորհուրդներս:

Աւստրիոյն և Շուից զինեալ են: Այս  
երկու ընտիր նահանգաց մէջ՝ երեք հարիւր յի-  
սուն պատերազմող պատրաստ ունինք կրսէք,  
ձեզի հետեւելու: Երկ մը որոշեցէք իրենց, բայց  
չէ թէ քաղաք մը, գիւղ մը, այլ դաշտ մը, անա-  
պատ մը որ տարբեր ճամբաներէ հոն ժողովուելով  
կարենան միահամուռ յառաջ խաղալ: Բանի որ  
դուք ասով կրցբաղիք, ես Վւռի կը դառնամ,  
ու քաջ Փուրսդին հետ միանալով վասն զի ին-  
քն է միայն իմ խորհրդոցս տեղեակ, կը ժող-  
ուեմ, եթէ կարելի է, այն հարիւրի չափ ան-  
ձինքը, զորոնք բռնութեան դէմ ունեցած ատե-

լուծիւններնէն արժան գատեցի մեզի հետ պա-  
տերազմելու : Քաջն Փուրսդ պիտի երթայ  
Մատրանի և Ուրարէնի մէջ մինչև այն բարձր  
լեռներուն վրայ բնտուէ զերենք , ուսկից կը գա-  
համիժին Այար , Թէսէն , Հուէնոս և Հուողա-  
նոս գետերը : Այս մինակ կը մնամ Ալթորֆի մէջ .  
և Փուրսդ , լրտես մը խրկելով պիտի խմացնէ  
ինձ իւր բանակին որ կողմ երթալիքը : Այս լու-  
րին վրայ կրակ կուտամ տանս քովի լեռան գա-  
գաթը արդէն իմ ձեռքովս զիզուած մեծ փայ-  
տակուտին : Այն բոցը տեսածնուդ պէս , դուք ,  
Ալէրնէր և Մելքիթալ ճամբայ ելիք ձեր ըն-  
կերակցացը հետ մէկտեղ՝ դէպ 'ի գումարման  
տեղին : Ամենքնիդ ժողովուածնուդ պէս՝ հոնկէց  
մէկէն Ալթորֆի վրայ քալեցէք : Այս պէտք ե-  
ղած ժամանակն ու հեռաւորութիւնները չա-  
փեր եմ : Փուրսդ Իւռիի , Ալէրնէր Շուի-  
ցի և Մելքիթալ Ունտէրվոյտի քաջերովս՝ կրը-  
նաք , գրեթէ մի և նոյն ժամուն , քաղաքին հա-  
րաւային , հիւսիսային և արևելեան կողմերը  
հասնիլ : Հոն պիտի ըլլամ ես , ընտիր բարե-  
կամք իմ , հոն միայնակ՝ ժողովուղեան մէջ ձայ-  
նիւ ու ջանիւք զանոնք ազատութեան պիտի  
հրաւիրեմ : Յերանս այն սուրբ ձայնը պիտի

Հնչեցնէ իբրև նշան պատերազմական . Արտասա-  
 նեցէք զայն քաղքէն ձեր ներս մտած ատենը .  
 Ժողովուրդը՝ Անտերվորտի , Շուիցի և Իւ-  
 ուիի բնակիչները միաբան իրեն օգնութեան զա-  
 լուն լուրը առնելով ու տեսնելով , զարմացմամբ  
 նոյն միջոցին ամենքը մէկէն ատելութենէ ՚ի  
 զատ բանի մը ունկնդիր չեն ըլլար . և իրենց  
 Ժէսլէրի դէմ ունեցած կատաղութենէն մրդ-  
 եայ՝ զուենգազունդ կուգան կը խառնուին ձեր  
 հուժկու բանակներուն մէջ . Աէտք է բերդին  
 վրայ յարձակինք նախ . ո՛ւր , ապշեալ և շուար-  
 եալ բռնաւորը , չի կրնար երկայն դիմադրու-  
 թիւն ընել մեզի . Բիչ մը ետքը կը տեսնէք  
 մեր դրօշակաց այն սոսկալի որակերուն վրայ ծա-  
 ծանիլը . և բոլոր Օւիցերի , այս առաջին  
 յաղթանակէն սրտայոյզ , մեր յառաջիկայ պա-  
 տերազմացը ընկերանալու պատիւը՝ պիտի գայ  
 ու խնդրէ մեզմէ .

Արսէ , ու Սելքթալ գիրկը կը նետուի և  
 ուրախութեան արտասունքներով կը ցօղէ՝ դիւ-  
 ցազնը . Նոյն իսկ Աէրնէր ալ կը համոզուի  
 ու կրնդունի անոր կարծիքը . Արեք ազատարար-  
 ները՝ առանց նորանոր երդմամբ իրարու հետ  
 կապուելու , որն որ բոլորովին աւելորդ էր ի-

րենց մեծանձնու թեանը , կը բաժնուին իրարմէ ,  
 վերստին խօսք դնելով՝ որ Գուլիէլմոս կրակէ  
 նշանը չի տուած ճամբայ չեղնեն : Մեւքթալ  
 Մթանց կը դառնայ՝ բարեկամացը հետ սլառ-  
 րաստութիւն տեսնելու : Աւերնէր ու թօնէլ ալ  
 մահոյ կը դառնան , խաղաղացեալ լծին միւս  
 կողմը կանցնին , և եղբրքը ելնելով՝ Աւերնէր  
 Շուիցի ճամբան կը բռնէ , Գուլիէլմոս ալ  
 Ալթորֆի :

Առանց եղբրքէն հեռանալու , կսկսի առաջ  
 քալել . կը մտածէ որ Աամէին չի գացած՝ երթայ  
 իւր Ալթորֆի բարեկամները տեսնէ , ու այն  
 փետ խորհրդոցը տեղեկացնէ զիրենք : Քա-  
 ղաքը մտած ատենը , արդէն արևուն ճառա-  
 գայթները ամեն կողմ տարածուեր էր : Մինչև  
 հրապարակը կը յառաջանայ , իւր աչքին՝ զար-  
 նոզ առաջին առարկայն երկայն ցից մը կը լայ ,  
 որուն ծայրը բարձրացած էր ոսկեհիւս թան-  
 կազին փեղոյր մը : Այս ցիցին բոլորտիքը , բազ-  
 մաթիւ գորականներ լուռ ու անձայն կը սլոր-  
 տէին , և կարծես թէ տիրապետական նոր նը-  
 շանը կը պահպանէին յարգանօք : Գուլիէլմոս  
 զարմանալով կը յառաջանայ , քիչ մը անդին կը  
 տեսնէ որ Ալթորֆի ժողովուրդը այն փեղոյրին

ու ցիցին առջևը նուաաստարար կը խոնարհէր .  
 ու զինեալ թիկնապահներ նիզակնուն ծայրի եր-  
 կաթովը՝ աւելի կը խոնարհեցընէին , գեանամած  
 ճակատները : Թէ՛լ՝ օրտմաութիւնը հաղիւ զըս-  
 պելով , կանգ կառնէ այս տեսարանին առջևը ,  
 չի կրնար հաւատալ աչացը , և իւր մեծ աղեղա-  
 նը վրայ կռթնած՝ այս վատ ժողովուրդն ու ա-  
 նարգ զօրականները դիտելով , անշարժ անբար-  
 բառ կը կենայ :

Սարնէմ կիշխէր այս պահապան խումբին .  
 Սարնէմ , որուն գազանային եռանդը կուղէր  
 ընդունած հրամաններն ալ գերազանցել , տեսաւ  
 մէկէն այն մարդը՝ որ երկրպագու ժողովուրդեան  
 մը մէջ տեղը , գոռոզարար հպարտ գլուխ մը կը  
 բարձրացընէ . կը դիմէ անոր քով , ու հրացայտ աչօք  
 զինքը քննելով . 'Ղողա՛ , կրտէ՛՝ ո՞րք և իցես , որ  
 չի պատժեմ զքեզ՝ Թէսլէրի հրամանացը հնա-  
 ղանդելու դանդաղութիւն ընելուդ : Մի՞թէ չի  
 գիտես նոր հրատարակուած օրէնքը , որ կտաի-  
 պէ բոլոր Ալթորֆի բնակիչները , այս իշխանու-  
 թեան նշանին առջևը յարգանօք խոնարհելու :  
 Չէի գիտեր կը պատասխանէ Ղուլիէլմոս , և  
 չէի կրնար մտածել ամենեւին որ գերագոյն իշ-  
 խանութեան արբեցութիւնը՝ բռնաւորութեան



ու յիմարութեան այս աստիճանին՝ կարենայ  
 հասնիլ . Սահայն արդարացեալ է ինքր , այս ժո-  
 ղովոյեան կնամարդի բարութք . Ար ներեմ ու ]  
 իրաւունք կուտամ Ժէսլէրին , պէտք է որ մեզի  
 հետ գերիի պէս վարուի . ամեն տեսակ անար-  
 գանք քիչ է՝ այսպիսի նուաստ հաճոյից հնա-  
 զանդիլը յանձն առնող ժողովուրդ մը արհա-  
 մարելու համար : Իսկ ես՝ ճակատս միմի-  
 այն բարձրելոյն Աստուծոյ առջեւը կը խոնար-  
 հեցընեմ : Յանդուգն , կը պատասխանէ Սար-  
 նէմ . քու այդչափ ժպրհուլթիւնդ անպատիժ  
 չի պիտի մնայ . Տնրադրէ , որ զինաթափ ըլլայ  
 զքեզ պատժող ձեռքը . Աս իմ ձեռօքս ինքզին-  
 քըս կը պատժէի , կըսէ Թէլ անոր նայելով՝ ե-  
 թէ կարող ըլլայի քեզի հնազանդելու :

Այս խօսքիս վրայ , անգութն Սարնէմ նը-  
 շան մը տալով՝ շատ մը թիկնապահներ մէկէն  
 Ղուլիէլմոսի վրայ կը նետուին : Աղեղն ու կա-  
 պարճքը կառնեն ձեռքէն . Փայլուն կացիներ-  
 նին դէպ ՚ի սիրտը ուղղելով կը պաշարեն  
 զինքր և քաշկռտելով իշխանին պալատը կը  
 տանին :

Իսկ Ղուլիէլմոս զօրաց մէջ տեղը հանդարտ  
 կենալով , և առանց ունկնդիր ըլլալու անոնց

վայրենի սպառնալեացը, թե երբ կուրծքին վրայ  
հաստատած՝ կը ներկայանայ բռնաւորին առ-  
ջեւը: Արհամարհոտ աչօք կը դիտէ զանիկայ, ու  
առանց զինքը ամբաստանողին խօսքը ընդմիջե-  
լու կը թողու որ ուզածը ըսէ. և անխռով լը-  
ռու թեամբ կը սպասէ Ժէսլէրի հարցափորձին:

Իւր խաղաղ կերպարանքն, ճակատն ու  
դէմքը կապշեցնեն իշխանը: Ահամայ երկիւղիւ  
և գաղտնի նախագուշակու թեամբ մը կզգայ՝ որ  
այս էր այն անձը, ուսկից իւր ոճիրները ար-  
դար պատուհասնին պիտի ընդունէին: Ար վախ-  
նայ շարունակ անոր նայելու. խօսք մը հարցնե-  
լու կը վարանի. վերջապէս այլայլեալ ձայնով մը  
կըսէ. ի՞նչ բան կըրցաւ առիթ տալ քեզ՝ իմ  
հրամանացս անհնազանդելու, և իմ կարողու-  
թեանս որ և իցէ նշանը մերժելու, դուն որ կը  
պարտիս յարգել ու մեծարել զիս: Խօսէ, պաշտ-  
պանէ՛ ինքզինքդ. կրնամ ներել: Այս խօսքին  
վրայ, Թէլ՝ դառն ժպիտով մը անոր կը նայի.  
պատժէ զիս կը պատասխանէ. և մի հարցներ  
մտածմունքս: Իրաւունքը երբէք չես լսած, և  
անհանդուրժելի է սրտիդ: Քու բերնէդ կու-  
զեմ լսել զայն. կուզեմ որ դուն տեղեկացնես  
զիս՝ իմ պարտուցս ու յանցանացս: Բռնաւոր-

ներն հրահանգող չեմ ես . սակայն իրենց ներկայութենէն զզացած ատելութիւնս , սրտիս քաջութիւնը չի տակսեցնէր բնաւ . Ար յիշեցընեմ անոնց՝ գործած ոճիրնին , և կը նախագուշակեմ իրենց ճակատագիրը : Ասէ՛ ուրեմն յիշէր , որովհետեւ յանձն առիր ունկնդիր ըլլալինձ :

Այլ չափը եկաւ լեցաւ . այն դառնութեանց բաժակը՝ որ երկինք մեզի դէմ բարկանալով քու ձեռքդ էր յանձնած , ամեն կողմէն կը յորդէ : Ատուած քու ձեռքովդ իւր ցաաման բոլոր նետերը թափեց մեր դիտուն վրայ . իւր արդարութիւնը մօտ է զքեզ զարնելու : Մտիկ ըրէ խաւար բանտերու մէջ արգիլեալ անմեղներուն ողբը . լսէ այն տղոց ու այրիներուն աղաղակը , որոնք քու հրամանաւդ տանջանայ մէջ կորուսեալ փեսերնին ու հայրերնին քեզմէ կը պահանջեն : Տես , անոնց արիւնաշաղախ ստուերները , որ բնակարանիդ բոլորտիքը կը թափառին . քունիդ մէջ քեզի հետամուտ են , ու դիմացդ կը ներկայանան՝ որպէս զի անբուժելի վէրքերնին և չարատանջ ու դողդոջուն մարմիննին ցուցնեն : Չեռքերուդ վրայ ցայտող անոնց անմեղ արիւնը յանկարծ կարթնցնէ զքեզ . գիշերուան աղջա-

մուղջն անդամ այն արիւնը չի ծածկէր քու տե-  
սութենէդ . կը տեսնես՝ և աչքերդ ունայն տե-  
ղը կը գոցուին զանիկայ աներևոյթ ընելու հա-  
մար : Իսկ սակաւաթիւ ողջ մնացողները՝ իրենց  
ժառանգութիւնը , հարստութիւնն ու աշխա-  
տանքնուն պտուղը՝ թողլով քու անյադ ազա-  
հութեանդ , կը փախչին կերթան անտառներուն  
խորը , ժայռերուն խռոչը պահուրանելու : Ըն-  
ի՞նչ կրնէ այս ահաբեկ ժողովուրդը , որուն հա-  
մար քու անունդ աւելի սոսկումն կը պատճառէ ,  
քան զայն բարձրաբերձ լեռներէն լջող ձիւնի  
շրջակոյտները՝ որ ատեն ատեն մեր գեղերը տակն  
ու վրայ կրնեն : Ի՞նչ կրնէ : Ժայռերուն վրայ  
ծունր դնելով՝ առ Աստուած կը բարձրացնէ  
ձեռքերը՝ ու վրէժխնդրութիւն կը պահանջէ .  
կը պաղատի Ամենապաշտօն , որ բնաջինջ ընէ մար-  
դախոշոշ բռնաւորը : Գիտնաս ուրեմն Եւայէր ,  
այս ամբողջ ժողովուրդեան պաղատանքը . քու հը-  
րամանաւդ չարչարեալ , կողոպտեալ , հարստա-  
հար և կենազրաւ անմեղներուն ողբն ու կոծը ,  
այն արիւնը որ ձեռքովդ կը թափուի անդադար ,  
և որուն թանձրամած շոգին ամազ մը կը ձեւա-  
նայ բոլորտիքդ , մինչև յերկինս բարձրացած է .  
մեր մշտամուռնջ ձայնը մինչև Ամենապարտողին

գահը հասած է, իւր արդար բարկու թիւնը քիչ  
 ատենէն պիտի զարնէ գքեզ. հայրենիքս մօտ է  
 իւր ազատութեանը. այս է՝ իմ յոյս, իղձս ու  
 մտածմունքս. Ար հարցնէիր ինձ, գոհ ըրի գքեզ.  
 ալ բան մը ըսելիք չունիմ, վասն զի այն յիմարա-  
 կան հրամանիդ վրայ՝ բառ մը անգամ արտասա-  
 նելու չափ միտքս նուաստացնել չեմ ուզեր. այն  
 մոլեգնութեանդ համար կըսեմ որ այսօր գլխուդ  
 փեղոյրին առջևը խոնարհեցնել կուտայ Իւ-  
 ուիի դժբաղդ բնակիչները. Ամեն բան իմացար,  
 արդ կրնաս հրաման տար որ տանջանքներս սկսին.

Ետէր անձայն ունինդիր կըլար. բարկու-  
 թիւնը կը հանգչէր՝ հարուածները աւելի ա-  
 պահովցնելու համար, կատաղութիւնը կը յա-  
 պաղէր՝ մէկ նոր չարչարանք մը հնարելու գրա-  
 նելու յուսով. որպէս զի այս մահուրնէ չի վախ-  
 ցող անձէն կարենայ կատարելապէս վրէժը առ-  
 նուլ. Առջի գիշերը բանտարկել տուած երկու  
 տղաքը մտքին մէջ կը պտտէին. Ար յիշէ անոնց  
 համարձակախօսութիւնը, ու հիմակուան լաճ  
 խօսքերն անոնց հետ բաղդատելով՝ իւր հան-  
 ճարեղ մոլեգնութիւնը կը կասկածի, կը գու-  
 շակէ որ անփորձ հասակի մը մէջ այնչափ յան-  
 դուգն ու այնչափ բռնաւորաց դէմ ատելու-

Թիւն ունեցող տղայքը՝ իրմէ՛ ՚ի զատ մէկու մը  
 չէին կրնար պատկանիլ : Իմանալ կուզէ՛ նոյն  
 հետայն . ու գաղտնապէս կը հրամայէ որ այն  
 երկու տղայքը դիմացը բերուին :

Սարնէմ կը վազէ զանոնք բերելու : Սոյն մի-  
 ջոցին խորամանկն Ժէսէր , կը ծածկէ բարկու-  
 Թիւնը , ու առանց գրգռեալ ըլլալը յայտնելու  
 անտարբեր կերպիւ կը հարցնէ Գուլիէլմոսին՝  
 իւր վիճակը , ընտանիքը , և Լուսի մէջ ունե-  
 ցած աստիճանը : Գուլիէլմոս չի պահէր բնաւ  
 իւր ո՛վ ըլլալը , և այն Աթորֆի մէջ հռչակա-  
 ւոր եղող անունը՝ իշխանը կը զարհուրեցնէ : Լո՛ւնչ ,  
 կրսէ զարմանքով , դո՛ւն ես ուրեմն այն անձը՝ ու-  
 թուն յաջողակուԹիւնը այնչափ մեծ համբաւ  
 ստացած է ԹիալարուԹեան մէջ : Դո՛ւն ես  
 այն , որուն նեար՝ նշանէն չէ շփոթեր երբէք :  
 Ես եմ այո՛ , կը պատասխանէ Թէլ , և կը խըպ-  
 նիմ որ ինչո՛ւ անունս հայրենեացս անօգուտ յա-  
 ջողակուԹիւններով միայն ճանչցուած ըլլայ :  
 Ա՛յս ունայն փառքը , բնաւ չարժէր այդ մահը՝  
 որ պիտի դիմագրաւեմ կեցցէ ազատուԹիւն  
 գոչելով :

Ա՛յս խօսքին վրայ՝ Սարնէմ կուզայ Քլէրն  
 ու Ժէմին բերելով : Թէլ իւր որդին տեսածին

պէս, ուրախութեան ճայնիւ՝ դէպ ՚ի անոր նեա-  
 ուելով. ո՛վ Ճէմի կրսէ, ո՛վ որդեակ իմ, դեռ  
 կրնամ գրկել զքեզ. և ո՛ւր . . . ինչո՞ւ . . . ի՞նչ  
 պէս . . . չէ՛, չէ՛, դուն իմ հայրս չես, կը պա-  
 տասխանէ մէկէն Ճէմի՝ հօրը գալիք վտանգը  
 տեսնելով. որովհետև գիտէր, արդէն Ճէսլէրի  
 պատրաստած ճակատագիրը՝ իւր թշուառ ծնո-  
 ղացը համար. չէ՛, չեմ ճանչնար զքեզ ամենևին,  
 իմ ընտանիքս հոս չէ բնաւ. Գուլիէլմոս, զար-  
 մացեալ թեւերը տարածած անշարժ կը մնայ. չի  
 կրնար հասկընալ թէ, ինչո՞ւ որդին իւր գրկա-  
 խառնութիւնը կը մերժէ ու կը համարձակի  
 զինքը ուրանալու. Բլէր կը յաւելու իւր զար-  
 մանքը, Ճէմիին ըսածը հաստատելով ու անոր  
 հետ կրկնելով թէ Գուլիէլմոս իրենց հայրը չէր.  
 Թէլին սիրտը կը վշտանայ ասոր վրայ, տխրու-  
 թիւնը կը պատէ զինքը. և Ճէսլէր՝ որ խոժոռ-  
 աչօք անոնց ամեն մէկ շարժուածքը կը գիտէր,  
 Ճէսլէր իր բնառած գաղտնիքը խմանալով ար-  
 ղոցն ու հօրը երկիւղը, զարմանքն ու վիշտերը  
 տեսնելով կը հրճուի.

Սոսկալի ուրախութիւն մը կը պատէ ճա-  
 կատը. թախճագին հուր մը կը փայլի աչացը  
 մէջ. Չեմ խաբուիր բնաւ կրսէ, ահա՛ տղադ

Գու լիելմոս , և այս տղայն էր որ անարգեց զիս .  
 համբերութեամբ երկայն ատեն լռեցի նախա-  
 տանացդ , որպէս զի յանդգնութեանդ համեմատ  
 պատիժ մը կարենամ գանել , ահա կը վըճ-  
 ուեմ լսէ :

Առ զեմ գքեզ պատժած ատենս անգամ , մե-  
 ծարել այն հազուագիւտ յաջողակութիւնը , ո-  
 րով կը պարծի երջանիկ երկիրդ . կուզեմ որ , երբ  
 ես իրաւանցս գործադրութեանը կըզբաղիմ ,  
 Աթորֆի ժողովուրդը զմայլի քու բնական ձը-  
 րիցդ վրայ . քեզի պիտի արուի աղեղդ , դիմացդ ,  
 հարիւր ոտնաչափ հեռուն որդիդ պիտի կայնե-  
 ցընեն . խնձոր պիտի դրուի գլխուն վրայ , ու  
 այն խնձորը նետիդ նշանը պիտի ըլլայ : Թէ որ  
 անվրէպ ձեռքդ , կարենայ սլաքով խնձորը վեր-  
 ցընել՝ կը ներեմ երկուքիդ ալ յանցանացը ու  
 կազատեմ զձեզ . իսկ եթէ այս փորձը յան-  
 ձրն չառնուս , աչքիդ առջևը տղադ սպաննել  
 կուտամ : Գարբարոս՝ կը պատասխանէ Թէլ .  
 որ դժոխային սատանան ազդեց քեզ այս սոս-  
 կայի գաղափարը . Ով արդարագատդ Աստ-  
 ուած , դուն որ մեր ձայնը կը լսես , միթէ  
 պիտի համբերես անգթութեան այս զարհուրե-  
 լի հնարիցը : Չէ , չեմ ընդունիր երբէք այդ



փորձը . չէ որդեապան չեմ ըլլար բնաւ . ես իմ մահս կուզեմ, ու զանիկայ քու դահիճներէդ կսպասեմ . ամեն մարդ դահիճ է հոս . չի կայ մէկը՝ զքեզ շրջապատող անձանց մէջ, որ ձեռքը հարիւր անգամ արեամբ ներկած չըլլայ . թող իրենց կացինները իմ վրաս դառնայ, թող սրտիս ուղղուին անոնք, զայս կուզեմ՝ զայս կը պաղատիմ, բայց դոնէ արդար մեռնիմ, դոնէ մեռնիմ իբրև մարդ և հայր . Տես, Ժէսլէր . բազմաթիւ պահապաններդ՝ բոլոր ժողովուրեան մը օրինակը աչքիս առջևն էր, և տանջանաց մատնուելուս անտարակոյս ըլլալով դարձեալ յանձրն չառի չի խոնարհեցայ զեջանիլ քու առջեւդ . մահը՝ այս անարգութենէն աւելի նախամեծար սեպեցի . սակայն արդ՝ որպէս զի այն մահը ընդունիմ, և որդւոյս սիրար ծակելու սոսկալի վտանգէն աղատիմ, ծունր կը կրկնեմ առջեւդ, խոստացիր ինձ Ժէսլէր կեանքս վերջացնել տալ . ու խոնարհիմ քու հպարտութեանդ առջևը .

Չէ՛, կը պօռայ մէկէն Ժէմի, որուն ազդու ձայնը ՚ի գութ կը շարժէ չորս կողմը շրջապատող թիկնապահները, մի՛ յանձն առնուր իւր խնդիրքը, կրնդ ունիմ, կրնդ ունիմ ես այն փորձը . Ինչ որ ալ ըլլայ, մէկ մը խոստացար, հայրս պիտի

ազատես . ինքզինքիդ եկուր , այնիւ հայր իմ .  
 դիմնաս որ երկինք պիտի ուղղեն քու ձեռքդ ,  
 ապահով եղիւ որ որդիդ բնաւ վտանգի մէջ չէ .  
 ներէ ինձ , եթէ որդիական գութս վայրկեան  
 մը ուրանալ ուզեց քեզ : Արդողայի քեզի հա-  
 մար , միայն քեզի համար . ու դքեզ ազատելու  
 դիտամար , իմ աչքիս՝ աշխարհիս ամեն հարրս-  
 տութիւններէն գերազանց եղող իրաւունքս թո-  
 ղուցի . որ է քու որդիդ կոչուելու քաղցր ա-  
 նունը . Միւ հայր իմ՝ ներէ՛ ինձ հայր իմ , սիրե-  
 լի հայրս . թող ալ հարիւր անգամ կրկնեմ այն  
 անունը ուսկից զրկեր էի ինքզինքս . Մի՛ երկրն-  
 չիր , դուն զիս չի պիտի մեռցնես . գաղտնի ձայն  
 մը կը ծանուցանէ ինձ զայն . Թող տանին թող  
 տանին զիս , իսկ դուն Քլէր , դնա՛ հոս մի՛ կե-  
 նար , բայց չըլլայ թէ մօրս բան մը ըսես :

Աոյն ատենը Ժէմի Գուլիէլմոսին բազկա-  
 ցը մէջ կը նետուի , որ դրկելով զանիկայ՝ կը  
 համբուրէ ու սրտին վրայ կը սխմէ . կուզէ հե-  
 տը խօսիլ , բայց արտասուելէ ՚ի գատ բան մը  
 չի կրնար ընել . դողդոջուն ու մարած ձայնով մը  
 սա խօսքերը կը կրկնէ միայն . չէ՛ , որդեակ իմ ,  
 չէ՛ սիրելի որդեակս . Քլէր կը մարի կիյնայ . զօ-  
 րականները՝ զինքը պաղատին մէկ ուրիշ կողմը

կը տանին , և անողորբելին Տէսլէր առանց այս տեսարանէն դուժը շարժելու , կը կրկնէ իր դատան հրամանը , և վերջին անգամ այն սոսկալի ընտրութիւնը կառաջարկէ Պուլիէլմոսին , որով կամ որդւոյն մահը պէտք էր տեսնել և կամ այն փորձը յանձն առնուլ : Պուլիէլմոս , առանց Տէմին իւր գրկէն բաժնելու գլուխը խոնարհած մտիկ կրնէ ու անբարբառ կը կենայ քանի մը վայրկեան . վերջը՝ գլուխը վերցնելով յանկարծ , արտասուաթոր և հրացայտ աչօք իշխանին կը նայի ու կը հնազանդիմ կըսէ , թող հըրապարակը տանին զիս :

Հայր ու տղայ ձեռք ձեռքի կուտան և պահապան զօրքեր կը շջապատեն զիրենք . Սարնէմի առաջնորդութեամբը ամենքն 'ի միասին պալատէն կիջնան . Տողովուրդը՝ ներկայանալիք այն զարհուրելի տեսարանը իմացած ըլլալով արդէն՝ ամեն կողմանէ դէպ 'ի հրապարակը կը դիմէ : Վրեժէ առ հասարակ ամենքը կը հառաջեն 'ի խորոց սրտի , բայց ոչ ոք կը համարձակի գթութեան նշան մը ցոյց տալ : Արկչոտ հայեցուածօք Պուլիէլմոսը կը բնառեն , կը տեսնեն զինքը որ նկատկենելով պաշարուած՝ տղուն քովէն կը քալէր . և Տէմի ժպտելով կը նայէր անոր երե-

սը : Զօրը դէմքը տեսնողը կարծես թէ պիտի  
արտասուէր , սակայն սոսկումը կարգիլէր իրենց  
արտասուքը . վասն զի Ժէսլէր լայն անգամ  
ոճիր մը կը համարի : Ամեն մարդը աչքը գետինը  
կը դարձնէ . տխուր լռութիւն մը կը տիրէ  
ժողովուրդեանը մէջ . կը հեծեն , կը վշտանան  
ու ձայն չեն հաներ .

Անագարոյնն Սարնէմ արդէն հեռաւորուե  
միջոցը չափեր էր . երկու կարգ զօրք՝ այս միջո  
ցը երեք կողմէն կը պաշարեն . Ժողովուրդը կը  
խռնի անոնց ետեւը . Ժէմի մէկ ծայրը կեցած՝  
խաղաղ ու անտարբեր աչօք ու շաղիւր կը լայ այս  
պատրաստութեանց : Ժէսլէր հեռուն թէլին  
ետեւը՝ պահապան զօրաց մէջ տեղը կեցած ,  
կը դիտէ տաղնապալ ժողովուրդեան տխուր  
լռութիւնը , և Պուլիէլմոս նիզակներէ շրջա  
պատուած անթարթ աչօք գետինը կը նայի .  
Իրեն կը ներկայացնեն իւր աղեղն ու մէկ սլաք  
մը որուն ծայրը փորձելով՝ կը կտրէ մէջ տե  
ղէն ու կապարձը կուզէ . կը բերեն զայն , կը  
պարպէ ոտիցը առջեւ , կը բնառէ անոնց մէջ .  
մէյմէկ մէյմէկ կը փորձէ այնչափ սլաքները .  
երկայն ատեն խոնարհած կը կենայ , ու յաջող  
վայրկեան մը գտնելով՝ սլաքին մէկը զգետնուցը

ասկէ կը պահէ . մէկ ուրիշ մ'ալ ձեռքը կառ-  
նու՝ որ էր գործածելիքը . Սարնէմ, մնացորդը  
վերցնել կուտայ , և Գուլիէլմոս ուշադրու-  
թեամբ կը լարէ իւր մեծ աղեղը .

Տղուն կը նայի , կը կայնի , աչքերը երկինք  
կը վերցնէ , աղեղն ու սլաքը կը նետէ և կուզէ  
Դէմիին հետ խօսիլ . Չորս զօրական զինքը  
անոր կը տանին . Արդեակ իմ կրսէ , կուզեմ որ  
քեզ մէկ մ'ալ գրկեմ ու կրկնեմ ըսածներս . Ան-  
շարժ կեցիր որդեակ , ծունկիդ մէկը գետինը  
դի՛ր , յուսամ որ այնպէս աւելի հաստատ կրնաս  
ըլլալ . աղաչէ առ Աստուած որդեակ իմ՝ որ  
պաշտպանէ քու դժբախտ հայրդ . Ա՛հ , չէ մի-  
միայն քեզի համար աղաչէ՛ , չըլլայ թէ իմ վիճա-  
կըս միտքդ գալով՝ ՚ի գուժ շարժիս և կորսնցնես  
այդ առնական քաջութիւնը , որուն վրայ կը  
զարմանամ առանց նմանող ըլլալու . Ա՛վ որ-  
դեակ իմ այո՛ , չեմ կրնար ինքզինքս քեզի չափ  
վեհանձն ցուցնել . Օգոյշ կեցիր , չըլլայ թէ  
կորսնցունես այդ քաջասրտութիւնը , որուն  
օրինակը՝ ես քեզի տալ կուզէի . Ա՛յո՛ ,  
այդպէս կեցիր որդեակ , ճիշտ այդ է ուղած  
դիրքս . . . . ճիշտ այդ է , որչափ դժբաղդ  
եմ ես , և դուն կը համբերես Աստուած Աստ-

ուած իմ . . . մտիկ ըրէ' . . . դարձուր գը-  
լուխդ . . . Չես գիտեր, չես կրնար նախատե-  
սել ճակտիդ ուղղեալ այս փայլուն սրածայր եր-  
կաթին քու վրադ ընելիք ազդեցութիւնը .  
'Վարձուր գլուխդ որդեակ, ու մի' նայիր ինձի .  
'Չէ', չէ, կը պատասխանէ տղան, մի' երկրն-  
չիր, քեզ կուզեմ տեսնել, ես ամենեւին սլաքին  
չեմ' նայիր, միմիայն հօրս պիտի նայիմ . V, 'Տ ,  
սիրելի որդիս, կը պօռայ թաէլ, մի' խօսիր ինձի  
հետ, մի' խօսի՛ր, ձայնդ ու հնչմունքդ, ոյժ  
չեն թողուր վրաս . V, ուռ կեցիր, աղաչէ V, ս-  
տուծոյ, ու մի' երերար տեղէդ .

Վուլիէլմաս, այս խօսքերն ըսելով՝ կրկին կրկին  
անգամ կը գրկէ, կը փարէ զինքը, դարձեալ կը  
յիշեցնէ անոր՝ իւր վերջին խօսքերը, ու խնձորը  
գլխուն վրայ դնելով՝ շտապաւ և անհաւասար  
քայլերով իւր տեղը կը դառնայ .

Ա, երստին ձեռքը կառնէ անդ՝ աղեղն ու  
սլաքը . աչքը այն թանկագին նշանատեղւոյն կը  
դարձնէ, երկու անգամ աղեղը վերցնելու կը  
ջանայ, և երկու անգամուն ալ իւր հայրական  
ձեռքերը կը ձգեն զանիկայ . Ա, երջապէս իր  
բոլոր ոյժն արուեստն ու քաջութիւնը ամփոփե-  
լով՝ կը սրբէ աչքերը անդադար խաւարեցնող

արտասուքը , օգնական կը կոչէ զամենահարողն  
Մատուած որ կը հսկէ հայրերուն վրայ ՚ի բար-  
ձանցն երկնից . ու գողգոջուն բազուկը պնդա-  
ցրնելով՝ ոյժ կուտայնաւ աչքին ու կը վարժե-  
ցրնէ ինքզինքը միմիայն խնձորին նայելու . Յար-  
մար կը դատէ այն երևակայութեան պէս ա-  
րագաթռիչ վայրկեանը , յորում որդին մոռնալով  
նշան կառնու , կը քաշէ , կը սլանայ նեար ,  
ու խնձորը կը թռանի կը վերնայ անոր հետ  
մէկ տեղ .

Հրապարակը ցնծութեան աղաղակնե-  
լով կը հնչէ . Ժէմի կը վազէ իւր հայրը գրկե-  
լու . Իսկ Գուլիէլմոս իր այն վերջին ճգանը պատ-  
ճառաւ բոլորովին տկարացած , տժգոյն ու ան-  
շարժ կը մնայ , և չի փութար որդւոյն գգուա-  
նացը պատասխանելու . Գունաթափ աչօք կը  
նայի անոր , ու չի կրնար խօսիլ . հազիւ կը լսէ  
տղուն ըսածները , կերերայ քիչ մը ատեն , կիյ-  
նայ Ժէմիին թեւերուն մէջ . որն որ իրեն օգնե-  
լու ջանացած ատենը , վերարկուին տակ պահ-  
ուած սլաքը երևան կելնէ .

Արդէն Ժէսլէր մօտեցեր էր իրեն , Ժէս-  
լէր կը յամիշատակէ սլաքը . Գուլիէլմոս ինքզինքին  
կուգայ , ու մէկէն աչքերը Ժէսլէրին կը դար-

ձրնէ : Ներտաձիգդ անգուգական , կրսէ իրեն ա-  
 նիկայ , պիտի կատարեմ խոստմունքս ու հատու-  
 ցանեմ քեզ այդ հազուադիւս յաջողակութեանդ  
 վարձատրութիւն : բայց՝ նախ ըսէ նայիմ ի՞նչ պիտի  
 ընէիր այս ինձմէ գաղտուկ պահած սլաքդ : Քե-  
 ղի միայն մէկ հատ մը պէտք էր , ինչո՞ւ պահեցիր  
 ասիկայ : — Բու սիրտդ պիտի ծակէի բռնաւոր ,  
 եթէ թշուառ ձեռքս որդւոյս կենաց թելը կրա-  
 րէր : Աշխանը այս խօսքէն զարհուրելով՝ որ հայր  
 մը չի կրցաւ պահելու , իւր թիկնապահներուն  
 մէջ տեղը կը մտնէ : Ատ կառնու խոստմունքը , ու  
 կը հրամայէ անգութ Սարնէմին՝ որ Գուլիելմոս  
 մէկէն շղթայակապ պարիսպը տարուի : Ար հը-  
 նազանդին . կը բաժնեն զանիկայ Ժէմիին գրկէն ,  
 որն որ ունայն տեղը կաշխատի հօրը հեռ երթա-  
 լու . պահապանները մէկ կողմ կը հրեն Ժէ-  
 մին : Ժողովուրդը կը քրթմնջէ ու կը վողովի .  
 Ժէպէր փութով պալատը կը քաշուի , կը զինէ  
 ի՞նչոր զօրքերը : Շատ մը Աւստրիական պա-  
 հապան խումբեր կը տարածուին քաղաքին չորս  
 կողմը , ու կրստիպեն զարհուրեալ բնակիչները  
 որ տղաներնին քաշուին : Սոսկումը կը տիրէ  
 Ալթորֆի մէջ և մշտապատրաստ գահիճները՝  
 նորանոր զոհերու կրսպասեն :



## Գ Ի Ռ Յ Դ .



**Մ**ինչդեռ անհանգիստ բռնաւորը պարսպին  
 մէջ գոցուած՝ զօրքերը պատնէշի պէս բոլորտի-  
 քը կը գումարէր ու կը դողար որ չըլլայ թէ  
 զայրացեալ ժողովուրդը՝ Գուլիէլմոսը յափշտա-  
 կելու դիտմամբ իւր վրայ գիմէ, Ժէմի, խեղճ  
 Ժէմին, թեւերը ձգած, արտասուլթոր աչօք՝  
 ամեն անցնողին հայրը կը հարցնէր. անցքերը  
 պահպանող անգութ թիկնապահները՝ հը-  
 բելով կը մերժէին զինքը, և դառն հառաչա-  
 նօք կը թափառէր պարսպին պատերուն բոլոր-  
 տիքը. Բէր, որ այն սոսկալի տեսարանին  
 ատենը պալատին մէջ արգելուեր էր, ազատելով  
 վերջապէս ամեն կողմ Ժէմին կը բնտուէ.  
 Ար հանգիստի անօր, գիրկը կը գիմէ, ու կուգէ  
 աչացն արցունքները սրբել. Հայրս շղթայներու  
 մէջ է կըսէ Ժէմի, իմ դժբաղդ հայրս, կորստ-

եանը մօտ է • Մտիկ ըրէ՛ Քլէր, ալ համոզուեցայ որ իւր բանտը երթալ, հոն անոր ծառայելն ու իմ կեանքս իրենին հետ վերջացնելը անկարելի պիտի ըլլայ • հիմա հօրս ազատութիւնը ձեռք ձգելու համար ունեցած միակ միջոցիս վրայ պիտի զբաղիմ • ես կը վազեմ Աւնտէր վօյտ կերթամ, որպէս զի իմացնեմ հօրդ՝ իւր բարեկամին ինչ վտանգի մէջ ըլլալը • Մեղքթալի համար՝ ոչ բարեկամ կը պակսի, ոչ քաջութիւն և ոչ զէնք • Մեղքթալ կուգայ ու կազատէ զինքը • Աուզեմ, սիրելի Քլէրս, որ դուն մօրս քով վերադառնաս, պատմես իրեն բոլոր եղելութիւնը • ու տեղեկացնես զինքը՝ արդի ձեռնարկութեանս • Գնա՛ Քլէր, գնա մտիթարէ մայրս • Ես Մեղքթալին հետ պիտի դառնամ, պիտի մեռնիմ կամ ազատեմ հայրս • քեզի կիյնայ բարի մօրս քով իմ տեղս անցնելը •

Արսէ, ու Քլէրէն բաժնուելով մէկէն, կը սկսի անհաւասար քայլերով յառաջանալ, քաղքէն դուրս կելնէ ու ձեռք կը ձգէ լեռան ճամբան •

Քլէր փութալով Թէլին խրճիթը կը դառնայ • ուր ծերն Հանրի և բարին Ետմէ, Գուլիէլմոսէն և զաւկներնուն բաժնուած, ու ա-

նոնց ի՞նչ եղած ըլլալնուն անճանօթ , անձկու-  
թեամբ կը մաշէին . Ատմէ , Քլէրին այնպէս  
տժգոյն , տրտում , ու արտասուալից դալուստը  
տեսնելով , առաւել ևս կը սոսկայ .

Ոտքի վրայ կեւնէ , կը դիմէ դէպ ՚ի անոր .  
ու Ժէմի , Ժէմի պօռալով , ի՞նչ եղաւ տղաս  
կրսէ . Ո՛ղջ ու ազատ է , կը պատասխանէ մէկէն  
Քլէր , կոյր ծերունւոյն գիրկը նետուելով . կը  
համարէ նախ զինքը , և յետոյ Ատմէն . ու  
երերուն ձայնիւ կը պատմէ , Ժէպլէրին իրենց  
ըրած անգթութիւնները , Գուլիէլմոսին առջևը  
ներկայանալու համար բանտէն դուրս հանուել-  
նին . և այն սոսկալի փորձը , որուն՝ հայր ու  
տղայ դատապարտուեցան . Արսէ թէ անկէց  
վերջը ինչ դարձած ըլլալը չը գիտէր . սակայն  
Գուլիէլմոս շղթաներու ծանրութեանը տակ  
կը հեծէ . Ժէմի , հայրը ազատելու դիտմամբ  
գացեր է որ Սեւթթալը գտնէ . մահ կըսպառ-  
նայ իշխանը Թէլին , այս մասին երդումն ը-  
րած է .

Ատմէին սիրտը՝ այս պատմութենէս սաստիկ  
ճճուելով՝ գրեթէ կիսամեռ կիյնայ քիչ մը  
առաջ թողուցած աստուին վրայ . կոյր ծերու-  
նին գատողութիւնը կը կորսնցընէ և կսկսի ցա-

ւագին աղաղակօք հառաջել։ Առ զէ որ զինքը  
 իւր որդւոյն տանին, որպէս զի անոր հետ եր-  
 թայ պատերազմի, կեանքը գոհէ՝ Գուլիէլմօսը  
 ազատելու համար։ Արիտասարդուհին Քլէր,  
 Տերունին համոզելու կաշխատի, թալկացեալ  
 Ատմէին օգնելու կը ջանայ, և չի կրնար այս եր-  
 կու դժբաղդներուն պէտք եղած գորովական  
 խնամոցը հասնիլ։

Ա երջապէս, ասանկ ամենազառն ու սաս-  
 տիկ կսկծանացառաջին վայրկեանները անցնելէն  
 յետոյ, Տերն Հանրի՝ ինքզինքին գալով, ձեռք  
 կառնու խոհեմութիւնը գատումն ու քաջու-  
 թիւնը, և Ատմէին ձեռքերը կուրծքին դնելով՝  
 Մի՛ լար կըսէ, առաքինի բարեկամուհիդ իմ՝  
 այսպիսի մէկ սուղ ատենը արտասուելով չի կոր-  
 սընցներնք։ Արդէն Ժէմի Ունտերվոլտ ըլլալու  
 է. անոր՝ որդւոյս երթալը մէկ քանի ժամէն  
 աւելի չի տեւեր։ Մելքիթալը կը ճանչնամ ես.  
 նոյն իսկ այս գիշերուքնէ իւր բոլոր բարեկամները  
 հետը առած Ալթորֆի ճամբան պիտի բռնէ։  
 Ա աղն առտու հոն կը հասնի, ու Գուլիէլմօսը  
 ազատելու համար ձեռքէն եկածը չի խնայեր։  
 Քայց իւր տանելիք սակաւաթիւ բարեկամները,  
 այս մեծ նպատակին շնն կրնար բաւական ըլլալ։

Քաղքին մէջ քանի մը բարեկամ ալ ես ունիմ . երթամ , ձայն տամ իրենց քաջութեանը . գրգռեմ ու խրախուսեմ զիրենք : Ախտի պահանջեմ որ հրապարակը տանին զիս , 'ի ծագել ալեգական առաջնորդեն ինձ ժողովրդեան մէջ տեղը երթալու :

Հոն պիտի խօսիմ՝ ու ցոյց տամ Դէսլէրէն դեռ նոր ընդունած վէրքերս . իր կատաղի ձեռօքը փորուած աչացս հետքը . Օտեր հասակս , սպիտակ մազերս , կերպարանափոխ դէմքս , արիւնս որ դեռ զգեստներս կապականէ , և այս տկար տղուն ողբն ու կոծը պիտի օգնեն պերճախօսութեանս . կը յուսամ և ապահով եմ որ ժողովրդեան սիրտը վրդովելով՝ վրէժխնդիր պիտի ըլլայ ինձ . ժողովուրդը պիտի ընդարձակէ իմ ժողուած բարեկամներուս ամբօխը . Աոյն միջոցին տղաս քու տղուդ ընկերակցութեամբը վրայ կուգայ և իրենց հետ միանալու պատրաստ խումբ մը կը գտնեն . Ար յարձակինք պարբային վրայ . հարուածներուն մէջ տեղը կը կենամ ես , մեր քաջ զօրքերը խրախուսելու համար . Արէժխնդրութիւն , պիտի պօռամ . ու անդադար հնչեցնեմ հայրենեաց և ազատութեան անուները . Տանիլ կուտամ զիս , թէ որ

չեմ կրնար հետևել իրենց՝ մինչև փետիդ քով .  
զորն որ քեզի պիտի դարձնենք . Այն հաստատ  
եմ թէ՛ Աստուած է որ կազդէ ինձ և կիմացնէ  
նաև մեր յաղթող ներկայանալիքը . Ահուր աղջի-  
կըս , մեկնինք այս վայրկենիս , տուր ինձ գաւա-  
զանս ու ձեռքդ : Վիշերը մօտ ըլլալու է .  
եկուր պէտք է որ օգուտ քաղեմք գիշերուան  
մթութենէն .

Ար հաւանիմ այդ առաջարկութեանդ , ու  
կուզեմ ես անձամբ առաջնորդել քեզ . բայց հա-  
ծէ , ասկից չի հեռացած ունկնդիր ըլլալ , ու  
քու իմաստուն խորհուրդդ հաղորդել ինձ . Թէ  
և ինքը ըսած չէ , սակայն գիտեմ որ ամուսինս  
երկայն ատենէ ՚ի վեր , իւր հայրենիքը ազա-  
տելու բարձր նպատակին վրայ կը մտածէ . Շու-  
իցի , Աւետէրվօլտի , և Աւսրէնի մէջ ըրած  
գաղտնի ճանապարհորդութիւնները , պահած  
զինուոց շեղջակոյտը , գիշերները դուրսը կենալը ,  
ու դէմքին վրայ նշմարուած մտաւորական զբաղ-  
մունքն երկայն ժամանակէ ՚ի վեր անտարակոյս  
ըրած են զիս , որ երկից Նահանգաց մէջ դաշ-  
նակցութիւն մը կը գաւեն , որուն հոգին է Վու-  
լիէլմոս . Անձանօթ է ինձ միւս առաջնորդնե-  
րուն անունները , բայց գիտնաս որ այսպիսի ա-

ու Գնորդներ կան . և անշուշտ մէջերնին ժա-  
 մանակ մը ու նշան մը որոշեր տնօրինելու են .  
 Չի կրցի խմանալ թէ որն է այդ նշանը . բայց  
 շատ չընէր որ մը , ամուսնոյս բերնէն փախած  
 մէկ խօսքը , լուսոյ շառաւղի նման զարկաւ զիս .  
 այն բառը ու անոր պէս մէկ քանի ուրիշ խօս-  
 քեր , կասկածի ձգեցին ու հաւաստի ըրին զիս  
 որ միաբանելոց նշանը՝ այս լեռանը գլուխը վառ-  
 ուած խարոյկ մը պիտի ըլլար . Այս գիշեր փայ-  
 տակոյտ մը գիցելու համար , ոչ ատեն ունինք  
 ոչ ալ կարողու թիւն . Սակայն գաղտնի ձայն մը  
 կրսէ ինձ , որ եթէ կարենանք այն բոցը փայլե-  
 ցնել՝ ամուսնոյս բոլոր բարեկամները պիտի վա-  
 գեն զինքը ազատելու . Ի՞նչ խորհուրդ կուտաս  
 Մելքիսայ , տկար ձեռքս բաւական է բնակած  
 տուներնուս կրակ տալու . Աօրկայ ամենէն բար-  
 ձրը տեղը կառուցուած է . Այն մեծ հրգեհը  
 երեք Նահանգաց բնակիչներուն անտեսանելի  
 չի կրնար ըլլալ . Տունն ու հարստութիւնը ի՞նչ  
 ընեմ թէ որ ամուսինս կորսուի . Աթէ ազատեմ  
 զինքը , դուն կրնդ ունիս մեզ . թէ որ կորսուե-  
 լու ըլլայ գերեզման մը միայն պէտք է մեզի .

Արսէ , ու ծերն Հանրի իւր այս նպատակը  
 կը քաջալերէ . Այսմէ կեննէ մէկէն դեզ մը չոր

ոստ կառնէ , կը բռնկցնէ վառարանէն , կիսա-  
 վառ փայտեր կը ներտէ անոր բոլորտիքը , ինքն  
 իր ձեռօքը կարծարծէ կը տարածէ կրակը ,  
 մինչև տղուն օրօրոցն ու հարսնիքնուն պար-  
 կեշտ անկողինն անգամ առանց կակծալու կամ  
 զղջալու կը վառէ , ամեն կողմանէ բոցը կաւել-  
 ցընէ , և երբ ալ տարակոյս չի մնար որ և իցէ  
 կերպիւ կրակին չի մարելուն . թեր ծերունւսյն  
 կուտայ , որն որ միւս ձեռքովն ալ Քլէրին  
 կռթնելով՝ անոնց հետ լեռան զառ ՚ի վայրը  
 կիջնայ , ու ԱթորՖի ճամբան կը բռնեն .

Մինչդեռ , ահաբեկ ժողովուրդը , սոսկա-  
 լով իր տեղը քաշուած՝ համատարած լռութիւն  
 մը տիրեր էր քաղաքին մէջ . ծերունին հարսն ու  
 թշուառ տղան , կերթան իրենց բարեկամացը  
 դռներն զարնելու . Ատմէին բռնկցուցած կրա-  
 կը տարածուելով՝ մինչև խողանները կը հասնի ,  
 որոնցմով միայն՝ տանը վրայ ծածկուած էր . Խո-  
 զանը կրսիսի շառաչմամբ վառիլ . բոցը աւելի  
 փայլունութիւն մը կըստանայ , չորս կողմը ըն-  
 դարձակ լոյս մը կարձակէ . ու իբրև օդին մէջ  
 կերեւնայ հեռուէն .

Այնքէր Շուիցէն կը տեսնէ զանիկայ , ե-  
 ուանդոտն Մելքիթայ՝ որուն քով դեռ չէր



հասէր Քէմի, զայն նշմարելով ու բախու թենէն  
 կը հրճուի. և Փուրսդ՝ Ուրարէնի մէջ անտա-  
 րակոյս կը կարծէ որ, Գուլիէլմոս Ալթորֆի  
 քաջերուն գլուխն անցած՝ զինքը օգնութեան  
 կը կոչէր. Ա. յս երեք զօրագլուխները, մի և  
 նոյն վայրկենին՝ կը զինուին կեյնեն իրենց բնա-  
 կարաններէն, հաւատարիմ բարեկամներնին բըն-  
 տրուելու կերթան ու զանոնք ազատութեան կը  
 հրաւիրեն.

Նարեկամներնին կարթննան, կը յափշտա-  
 կեն զէնքերնին, լռութեան մէջ կը ժողուին  
 գունդեր կը կազմեն. և երեք կողմանէ՝ գրեթէ  
 մի և նոյն ատենին, երեք զօրապետները՝ իրենց  
 խումբերովը մէկտեղ դէպ ՚ի Ալթորֆ կը քալեն.  
 որոնք թէև տկար էին թուով՝ բայց զօրաւոր քա-  
 ջութեամբ, և հայտնեաց ազատութեանն համար  
 մահը աչքերնին առած.

Ամենքն ալ կաճապարեն. ձիւնը, հեղեղներն  
 ու ճամբաներուն աւրուածութիւնը զամենքն  
 ալ ու շացնելով՝ կը դողան որ չըլլայ թէ ուշ հաս-  
 նին, այն ահարկու պարսպին վրայ ըլլալէք յար-  
 ձակմանը. որն որ պէտք էր բռնաւորին հետ  
 մէկէն նուաճել. Սակայն բռնաւորը, ժողովըր-  
 դեան մէջ տեսած շարժմունքներէն կռովեալ և

տաղնապեալ, կերկնչի որ չըլլայ թէ իւր բան,  
տարկեալը կորսնցնէ. ու ինք իր կենացը վրայ  
խիթալուն՝ արդէն նորանոր միջոցներու ձեռք  
զարկած էր. որոնցմէ միայն մէկը, երեք դաշ-  
նակցաց նիւթած բոլոր հնարքները ՚ի դերև կը  
հանէր. Ժէսլէր, նոյն իսկ այն իրիկունը մտա-  
ծեր էր որ իւր բազմաթիւ զօրօք լի ամբողջն  
մէջ բաւական ու տեստ չի դար երկարատև պո-  
շարման մը գիմանալու համար. այս անառիկ ա-  
պասաարանին մէջ ճնշուելէ չէր վախնար ամե-  
նևին, այլ զինքը խռովեցնողը, իւր Ա ու չէլնա-  
յի բանակին հետ անհաղորդակից մնալու եր-  
կիւղն էր. Ժէսլէր Սարնէմը կոչել կուտայ,  
հետևեալ նոր հրամանը տալու համար.

Քարեկամ՝ կըսէ անոր, ես հոսկէց պիտի  
մեկնիմ, և դուն պիտի իշխես իմ բացակայու-  
թեանս ատենը. Քեզի կը թողում իմ քաջ զօր-  
քերս, որոնք միմիայն քու հրամանացդ պիտի  
հնազանդին. Քիչ ատենէն բերելիք զօրութիւնք  
պիտի նուաճեմ այս անարդ ժողովրդեան ստա-  
հակութիւր. Մեծ նաւակ մը պատրաստել տուր  
ինձ, որպէս զի բանակիս մէջէն զատուած յիս-  
սուն ընտիր թիկնապահք կարենան ինձի հետ  
ճամբայ ելնել երեկոյիս. Մութը կոխածին պէս,

այն յանդուգն Վուլիէլմոսը նաւակը ղրկել տուր , որ զիս արհամարելու համար ձակեցաւ . մանաւանդ թէ շղթայակապ ըլլայ և զօրաց մէջ տեղէն տարուի . Աս իմ ձեռօքս կուզեմ զինքը՝ Վուչերնայի լճին միւս կողմը եղող , Քիւսնաշի անառիկ դղեակը տանիլ . շոն ասկից աւելի ապահով կերպիւ պահուելով , խաւարչտին բանտերու մէջ պիտի սպասէ , որ զօրաց խումբերուն հետ ինքն ալ վերադառնայ , յայնժամ տաժանելի չարչարանօք՝ պիտի ցոյց տամ Վլթորֆի ժողովրդեան , թէ որոնք են զիս նախատողին վարձքը :

Սարնէմ իշխանին տեղը ընտրուելուն վրայ հպարտանալով՝ կը փութայ անոր հրամանացը կատարմանը . Մէկէն նաւակը կը պատրաստուի , և յիսուն ընտիր նետաձիգ զինուորք նոյն խկ Սարնէմի առաջնորդութեամբը թէլին բանտին դուռը կերթան . Քիւցազնը՝ որ շղթաներու ծանրութեանը տակ հազիւ կրնար ելերալ , յիսուն աղեղնաւորաց պահպանութեանը կը յանձնուի , ու գիշերուան մթութիւնը վրայ հասածին պէս , լռիկ մնչիկ կը քաշեն կը տանին զինքը ետեւնուն գէպ ՚ի եզերքը . ուր Ճէսլէր , առանձին ու ծպտեալ դաղտնի գացեր էր .

Ժեպէր՝ իւր գերին նաւուն խորը նեւել կուտայ ,  
 աղեղնաւորները անոր բոլորախը կը նստեցնէ ,  
 դեկին կողմը կանչնի ինքն ալ . ոսկի ու դի-  
 նի բաժնել կուտայ զօրայն եւ թխավարներուն .  
 ու աներեւոյթաբար կը մեկնի .

Նաւակը՝ արագ արագ կը սահի ալեաց վը-  
 րայէն . Օգը պարզ էր , ջուրը խաղաղ , եւ աստ-  
 դերը կը փախիւէին երկնից կամարին վրայ . Հա-  
 րաւային թեթեւ հով մը կօզնէր թխավարնե-  
 լուն աշխատանայն ու կը մեղմացնէր ցրտոյն  
 սաստիկութիւնը . որ առանց անոր՝ գիշերը , ձմեռ-  
 նային եղանակն ու մերձակայ սառոյցքները ա-  
 ռաւել և ստաժանելի ընելու էին . Ամենայն ինչ  
 յաջող էր Ժեպէրին . Չորս Նահանգաց առա-  
 ջին լծին երկայն ու անձուկ ճամբան կաւարտէ .  
 շիտակ գէպ ՚ի Արունէն ու զղել կուտայ նաւա-  
 կը , որպէս զե երկրորդ լիճը տանող ջրանցքը  
 մանէ . Թէլ սոյն ասերը , շղթայներու ճանրու-  
 թեանը տակ , ու Թիկնապահներուն մէջ տեղը  
 պառկած , կը տեսնէ վերստին ձախ եղելքին  
 վրայ Արիւթիի անբնակ ժայռերն ու այն քա-  
 լայրը՝ ո՛ւր որ գեռ առջի գիշերը , հանդերձ  
 բարեկամօքը՝ հայրենեացն աղաւտու թեանը կը պա-  
 րապէր . Այս տեսարանն ու այն յիշատակը կը

վրդովեն իւր քաջ սիրտը : Գուլիէլմոս կղզայ  
 իւր աչացն արտասուօք լցուիլը՝ ուսկից պիտի  
 ամաչէր : Մէկէն անհետ կրնէ զայն , կը դար-  
 ձրնէ գլուխը , ու կսկսի երկինքը նկատել , որ  
 կարծես թէ զինքը երեսէ ձգեր էր : Սոյն միջո-  
 ցին Աթորթի կողմը կարմրագոյն աղօտ լոյս մը  
 կը նշմարէ : Արթալով այս լոյսը կաւերնայ , ու  
 թէլ կը տեսնէ որ Վուրի վրայէն մեծ բոց մը  
 կը բարձրանայր : Սիրտը կը հրճուի . չի կրնար  
 հասկնալ թէ ուսկից կուգար այն նշանը , որուն  
 գաղտնիքը մէկու մը հաղորդած չէր : Ար տա-  
 րակուսի , կը քննէ , ու գրեթէ աներկբայ կըլլայ  
 որ այս բոցը՝ իր բնակած լեռանը վրայէն կը ցո-  
 լանար : Գոհութիւն կը մատուցանէ Աստու-  
 ծոյ , դեռ եղածին բարիք մը ըլլալը առանց գիտ-  
 նալու . չի յուսար բնաւ չի մտածեր որ այս եղե-  
 լութեան առթիւ թերեւս իւր կեանքը կազա-  
 տի . սակայն կենթադրէ թէ կրնայ իւր հայրեն-  
 եացը փրկաւէտըլլալ . այս կարծիքը՝ կը մոռցնէ  
 անոր , իւր անձին կորուստը :

Ժէսլէր եւ իւր արբանեակներն ալ կը տես-  
 նեն այն բոցը : Օարմացմամբ ցոյց կուտան  
 իրարու . հրկիզութեան մը տեղ կը դնեն զանի-  
 կայ , ու իրենց թշնամւոյն միայն ապառնացող

Գնասը՝ հող չեն ընկեր, Ժեպէր կը փութացնէ  
 թիափարները, Ժեպէր ժամ մը յառաջ հասնե-  
 լու անհամբերութեամբը՝ կըստիպէ որ աշխա-  
 տանքնին կրկնապատկեն: Նաւը՝ արեւմտեան  
 կողմը կը դառնայ, նեղուցէն կանցնի, ու կսկսի  
 Ունտէրվորի փոանդաւոր լծին ամենէն խոր ջու-  
 րերուն մէջ յառաջանալ: Հոն, յանկարծ հա-  
 րաւային յաջող հողմը կը դադրի, եւ հիւսիսա-  
 յին ու արեւմտեան հողմունքը տիրելով՝ կա-  
 լէկոծեն օդը: Մին՝ մըրկաբեր, կը բարձրացը-  
 նէ կը դիզէ ալեքը, ու շառաջմամբ կը փշթ  
 զանոնք նաւուն կողկըր վրայ, նաւը՝ ջրոյն կա-  
 տաղութենէն ու բուն հարուածներէն ընկրկե-  
 լով, կը խոտորի թիափարներուն ջանիցն հակա-  
 աակ, ու բոլորովին մէկ կողման վրայ ծռած՝  
 կսկսի խոյս տալ, իսկ միւսը, եղեամբ, ձիւնն  
 ու ամպերը կուտելով՝ սգալի քողով մը կը ծած-  
 կէ երկնից երեսը, աղջամուղջը կը տարածուի  
 ծովուն վրայ, սրածայր սառոյցքներ կը զարնեն  
 թիափարներուն ձեռացն ու դէմքին՝ եւ կատի-  
 պեն զերենք՝ աշխատանքնին թողլու, որոնց  
 դեանախոնարհ աչքէն մինչեւ անձերնուն կո-  
 րուստն անգամ կը ծածկուի, նաւը՝ առաս-  
 ձեանը հետ խառնուած սառնամանեաց կտոր-

ներովը կը լինայ . արեւմտեան բուռն փոթորիկ  
կը ճակատէն անոր ընթացքը արգիլելով՝ կը սկսի  
մէկ քովէն նաւուն վրայ յարձակող հիւսիսային  
դառնաշունչ հովուն հետ պատերազմիլ . մէկէն  
հակառակ կողմը կը դարձնէ զանիկայ , նոյն վե-  
ճակին մէջ փրփրագէզ ալեաց կատարը կը կե-  
ցընէ , ու երբեմն ալ թողով՝ մինչեւ անդնդոց  
խորը կը դահավիժէ :

Գունաթափ եւ ահաբեկ զօրքերը՝ մերձա-  
կայ մահն ակներև տեսնելով՝ ծունդ կը դնեն ,  
ու օգնական կը կոչեն զՆատուած , որ երկար  
ատենէ ՚ի վեր մտքերնուն հաներ էին : Անամար-  
դին Տէսլեր , անոնցմէ աւելի կը սոսկայ , կեր-  
թայ կուգայ նաւուն մէջ , ու գանձեր խոստա-  
նալով կը հարցնէ նաւաստիներուն որ՝ միթէ՛  
յոյս ունին իւր կեանքն ապատելու . Թխավարնե-  
րը , անշարժ ու արտում կեցած , ըսեթեամբ  
միայն կը պատասխանեն իւր հարցմանցը : Աշխա-  
նին խոժոռ աչքերը , մեղկութեան եւ երկչո-  
տութեան նշան նախատելի արտասուօք կը լինայ  
առաջին անգամ : Աորուստը մօտ է , ալ տարա-  
կոյս չի կայ , հարստութիւնն ու կարողութիւ-  
նը , տանջանքներն ու դահիճները չեն կրնար  
զինքը մահուրնէն ազատել . կուլայ , կողքայ կե-

նացր վրայ • ալ չի պիտի կարենայ արեամբ զուար-  
ճանայ :

Թէլ, իր առջի տեղը հանդարտ կը կենայ •  
զորաց պօռ չտայն, փրփրագէզ ալեաց սլայթի-  
լնն և ալէկոծ հողմոց փչումը, իւր Արիւթիի  
քարայրը տեսնելու ատենը զգացած խռովուեր  
չափ անդամ չեն ազդեր սրտին վրայ • Թէլ մահ-  
ուան կրսպատէր, եւ իշխանին կորստեամբը, իւր  
հայրենեացը ծագելիք բարու թեանցը վրայ միայն  
կը մտածէր • Ժէսլէրին երկիւղն, հեծու թիւ-  
նին, ու չարչարուիլը տեսնելով կուրախանայր  
ինքնիրեն • երբ թիավարներէն մէկը՝ այս անգութ  
մարդուն գառնայով կորսուեցանք կրսէ • ալ  
մենք անկարող ենք այս հիւսիսային հովուն առ-  
ջեւը ինկած նաւը՝ ալեաց մէջ գործածելու, որ  
մէկ քանի վայրկեանէն եղելքի ժայռերուն զար-  
նելով պիտի փշրի • Միայն մէկը կայ՝ որ լծիս  
մրրիկներուն դէմ դնելու մասին ամենէն համ-  
բաւաւորն ու յաջողակն է մեր երկոց Վահանգա-  
ցը մէջ, ինքը կրնայ ազատել զմեզ ՚ի մահուանէ •  
Մ. յն մարդը տհա՛ հոս է, ահա քու շղթաներու դ-  
տակը կը հեծէ • Ընտրէ՛ Ժէսլէր, ընտրէ՛ մի  
ու շանար՝ մահն կամ անոր ազատումը • Ժէսլէր  
կը սարսափի այս խօսքերը լսելով • Մ. յն սաստիկ



ատելութիւնը որ թէլին գէմ կը անուցանէր ,  
մինչեւ կենաց վրայ ունեցած սիրոյն հետանդամ  
կը մաքառի վատ սրտին մէջ . դեռ կը վարանի ,  
ու չուզեր պատասխանել . սակայն զօրաց եւ  
նաւաստուոյն աղաչանքն ու մրմունջը , որ կը խրնդ-  
րեն ու կը ստիպեն բանտարկելոյն ազատու-  
թիւնը ստանալու , որպէս զի , թէ ինքը և թէ  
իրենք զերծին մահու ընէ : Այնչափ մարդոց աղա-  
չանքը մերթելու անհամարձակութիւնը ու մըշ-  
տայոյզ մըրիկը վերջապէս կը հարկադրեն Սէս-  
էրը , ընտրութիւնն ընելու : Թող կոտորին շող-  
թայները , կըսէ . կը ներեմ բոլոր իւր յանցանա-  
ցը , կը շնորհեմ իրեն՝ կեանքն ու ազատութիւնը ,  
թէ որ իւր յաջողակութեամբը կարենամք նա-  
ւակայանը հասնիլ :

Չօրքերն ու թիափարները կը փութան  
Պուլիէլմոսն ազատելու . Շղթաները կիյնան ,  
ոտքի վրայ կեննէ դիւցաղնը ու առանց բառ մը  
արտասանելու գէպ 'ի դեակը կը գիսէ : Կնչպէս  
որ աղայ մը ցուպը թեքելով՝ ուզածին պէս  
կը գարձնէ զայն , այնպէս ալ Պուլիէլմոս՝ նաւը  
ըստ հաճոյիցը կը խաղ ցընէր ձեռքին տակ . նա-  
ւուն գլուխը երկու հովերուն գէմ կուտայ , ո-  
րոց ոյժը այնպիսեալ բաժնուելով՝ հաւասարա-

կըշռութեան մէջ կը բռնեն զանիկայ : Յետոյ ,  
 կայծակի նման վաղանցիկ՝ անդորր վայրկեան մը  
 ձեռք ձգելով , նաւուն գլուխը հակառակ կողմ  
 մը կը դարձնէ ու զինքը ազատելու միակ միջոցն  
 եղող դիրքին մէջ կը դնէ զայն . իր ուզած կերպ  
 պիւր՝ միայն երկու հոգւոյ թի դարնել կուտայ ,  
 և հովուն , ալեացն ու մրրկին հակառակ , կը  
 յառաջանայ դէպ ՚ի այն վերագառնալ ուզած  
 նեղուցը : Վիշերուան անթափանց մթութիւնը  
 չի թողուր՝ որ Ժէսլէր ետ դարձած ըլլային նըշ-  
 մարէ : Վուլիէլմոս կը շարունակէ ընթացքը .  
 գրեթէ բոլոր գիշերը կանցնի . սակայն արդէն  
 Իւռիի լիճը մտած էր վերստին . և կը տեսնէ  
 Աթորթ լեռան վրայ տրուած նշանին վերջին  
 փայտիլումը : Այն իսկ այն լոյսը՝ աստղի տեղ կը  
 ծառայէ իրեն . լիճը շատոնց կը ճանաչէ . վտան-  
 գաւոր ժայռերէն հեռանալով՝ մէկ կողմանէ  
 դէպ ՚ի Շուից նահանգի եղերքը կը մտենայ .  
 Աերնէրին վրայ կը մտածէ , կը հաշուէ որ Աեր-  
 նէր դեռ ճամբան ըլլալու է . և ձիւնափակ ճամ-  
 բաներուն պատճառաւ հեռուներէն դառնալու  
 ստիպուած : Այս տկար յոյսովը կը նաւարկէ ,  
 և մրրիկը զիրենք ուր ձգած ըլլալուն անձանօթ  
 ձեւանալով՝ Ժէսլէրին ու զօրաց սոսկումը կը

կրկնապատկէ .

Ա երջապէս գոյն կառնէ արեւելք , և կարծես թէ փոթորիկը՝ արշալուսոյն առաջին նըշոյլքը երեւան ելած ատենը , քիչ մը կը տկարանայ . Առսոյն ծագմանը՝ բռնաւորը , դեռ ուր ըլլայինն որոշելու ատեն չունեցած , թէլ կը նշմարէ Աթորֆի մերձակայ ժայռերը . Պուլիէլմոս , դէպ ՚ի անոնց կուղղէ նաւը , ու աւելի արագութեամբ կը յառաջացրնէ զայն . Ժէսլէր , որուն կատարութիւնը՝ քանի որ վտանգը հեռանայր այնչափ աւելնալու վրայ էր , կսկսի թախծագին աչօք դիտել Պուլիէլմոսը . Աուգէ , բայց դեռ չի համարձակիր զինքը շղթայներու զարնել տալ . Շատ չանցնիր գորականներն ու նաւաստինն կիմանան ուր ըլլայինն և իշխանին ալ կիմացնեն , որ բարկութեամբ թէլին վրայ երթարով՝ սոսկալի ձայնիւ կը հարցրնէ թէ՛ ի՞նչու իւր ուղղած նաւը վերստին Աթորֆ դարձած էր . Պուլիէլմոս առանց պատասխանելու , նաւակը՝ եզերքէն քիչ հեռու ժայռի մը վրայ կը մղէ , արագաձեռնութեամբ , աղեղնաւորին մէկուն ձեռքէն նետն ու սլաքը կը յամիշտակէ . և կայծկի պէս նաւէն՝ ժայռին վրայ կը նետէ ինքզինքը . Հո՛ն , առանց կենալու , վայրի քո-

շի նման ուրիշ ժայռի մը վրայ կուսանու , և անկէ եզերքը հասածին պէս , կրսկսի սեպացեալ ապառաժէն վեր մագլցի զիմեւ ու գազաթը կէշէ , նման Մայեան արծուին որ ամպերուն մօտ հանգչելով՝ սրատես աչքերը հովանոյ մէջ արածուող խաշանցը վրայ կը պատօցին :

Իշխանը , յայուշ հարեալ , կատաղի ու գազանային աղաղակ մը կը վերոյնէ : Արհրամայէ մէկէն որ նաւէն ելնեն ու զօրքերը ցրուրվելով՝ ամեն կողմանէ պաշարեն այն ապառաժը՝ որուն վրայ կեցեր էր դիւցազնը : Արհնազանդին , նետաձիգները կիջնան ու կը պատրաստեն աղեղներնին :

Ճէսէր , անոնց մէջ տեղէն երթալով՝ կուզէ որ բոլորին սլաքները միահամուռ Վուլիել մօտի արեանը մէջ թաթխուին : Բայց Վուլիէլմոս ալ դիտաւ որու թխն մը ունէր : Արհենայ , ցոյց կուտայ ինքզինքը որ թշնամին յինքն ձգէ : Արթողու որ այս գինեալ խումբը՝ այնչափ մը մօտենայ իրեն , որ ձեռքի նետովը կարենայ մահացու հարուած մը տալ : Արդիսէ , աչքը Ճէսէրին կուղղէ . կը լարէ նետը , ու բռնաւորին սրտին նշան առնելով՝ օդին մէջ կը թռցնէ զանիկայ : Նետն է կը սլանայ , կը սուլէ ու կը-

զարնէ յէսլէրին սրտին մէջ տեղը : Ախնայ բըռ-  
 նաւորը , սեաւ արիւն մը կը ժայթքէ բերնէն ,  
 կատաղութեամբն ու մոլեգնութեամբը կսկսի  
 պապաղել . և անիծօք կարտաշնչէ իւր անողորմ  
 հոգին : Գուլիէլմոս արդէն աներևոյթ եղած  
 էր . Գուլիէլմոս՝ եղջերուէ մ'ալ դիւրաշարժ ,  
 ինքզինքը ժայռին գլխէն վար կը նետէ կը վազէ  
 կը թռանի սառոյցներուն վրայէն . և անապատ  
 անշաւիղ տեղերէ անցնելով՝ ձեռք կը ձգէ Աւ-  
 թորՖի ճամբան :

Քիչ մը հեռուն ձիւնին վրայ կը գտնէ .  
 Ալէրնէրի բաղմաթիւ բարեկամաց նորակոխ հեռ-  
 քերը . դորոնք նոյն իսկ այն գիշերը՝ իւր ընկե-  
 րակցութեամբը ճամբայ հաներ էր : Գուլիէլ-  
 մոս կը հեռուի անոնց , կը վազէ , կը մերձենայ ,  
 ու աղմուկն , աղաղակը , և զինուց որոտնգոտա շա-  
 ռաջմուկնքը հեռուէն կը զարնեն ահանջին . կը  
 սլանայ կը հասնի հրապարակի . և կը տեսնէ  
 որ դիւցադանց երեք խումբերով լցուած էր .  
 Ալէրնէր Շուիցի մարտադրաց գլուխը՝ կը պա-  
 հանջէ որ նախ դռները ապահովցնեն , ու յե-  
 տոյ պարսպին յարձակմանը պարսպին . Փուրսդ  
 Իւռիի քաջերովը՝ ամենէն վտանգաւոր գիրքը  
 ընտրեր էր իրեն . Մելքթալ Ռենտէրվօլտի բա-

նակին առաջնորդելով ձեռքի մեծ կացինը օղին մէջ կը խաղցնէր և բարձրաձայն՝ յարձակման կը հրաւիրէր : Ժէմի ամենևին չէր հեռանար իրմէ : Երկայն նիզակով մը զինեալ , Գուլիէլմոս ըսելով՝ հայրը կը խնդրէր զօրքերէն . ու հեռուէն այն բանտը ցոյց կուտար , ուր որ զինքը դեռ բանտարկեալ կը կարծէր : Օտրն անրի , Քլէր և Նոմէ այն քաջ զօրքերուն հետ խառնուած , զանազան բանակներուն և դասերուն մէջ կը մանեին կելնէին յարձակման ժամը փութացնելու ջանալով :

Յանկարծ այս երկոյ բանակացը մէջ տեղը երևան կելնէ Գուլիէլմոս : Բնդհանուր աղաղակ մը կը հնչէ կը տարածուի լեռներուն մէջ և խոր լռութեամբ մը կը վերջանայ : Վմենքը՝ Թէլին հրամանացը կըսպասեն , ամենքն ալ աւոր միմիայն կուզեն հնազանդիլ : Բարեկամք , կը գոչէ դիւցազնը , ալ Ժէսլէր չի կայ . սա՛ աղեղն ու այս ձեռքս՝ պատժեցին զինքը իւր ուժիրներուն փոխարէն : Ժէսլէրին մարմինը , լըճին եզերքը փռուած ու անարգ արբանեակներէն շրջապատուած է . որոնք վախերնուն արդէն իսկ ցիրուցան ըլլալու վրայ են : Բրսէն երկրն չելու բան մը չունինք : Մեր հայրենեաց վռէժը

առինք , սակայն դեռ ազատ չէ : Աւ երբէք ազատելիք չունի , քանի որ այս սոսկալի պարիսպը քար քարի վրայ մնայ : Յարձակինք նա ահարկու պարսպին վրայ որ գազանավրտ Աւսարիացւոց միակ ապաւենն է : Թող երեք խումբերն իս մէկէն վեր դիմեն , թող քաջագոյնքն առաջ անցնին :

Արտէ , ու ձախ ձեռքը Իւսի գրոշակը՝ աջըն ալ կային մը կառնու և դէպ ՚ի լեռ կը դիմէ : Փարսպ և իր խումբը՝ մօտէն կը հեռուին անոր : Շուիցի քաջերն ու Ալեքնէր կը սլանան : Մելքեթալ Անտէրփօրացւոց հետ արդէն կէս ճամբան առած էր , և Դէմի հօրը քովէն կը յառաջանայ : Սորնէմ կը սպասէ իրենց , Սորնէմ կը պատրաստուի : Յանկարծ , սլաքներու և տէգերու ամպ մը կը տեղայ մարտիոյներուն վըրայէն : Քաջասիրտ յարձակողք , առ ոչինչ համարելով՝ այն նեւերը , կը շարունակեն իրենց ընթացքը , դար վեր կեղնեն , առանց դիմադրութիւն ընելու : Ար հասնին վերջապէս պարսպին որմնոյր տակ : Յայնժամ ահռելին Սարնէմ , իրեններուն նշան մը տալով՝ նախ շատ մը որի քակուրդք , ժայռեր ու քարի կոորուանք վար նետել կուտայ , և յետոյ եռացեալ ձէթ ու կըպ-

բաճիւթ : Արից՝ Սահանգաց քաջերը՝ չորս կողմը կը բռնուին կիցնան . իւզը զգեամներնուն անցնելով՝ կը մաշեցնէ գերենք : Սասոիկ ցաւելով կաւանդեն հողինին . քարերը կը ծտելով կաղաղակեն . բայց այն աղաղակներն անգամ ազատութեան համար են : Հողեվարքները , առանց քաշած տանձանքնուն նայելու , կը յորդորեն կը գրգռեն ընկերներնին , կը քաջալերեն գերենք որ մարմիննուն վրայ կօխեն , և իրենցմով աստիճաններ շինեն , մարտկոյներուն վրայ ելնելու համար . Աւարիտայիք նախատանօք կայսրանեն անոնց թշուառութիւնը . Սարնէմ , երկու որմի մէջ տեղը կեցած , կը խնդայ յարձակողներուն ընդունայն ճգանցը վրայ . Սարնէմ սիրտ կուտայ զօրացը . և իւր ներկայութիւնն ու աներկիւզ վորքը , այս զօրաւոր դիմադրութիւնն աւելի երկարատև կրնեն :

Գունիւլէմաս՝ անվեհեր դիմօք կը յառաջանայր միշտ , մեռելոց ու հողեվարքներուն մէջ տեղէն . բայց յանկարծ կորուսած բազմաթիւ զօրքերէն զարհուրելով՝ կանգ կառնէ , կը կոչէ Մելքեթալը . ու միահամուռ յարձակումն մը ընելու խորհրդոյն բողբոլին հեռեւելուն համար կը կշտամբէ ինքզինքը , սիրտ կուտայ անոր ,



կը հրամայէ որ պատերազմէն քաշուելով՝ առ-  
 նէ իւր քաջերը, ու երթայ արևելեան կողմէն  
 պարսպին վրայ յարձակի. քանի որ ինքը՝ Ալեք-  
 նէրին հեռ մէկ եղած, կատաղութիւննին պի-  
 տի կրկնապատկէին, այս շարժումը թշնամւոյն  
 աչացն աներևոյթ ընելու գիտմամբ: Ղուլիէլ-  
 մոս ու Ալեքնէրնոր նշան մ'ալ կուտան, աւելի  
 բարձրաձայն աղաղակներ կը վերցնեն, ու Սար-  
 նէմ և իւր արբանեակները այս նոր յարձակմամ-  
 բը զբաղելով՝ Ղուլիէլմոսին դէմ դնելու հա-  
 մար բոլոր իրենց զօրութիւնը նոյն կողմը կը դար-  
 ձրնեն: Սոյն միջոցին, Մելքեթալ իրեննեւրովը կը  
 դիմէ կը հասնի արևելեան դուռը՝ որ տկար  
 պահանութեամբ մը միայն թողուած էր: Մելքեթալ  
 կացինովը կը զարնէ, եւ կրակ բերել  
 կուտայ. դուռն է կայրի ու Մելքեթալ ներս  
 կը սլանայ. Մելքեթալ Աւստերվօլտի բարեկամ-  
 ներովը կը յառաջանայ բերդին մէջ: Ղեմն ել-  
 նողը՝ տեղի կուտայ, փախչել կուզէ, և կըս-  
 պաննուի: Սարնէմ, թէլին յարձակմունքը վա-  
 նելու զբաղած տեղէն, կը լսէ փախչողներուն  
 աղաղակը, և կորոշէ յազթողները որոնք ըլլալ-  
 նին: Աուզէ վրանին գիմել, կը գառնայ, ու  
 Մելքեթալ երևան կելնէ. կայծակի արագու-

Թեամբ ձեռքի կացինովը հարուած մը կուտայ  
 անոր , և երկուքի կը բաժնէ իւր դժնդակ ճա-  
 կատը , կը յառաջանայ որմին ծայրը , ու յաղթու-  
 թեան աղաղակներով կը տարածէ ձեռքերը :  
 Գուլիէլմոս ալ կը հասնի մէկէն . և Իւռիի դը-  
 րօշակը կը ծածանի ու կը փայլի այն զարհուրե-  
 լի պարսպին վրայ : Գուլիէլմոս , Մելքիթայ ու  
 Ալէրնէր , կոյտ մը դիտակներու վրայ կեցած շը-  
 նորհակալութիւն կը մատուցանեն Մատուծոյ .  
 և կը պատասխանեն իրենց ազատած ժողովուրդ-  
 եանը ցնծութեան ձայներուն :

Շուտ մը կը վերցուին բերդին մէջի բազ-  
 մաթիւ մեռելոց մարմինները , երկոյ Մահանդաց  
 բանակները , իրենց առաջնորդները շրջապատե-  
 լով կրատիպեն , կը տանին ՄիթորՖի բնակչաց  
 մէջ տեղը , որոնք՝ հրապարակին մէջ գումարուած  
 կը վազեն կուգան ամեն կողմանէ իրենց ազա-  
 տարարները տեսնելու , եւ ազատութեան պաշտ-  
 պանութիւնը , անոնց ճարտարամտութեանն ,  
 քաջութեանը ու իմաստութեանը յանձնելու  
 նպատակաւ : Սակայն Գուլիէլմոս լռութիւն  
 պահանջելով յետագայ ճառը կուղղէ իրենց .

Քաղաքացիք , ազատ էք դուք . բայց թե-  
 թեւս այս թանկագին ազատութեան պահպա-

նութիւնը՝ յաղթելէն աւելի դժուար է։ Առաջ  
նոյն համար՝ քաջութիւնը բաւական է, իսկ  
երկրորդը՝ խիստ, անաչառ եւ անսխալ խառն  
քննութեանց կարօտ։ Օգո՛յն կայէք յաղթու-  
թեան արբեցութենէն։ զգուշացէք մանաւանդ  
անարդ պաշտօն մը մատուցանելէ ձեր առաջ-  
նորդացը, Արդէն սկսեր էք մեզ ձեզի իշխան  
ընտրելու վրայ խօսիլ։ մինչդեռ ես իբրեւ միակ  
վարձատրութիւն աշխատանացս, բոլոր սրտանց  
կը վաճաքիմ պարզ զինուոր ըլլալ ու այն հա-  
ւասարութեան մէջ մանկել, որ քաղցր ու անարատ  
հրատոյք մըն է հասարակագետութիւն սիրող  
սրտերու։ Հասարակագետութեան մը մէջ,  
բարեկամք, ամենքնիս ալ պիտանի եմք։ Այն  
այն մարդուն որ ինքզինքը անհրաժեշտ հարկա-  
ւոր կը կարծէ։ վայ այն ժողովուրդներ՝ որ իւր  
այս խորհրդոցը համար չի պատժեր զինքը։

Ժողովուրդէք, որ խնաստուն մտածմունքներ  
լով կարենաք կշռել ձեր օգուանն ու նոր բունե-  
լիք գրութիւննիդ։ թող ամեն մարդ ազատ ըլ-  
լայ, հայրենեացը օգտակար կարծած նիւթե-  
րուն վրայ խորհիլ, խօսիլ և խորհրդակցիլ ըստ  
օրինաց։ Թո՛ղ այս արտօնութիւնը շնորհուի այն  
ամեն քաղաքացւոց որ իրենց կենաց քաներրորդ


տարին թեւակոխած են : Կէկը հայրենեաց  
 սէրը ճանչցածին պէս, իրաւունք ունի իւր կա-  
 ռողութենէն ու մտքին հանձարէն հարկ մը  
 տալ անոր : Օտերակոյտ մը կազմեցէք, ու թող  
 այն մեր նախահայրներէն պատուեալ հին անու-  
 նը՝ կրինապատիկ պատուուի մեզմէ : Խորհուրդ  
 ընդունի և խորհրդատու ըլլայ : Օրէնքներ  
 հաստատեցէք, առանց օրինաց ի՞նչ կրնայ  
 ըլլալ վերջերնիդ : Ազատութիւնը, իմաստուն  
 օրինաց գերի ըլլան է : չըլլայ թէ վարքերնիդ  
 փոխէք, մանաւանդ ջանացէք աւելի անաչառ  
 ըլլալու : առանց առաքինութեան ազատու-  
 թիւն չըլլար : հասարակապետութիւնը ինք-  
 զինքը այս անուամբ հրեշտակաց և մարդկան  
 մէջ տեղը դասած է : թող ուրեմն զինքը շրջա-  
 պատող մարդոցմէ գերազանց ու վսեմ ըլլայ :

Իսկ ինձի դալով, քաղաքացիք, եղբայր ա-  
 նունէն ու ձեր բանակներուն մէջ պատերազ-  
 մելու պատուէն ՚ի գառ բան մը՝ ոչ կուզեմ, ոչ  
 կը խնդրեմ և ոչ կրնդունիմ : Պատրաստուեցէք  
 նորանոր պատերազմներու : Սպասեցէ՛ք, վասն  
 զի Պայսրը պիտի աշխատի այս կորուսած իշխա-  
 նութիւնը նորէն ձեռք ձգելու : Պատրաստ կա-  
 ցէք իւր ճգանցը դէմ դներու : պատրաստուե-  
 ցէք ՚ի պատերազմ, վատահ եղիք միայն Ա՛ստ-

ու ած . և ՚ի բազուկս ձեր • այսու ամենայնիւ  
 ազատութեան հրաւիրեցէք Օրհնակերտոյ միւս  
 նահանգներն ալ • Աթէ չեմ խաբուիր անոնց  
 սիրտերը՝ պիտի պատասխանեն ձեր ձայնին • այն  
 ատենը՝ աշխատանաց , առաքինութեան ու քա-  
 ջութեան միջոցով՝ հասարակապետութիւն մը  
 պիտի կազմէք որ բոլոր Աւրոստոյ զարմանք ու  
 սոսկումն պատճառէ • Այն ատենը՝ թաղաւոր-  
 ները պիտի անձկան ձեր դաշնակիցներն ըլլալու  
 անուանը • և անյաղթ պիտի կարծեն ինքզինքնին  
 թէ որ Օրհնակերտացիք իրենց պաշտպանն ըլլան •  
 Այն ատենը փառաց զինուց և իմաստուէ արդա-  
 սիքը վայելելով՝ դարձեալ ամենէն նախամեծար  
 համարեցէք , ազատ ու երջանիկ ըլլալու փառքը •

Արտէ ու բոլոր ժողովուրդը կը ծախահարէ •  
 ժողովուրդը նոյն հետայն դատաւորաց ընտրու-  
 թեանը ձեռք կը զարնէ • Թէլ , Ալերներ ու  
 Սելքթալ պարզ քողաքացւոյ փոխուելով՝ մի-  
 այն մէյմէկ կադամաղեաց պսակ կրնդունին  
 իրենց մատուցած ծառայութեանը փոխարէն •  
 Արմանեն կը խառնուին այն ժողովուրդեանը մէջ՝  
 որ երկու հարիւր տարի Վերմանական Աայսե-  
 բութեան ամեն մէկ ձգանցը հնազանդելէն վերջը •  
 յաղթանակաց վրայ կանդնեց իւր ազատութիւն •









2207  
2208  
2209

6-80

2013

